# ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ ԺԱ. ՏԱՐԻ ԻԴ. ՆՈՅԵՄԲԵՐ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | | |
|---|---|---|
| ԿՐՕՆԱԿԱՆ. | ԳՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ յարաբերութիւնը դէպի քաղաքականութիւնը. . . | 563 |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. | ՊԵՏՈՒԹԻՒՆ և քաղաքական հասարակութիւն . . . . . | 581 |
| ԱԶԳԱՅԻՆ. | ՏԵՂԵԿԱԳԻՐ Գէորգեան Հոգևոր Ճեմարանի . . . . . | 606 |
| ՊԱՏՏՕՆԱԿԱՆ. | ԲԱՂՈՒԱԾՔ յօրագրութեանց Սմիւռնոյ | 627 |
| | ՀԵՌԱԳԻՐՆԵՐ . . . . . | 635 |


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ։

---

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.
ՌՅԽ—1891

# ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ.

## ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Այրիվանք կամ Գեղարդավանք. . . . . | — | 10 |
| Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ . . | — | 70 |
| Արարատ Ամսագիր տարեկան ամբողջ կազմեալ. . . | 2 | — |
| Արաքսի աւազանը՝ Ուրմեա լիճ և առաջաւոր Ասիա . . | | 50 |
| * Աւետարան համաքարբաւ վկայութեամբ . . . | — | 80 |
| * Բէնիամին Գրանկլինի կեանքը . . . . | — | 20 |
| Գիրք հանդիսակատարութեանց կայսերական տօնից . . | — | 50 |
| * Գոթողիա ողբերգութիւն . . . . . | 1 | — |
| Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի . . . | 3 | — |
| Դաշնագիր . . . . . | — | 10 |
| Դասագիրք լաղդատական Աշխարհագրութեան . . | | 50 |
| Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց . . | — | 50 |
| Նոյն.—Միջին դարուց . . . . . | — | 50 |
| Դասագիրք Քրիստոնէական հաւատոյ. Արէլ Եպիսկոպոսի . | — | 10 |
| Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան | — | 10 |
| Դպրոց տարեկան 1874—76 . . . . . | 2 | — |
| Եօթն խօսք առ տղայս . . . . . | — | 20 |
| Թուաբանութիւն զարգացելոց Ա. Գալֆայեան - . | 1 | — |
| * Ժամագիրք տեառն . . . . . | 8 | — |
| * Ժամագիրք ձեռաց . . . . . - | 2 | — |
| Լսարան Աւագ ուրբաթ . . . . . | — | 10 |
| Լսարան Կ. Պոլսոյ . . . . . | — | 10 |
| Արև . . . . . | — | 10 |
| Զատիկ տեառն . . . . . | — | 10 |
| Երկինք և երկնային . . . . . | — | 10 |
| Հոգիպսիմէ . . . . . | — | 10 |
| Հնութիւնք Եգիպտոսի . . . . . | — | 10 |
| Մեծն Ներսէս . . . . . | — | 10 |
| Ս. Խաչ . . . . . | — | 10 |
| Տօն Ծննդեան . . . . . | — | 10 |
| Խանգարմունք Հայկաբանութեան . . . . . | — | 20 |
| Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ . . . | — | 20 |
| Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի . . . | — | 5 |
| Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի . . . | — | 10 |
| Կանոն ծխական Դպրոցաց . . . . . | — | 20 |

ԹԻՒ ԺԱ. — ՇԲԱՏ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԴ. ՆՈՅԵՄԲԵՐ

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵՆ ՅԵՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

« Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա. Վարդապետ՝
« ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառան-
« գութիւնն։ Եւ նա ասէ ցնա. Ա՛յր դու՝ ո՞ կա-
« ցոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ
« ձեր։ Եւ ասէ ցնոսա. Տեսէք եւ զգոյշ լերուք
« յամենայն ագահութենէ. զի ոչ եթէ ի մթերից
« ընչից ուրուք ի ցեն կեանք նորա»։

(Ղուկ. ԺԲ. 14—15)։

Երկար ժամանակ զարմանում էի, եղբայրք, Յիսուս Քրիստոսի դրութեամբ, այս լոպէիս արտասանած բնաբանի մէջ։ Բացատրումը ինձ օտարոտի էր երևում։ Ահա նա կանգնած է երկու եղբայր-

ների առաջ, որոնցից մէկը պահանջում է ընդհանուր ժառանգութիւնից իւր մասը։ Մի՞թէ այստեղ յարմար միջոց չէր ներկայանում արդարութեան հարցը վճռելու։ Եւ եթէ այդպէս է, ո՞վ կարող էր առաւել լաւ վճռել եթէ ոչ Աւրբը և Արդարը։ Բայց ի վերայ այսր ամենայնի Յիսուս Քրիստոսը հարկաւոր է համարում հրամայական ձայնով և նշաններով հրաժարուել այն վճռից, որ սպասում են Նրանից։ «Ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր»։

Երկու խնդիր ունեմ այսօր պարզաբանելու. Յիսուս Քրիստոսի, ըստ երևոյթին, ստրօրինակ բացասման պատճառը. իսկ յետոյ ուսումնասիրել երկու եղբայրներին տուած պատասխանի միտքը. «Տեսէք և զգայջ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա»։

Ինչո՞ւ Յիսուս Քրիստոսը հրաժարուում է մտնել այս վէճի մէջ։ Մի քանիսը բացատրում են հետևեալ կերպով։ Ասում են մեզ, պարզած էր միայն հոգիների փրկութեան և յաւիտենական երջանկութեան գործով մտրգիչին ուրիշ շահեր նրան բոլորովին օտար էին։ Հոգեպաշտների այս բացատրութիւնը, որոնք իրանց առաջաւորին համարում, ինչպէս երևում է, համարձակութեամբ ընդունում են և անհաւատները, որոնք նրան միջոց են ընտրում յանուն նոյն իսկ մարդասիրութեան, քրիստոնէութիւնը հերքելու համար։ Բայց այս բացատրութիւնը, որ ճշմարտանման է երևում, բոլորովին սխալ է. և մենք չենք կարող թոյլ տալ Աւետարանի հակառակորդներին դատապարտել նրան այդպէս թեթևամտութեամբ։ Ճշմարիտ է, Յիսուս Քրիստոսը թողութեան և հոգւոյ փրկութեան գործը առաջնակարգ տեղն է գնում. բայց չը պէտք է մոռանալ նոյնպէս, որ նա համակրութեամբ գրկում է ամբողջ մարդը։ Ապացուցանելու համար եռ կարող էի նրա խնամատարից մոքերից շատ շատերը մէջ բերել. բայց այդ ազգու վկայութիւններից տուտել զօրաւորը կայ. այդ այն է թէ նա ինչպէս է վերաբերում դէպի անօրէնութիւնները և տանջանքներն,—որոնց հանդիպում է նա։ Եթէ Աւետարանի մէջ միմիայն խիստ և բացառիկ հոգեկրօնութիւն են ցանկանում նկատել հարկաւոր կը լինէր այն ժամանակ եղծել—ջնջել նրանից այն մեծահոգի գժգոհութիւնը, որ ալեկոծում է Փրկչի

սիրալ, երբ անարդարութիւն է տեսնում այն խորին վիշտը, որ պատճառում են Նրան բոլոր թոյլերն ու անպաշտպանները. այն մշտատև հոգատարութիւնը մարդկային մարմնական պիտոյքների մասին. բազմաթիւ հրաշքները, որոնք թեթևացնում են հիւանդութիւնից և քաղցից բոլոր նեղտակիրներին. այն անհամեմատ քնքշութիւնը որ զօրեղ կերպով հնչվում է Քրիստոսի ամենափոքր խօսքերի մէջ անգամ, որոնք ամբողջ դարերից յետոյ էլ թափանցում են վշտահարների սրտի մէջ և այնպիսի միխիթարութեամբ լցնում, որ ոչ մի բանի հետ համեմատել անհնարին է: Բայց եղծել այս, նշանակում է եղծել նոյն իսկ Աւետարանը:

Վերադառնանք մեր խնդրին: Ինչո՞ւ Յիսուս Քրիստոսը հրաժարվում է մնալ վէճի մէջ, որը Նրան խնդրում են լուծել:

Երկու են այն միջոցները, որոնցով կարելի է մարդկանց վերայ ներգործել, նրանց վերակրթել. արտաքին և ներքին: Առաջին միջոցն է. հրատարակել որոշ կանոններ, կարգաւորել օրէնքներ, բարեփոխել կառավարութիւններ, յայտնի միջոցներով ուղղութիւն տալ բարոյական և քաղաքական բոլոր հարցերին: Երկրորդը, նախ և առաջ ենթադրում է սիրտը և կամքը փոփոխութեան ենթարկել: Այս երկու եղանակներից Յիսուս Քրիստոսը երկրորդն ընտրեց: Նա անդրդուելի հաւատարիմ մնաց Նրան և սա միայնակ բաւական է Նրա առաքելութեան աստուածայնութիւնը և մարդկային փրկութեան գործի յաւիտենական զօրութիւնը ապացուցանելու: Ենթադրենք մի բոլորովին որ Նա առաջին միջոցն ընտրէր. ի՞նչ հետևանք կունենար: Երկու եղբայրներ խնդրում են իրանց մէջ բաժանել ժառանգութիւնը: Այս, լաւ երևոյթին, հատարակ հարցի հետ կապուած էին ուրիշ շատ հարցեր: Արդեօք երկու եղբայրն էլ հաւասար իրաւունքներ ունէ՞ին այդ ժառանգութեան վերայ: Հարկաւոր չէր արդեօք տեղեկանալ հօր կամքին: Արդեօք զաւակներից մէկը առաջուց չէ՞ր կորցրել բոլոր իրաւունքները իւր ապերախտութեամբ և վատ վարքով: Ուրիշ աղգականներ կամ ծառաներ չէ՞ին կարող իրանց մասի վերաբերութեամբ իրաւունքներ յարուցանել: Վերջապէս միթէ՞ կարելի բան էր տեղական օրէնքները հաշուի մէջ չառնել: Ահա՛ որքան—դժուար և փափուկ խնդիրներ կան: Թոյլ տանք

որ Յիսուս Քրիստոսը իւր աստուածային անմեղանչականութեամբ վճռում է այս հարցերը կատարեալ կերպով։

Ի՞նչ հեռևանք կունենար։ Ամենից առաջ նկատեցէք, որ այս դատավճիռը ոչ մի բանում չէր փոխել երկու եղբայրների սրտերը։ Եթէ նրանք անարդար էին և ատում էին միմեանց, այդպէս կը մնային և յետոյ, ինչպէս էին և մինչև վճիռը։ Ենթադրենք, որ նրանք ընդունում են այդ վճիռը, դրանով քաղաքական իրաւանց հարցը միայն կը վճռուէր և աւելի ոչինչ։ Բայց եթէ եղբայրները, Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնից շարժուած, սիրով և արդարութեան օրէնքով վերջացնէին այս վէճը, որ նրանց բաժանում էր միմեանցից, այստեղ ի հարկէ իսկական յաղթութիւն կը լինէր և Յիսուս Քրիստոսը, անկարծիք, հէնց այս յաղթութեան դրօշն էր ենթադրում բարձրացնել։

Բայց այս բոլորը չէ։ Յիսուս Քրիստոսը փոխանակ հոգիների կը-թող, փրկող լինելու, երկրային գործերի դատաւոր կը հանդիսանար և մինչև վերջը հարկաւոր կը լինէր այդպէս շարունակել։ Նա իւր արդար վճիռը տուեց իրան առաջարկած մի գործի մասին, հարկաւոր կը լինէր վճռել և այլ գործեր, որ անկարծիք կարող էին նրան ներկայանալ։ Արդարութիւն էր միթէ որ հռոմայեցիք նուաճել էին հրէաներին։ Արդարութիւն էր, որ փարիսեցիք իշխող տարր էին կազմում Իսրայէլի մէջ։ Արդարութիւն էր, որ տորուկներ կային։ Այս բոլոր հարցերի մասին Յիսուս Քրիստոսը առաջուց պէտք է պատրաստէր ծայրագոյն դատաւորի վճիռներ։ Նա պէտք է մերկացնէր բոլոր հասարակական նախապաշարմունքները, բոլոր անօրէնութիւնները։ Նա պէտք է նրանց դատապարտէր և հիմնայատակ անէր։ Բայց մտածեցէք, ի՞նչ կառաջանար դրանից։ Սանձարձակ հասարակական պատերազմ բոլոր ստահակ իշխանութեանց խորտակումն, ընդհանուր յեղափոխութիւն։ Որովհետև յայտնի է, որ բուռն յարձակման համեմատ մեծ չափեր է ստանում և՝ ջերմ պաշտպանութիւնը, որից և կառաջանային զարհուրելի խռովութիւն, կոտորած և արեան ամբողջ հեղեղներ։ Ահա այն դրութեան տրամաբանական հետևանքը՝ որ փրկիչը սահմանուած կը լինէր ընդունել. դուրս գալով հոգևոր առաքելութեան սահմանից, կը դատ-

նար դատաւոր և ընկերավարական յեղափոխիչ։ Մի կարծէք, որ այս գնով նա վերածնել կարողանար ամբողջ աշխարհը։

Ինչպէս երկու եղբայրները լսելով Փրկչի արդարադատ վճիռը, կը մնային նոյնը ինչ եր առաջ էին, այդպէս և ամբողջ աշխարհը բոլոր անօրէնութիւնների մերկացումը տեսնելով և փորձելով խեղդել նրանց ստեան հեղեղների մէջ, այս զարհուրելի պատերազմից դուրս կը գար աւելի ատելութեամբ և չարութեամբ լցուած, աւելի ապականուած, քան առաջ։ Բաւական չէ յուղել հասարակութիւնը նրան վերածնելու համար, ինչպէս և բաւական չէ դաշտը վարել նրան պտղաբեր դարձնելու համար։ Հասարակութեան համար մի այլ բան է հարկաւոր, ինչպէս և հողի համար, հարկաւոր են նոր սերմեր, կեանքի նոր սկզբունքներ։ Յիսուս Քրիստոսը սերմանողն էր։ Շատ անգամ էր այս ձևով ընթանում իւր վարդապետութեան ժամանակ և այս՝ հրաշալի կերպով արտայայտում է նրա գործի նորութիւնը և ինքնուրոյնութիւնը։ Նա՝ ոչ ոքի չէ բռնադատում նիւթական այժ չէ գործ դնում ճշմարտութիւնը ընդունել տալու համար. նա՝ նրան ներշնչում է սրտի մէջ, որտեղ նա ընձիւղներ պէտք է արձակի։ Դանդաղ աճումը, զարգացումը, աշխատանքի և հիւանդութեանց հետ միացած, կամաց կամաց կը վերանորոգի ամբողջ աշխարհը։ Աւետարանը, փոխանակ հասարակութեան տհմանազրութիւն կամ նոր օրէնքներ տալու, ներշնչեց այդ հասարակութեան խորութեան—մարդկային հոգւոյ մէջ արդարութեան, սիրոյ զգայմունք, որը մշտապէս պահպանում է նրա թարմութիւնը, վերդաւում է նրա եռանդութիւնը, արմատախիլ է անում անօրէնութիւնը և իւր հոգևոր ուժով կերպարանափոխում է ապագան, այնպէս՝ ինչպէս կերպարանափոխել է անցեալը։ Չարմանում են, որ Յիսուսը և նրա աշակերտները չը բողոքեցին ոչ հին տարկութեան դէմ իւր քաջմնելի անբարոյականութեամբ, ոչ օրէնքների դէմ որոնք ստիպուում էին կանանց և երեխանց, ոչ հասարակական անհաւասարութեան դէմ որ ծանրանում էր աղքատների վերայ, ոչ բռնակալ կառավարութեանց դէմ, որոնք ճնշում էին աշխարհը։ Բայց բողոքել, ապատամբութիւն քարոզել՝ դիւրին կը լինէր. բայց դիւրին չէր, նոր, հրաշալի և ստուածային էր բռնութեան դէմ բռնու-

թիւն գործ դնելը մերժել, չարութեան դէմ չարութիւն. ցանկալ չարութեանը յաղթել բարութեամբ. չը յուսալ ուրիշ յաղթութեան վերայ, բայց միայն սէր և արդարութիւն ներշնչելով մարդկանց սրտերի մէջ և նրանց միջոցաւ օրէնքների և պետութիւնների մէջ. վերջապէս այս հրաշալի հնձի ապագան Աստուծոյն յանձնելով, մեռնել՝ իւր արիւնով ուսոգելով այն ակօսները, որի մէջ պէտք է ծիլեր արձակէին սիրոյ և արդարութեան սերմերը:

Կարծում եմ բաւականաչափ պարզեցի թէ ինչպէս Յիսուսը վրձռողապէս հրաժարվում է ժառանգութեան մասին վէճի մէջ մտնել և բացատրեցի թէ ինչն էր ստիպում նրան այդպէս գործել: Այժմ ինձ ցանկալի է դուրս բերել սրանից ուղղակի հետևանքը, որի բարեպատեհ ժամանակը ինձ ակներև երևում է:

Ո՞ղջիսի է քրիստոնէութեան յարաբերութիւնը դէպի քաղաքականութիւնը: Եթէ Յիսուսը հրաժարուեց իրաւանց և ժառանգութեան հարցերի մէջ մտնել, կարո՞ղ ենք և իրաւունք ունի՞նք ստիպել նրան քաղաքական աշխարհում գործելու: Ահա այն հարցը, որ ցանկալի է ինձ հարևանցի բացատրել, որի կարևորութիւնը ոչ ոք ձեղանից հերքել չէ կարող: Պատմութիւնից պարզ յայտնի է, որ ոչինչ այնպէս խորին կերպով չէ ազդում քաղաքականութեան վերայ՝ ինչպէս կրօնը: Կրօնը կազմակերպում է ժողովուրդներ և որոշում նրանց վիճակը. այս նկատելի է ամեն ժամանակներում: Ինչո՞ւ հնագոյնք ենթարկուեցան դասակարգերի ծանր ճնշման, որոնք մշտապէս զրկեցին նրանց ուժից—գործունէութիւնից: Մի՞թէ նրանք իրանց բնական յատկութեամբ անընդունակ էին հասկանալու հաւասարութիւնը: Ոչ. գիտութիւնն ապացուցանում է, որ նրանք մեր ցեղին են պատկանում: Նրանք մեզ հետ ընդհանուր նախահայրեր ունին. մեր լեզուն ծագում է նրանց լեզուից: Բայց նրանց կրօնը ստիպեցնում է նրանց, որ Բրահման բոլոր աստուածների ստեղծագործութեան ժամանակ մարդկանց բաժանեց չորս դասակարգերի. քուրմեր, զինուորականներ, վաճառականներ և ստրուկներ. և որ այս դասակարգերը չը պէտք է միմեանց խառնուին, որ մի անխորտակելի պատուար բաժանում է նրանց մշտապէս. և այս վարդապետութիւնը ապանեց

նրանցում ամեն յառաջադիմութիւն և որբագործեց ճնշումն ու հարստահարութիւնը։ Ինչո՞ւ արաբները միշտ աւելի և աւելի իջնում են իրանց անկման մէջ։ Ի՞նչ է նրանց պակասում։ Խելք թէ եռանդ։ Նրանք ունեցան ամենաիսյլուն գրականութիւն և ընդունակ են հերոսական ինքնուրացութեան։ Բայց նրանց կրօնը քարոզում է ճակատագրութիւն, որ նրանց համար արիւն է դարձել։ Ղուրանի մէջ ասուած է, որ Մահմեդը առաջին անգամ գութանը տեսնելով, անիծեց նրան, որովհետև նրա աչքում այդ սարուկների գործիք էր։ Եւ մարգարէի այս անէծքը ծանրանում է նրա ցեղի վերայ և բոլոր ջանքերը դէպի յառաջադիմութիւն, անցյայ, ապարդիւն են անցնում։ Այո՛, կրօնը կազմակերպում է ժողովուրդներ. և թէև վեր ի վերոյ պիտոյները հաւասարացնում են, որ ներկայումն կրօնը ընկնում է, բայց ինձ—դիւրին կը լինէր ապացուցանել, որ բոլոր ծանրակշիռ հարցերի մէջ, որոնք ազգերում աղեկոծում են ներկայ հասարակութիւնները. Ֆրանսիայում Իրլանդիայում Իտալիայում Իսպանիայում Արևելքում ամեն տեղ խառն է կրօնական հարցը։ Պարապել քաղաքական հարցերով, ոչինչ բանի տեղ չը դնելով կրօնը, դա անմտութիւն է։ Ի՞նչ կասէիք դուք այն ճարտարապետի մասին, որ կառուցանելով իւր շինուածքը, չը հոգար կլիմայի, եղանակի փոփոխութեան կամ մթնոլորտային պայմանների մասին։ Կրօնը հոգւոյ մթնոլորտն է և անմիտ են նրանք, որոնք մտածում են հիմնել մի որ և է հիմնաւոր և երկարատև բան, առանց նրան հաշուի առնելու։

Եւ այսպէս ես հաւատում եմ քրիստոնէութեան խորին ներգործութեանը ժողովուրդների քաղաքական վիճակի վերայ։ Ես համոզուած եմ, որ քրիստոնէութիւնը որքան աւելի հաւատարիմ է Յիսուսի վարդապետութեան, այնքան աւելի ազատ, բարձր և բաղդաւոր են այն ժողովուրդները, որոնք դաւանում են նրան. և ընդհակառակն որքան քրիստոնէութիւնը խեղաթիւրած է, այնքան աւելի այդ ժողովուրդները անիշխանութեան են դատապարտուած։ Արտնում ես հաւատացած եմ։ բայց ի՞նչ եմ ասում։ Ես այդ տեսնում եմ և նրան հերքել կամեցողը, յօժարակամ կոյր պէտք է լինի։ Բայց ի՞նչ պայմանների տակ քրիստոնէութիւնը

կարող է վրկել ժողովուրդներին։ Ես պատասխանում եմ։ Միմիայն այնպէս ներգործելով, ինչպէս Քրիստոսն էր ներգործում։ աղատել հոգիները բոլորովին հոգևոր միջոցներով, քարոզել արդարութիւն, սրբութիւն և սէր դէպի մերձաւորը։ Այս պայմաններում միայն հրաշալի կերպով կը կատարուին Ս. Գրքի խօսքերը. «Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ»։

Բայց եթէ այս ասպարէզը չափազանց համեստ գտնելով, եկեղեցին կը ցանկայ իշնել քաղաքական ասպարեզ, եթէ կուսակցութիւնների հրաւէրը ընդունելով, որոնք խնդրում են նրան, ինչպէս Աւետարանում յիշուած եղբայրները, կը սկսի նրանց վէճերը լուծել, եթէ մոռանալով Ուսուցչի օրինակը, նա կը մասնակցի այն գործերում, որոնց մէջ Յիսուսը հրաժարուեց մասնակցելու, այն ժամանակ նա կը սորայնէ իւր գործը և նրան կը խորտակէ։ Միջին դարերում կամ Բոսուէտի ժամանակներում (Աստուած տայ, որ այդ՝ այն ժամանակները միայն լինէր), նա՝ թագաւորների և իշխանաւորների կողմը բռնեց. և մենք տեսանք մարդասպանութեան, ներբողների ամօթալի տեսարան, անպատուելով այն, որին՝ կարծես ծաղրելով, անուանում էին ճշմարտութեան աթոռ։ Մենք տեսանք քարոզիչներ, պալատական խոստովանահայրեր երկրդիմի բարոյականութեամբ և ներողամտութեամբ։ Մենք տեսանք այն բոլոր գարշելի հաճոյականութիւնները, որոնք եկեղեցին այնքան դժուարութեամբ է ատում։ Բոլորովին կորցնելով ժողովրդի հաւատն և արժանանալով նրա խորին արհամարհանքին։ Այժմ աւելի քան երբ և իցէ, Աւետարանը չը պէտք է դնել մի որ է կուսակցութեան դրօշակի տակ, որքան և նա աղատամիտ լինէր։ Աւետարանը տիրապետում է բոլոր կուսակցութիւնների վերայ. նա ընդունում է ամենին և բոլորին հաւասարապէս պէտք է քարոզի արդարութիւն և մարդասիրութիւն։ Ահա նրա պաշտօնը։ Ինչպէս քաղաքացիներ թող ունենանք մեր մասնաւոր անհատական համոզմունքները այն հարցերում, որոնք ամենայն օր բարձրանում են. բայց եռանդով պէտք է աշխատենք Աւետարանը մեզ կուսակից չը համարել։ Մենք գիտենք ինչ տեսակ են մինչև անգամ

ամենալաւ կուսակցութիւնները։ Նրանց միակ նպատակը իրանց յաջողութիւնն է. և երբ գործը այդ նպատակին հասնելու մասին է, մի սպասէք նրանցից ոչինչ. ոչ անաչառութիւն, ոչ արդարութիւն։ Կուսակցութիւնները խնայում են միմիայն նրանց, որոնք իրանց են ծառայում։ յարձակվում են նրանց վերայ, որոնք նրանց խանգարում են։ Նրանք անդադրում աշխատում են հաճոյանալ այն մեծ հանճարներին, որոնք նրանց համար օգտաւէտ են։ Նրանց ի՞նչ գործ, թէ այդ հանճարների տակ ծածկվում է ապականուած բարոյականութիւն և յանցաւոր կեանք։ Չէ՞ որ այդ ոչինչ չէ խլում ճարտասանի կամ հեղինակի հանճարից, որը նրանց գործին աղմուկ և վայել է տալիս։ Եւ այդպէս նրան շրջապատում, իրախուսում, ծափահարում են. և նպատակին հասնելու համար ընտրած անբարոյական միջոցների վերայ, շատ անգամ նոյն իսկ ամենալաւ, ամենազնիւ մարդիկն անգամ զիջողաբար և սառնասրտութեամբ են նայում։ Եւ այն ստորաքարշ վայրերում, որտեղ եռ են գալիս կրքերը, և այն ծանր մթնոլորտում, որ լի է չարութեամբ և սուտութեամբ, մեզ ստիպում են մոցնել Աւետարանը, և ցանկանում են նրա քարոզիչներին մի որ և է դպրոցի կամ կուսակցութեան ստորադրեալ մարդիկ դարձնել։ Երբէք։ Եթէ եկեղեցին յուսար սրա մէջ ոյժ որոնելու, նա կը նմանուէր այն մարդուն, որը, մարգարէի ասելով, յենվում է եղեգնին, որ նրա ձեռքը կը ծակէ։ Անպէտ է թւում միայն՝ որ եկեղեցին կարող է այնտեղ պաշտպանութիւն գտնել. բայց իսկապէս նա կորցնում է ամեն աղդեցութիւն, հեղինակութիւն։ Եկեղեցին այլ դերքի մէջ պէտք է դնել. դա մի արբարան է, ուր ամենքը հանդիպում են, դա մի բարձր վոեմ արբաւոյր է ուր ժողովուրդը արդարութեան, փոխադարձ սիրոյ և յարգանաց մաքուր օդ ծծելու։ Նրա դռների մէջ թողնում են իրանց երերուն դրութիւններն, որպէս զի մոռանել կարողանան այն մասին՝ ինչ որ տրդար է, ինչ որ անդրդուելի է։ Նրա պատերի մէջ կրկին իրանց յանցաւոր են գտնում պատժի արժանի և Աստուածանից թողութիւն ստանալու ցանկութեան առաջ անհետանում են բոլոր վիճելի յիշատակութիւնները։ Գոնէ այսպէս պէտք է լինէր եկեղեցին և այն ժամանակ պահպանած կը լինէր մեզ վերայ իւր ամե-

նաբարձր իշխանութիւնը. և չը խառնուելով քաղաքականութեան մէջ, նա կը վայելէր ամենից այն, որ անուանում են յարգանք:

Ինչ որ ասում եմ քաղաքականութեան մասին, նայնը պէտք է ասել և հասարակական հարցերի մասին. և ինձ թւում է, որ բոլորովին բացայայտ կերպով իմ առաջ բերած Փրկչի խօսքերը յայտնարարում են սրան: Երևակայենք Յիսուսին և նրա առաջ երկու եղբայրներին, որոնք խնդրում են նրան վճռել, թէ ո՞րին պէտք է պատկանի ժառանգութիւնը: Նրանցից մէկը տեղհանատէր, իսկ միւսը՝ սարին—չունևոր գասակարգն է: Առաջինն ասում է. «ասա՛ովիր ինձ իմ ստացուածքը, հրամայի՛ր որ կարգը թագաւորէ. սանձահարի՛ր անմիտ կրքերը». երկրորդն ասում է. «ով դու որ աղքատ էիր, պաշտպանի՛ր աղքատներին, սատիպի՛ր որ նոցա համար արդարութիւնը յաղթանակէ»: Բայց այս ջերմ աղաչանքներին Աստուածային Ուսուցչի պատասխանը լսելի կլինի. «ով մարդիկ, ո՞վ կարգեց ինձ որ դատեմ կամ բաժանեմ ձեզ»:

Ճշմարիտ չէ՞ արդեօք որ Յիսուսը սրա կամ նրա կողմը չէ կարող բռնել, որովհետև նա հաւասար բոլորին է պատկանում: Կան մարդիկ, որոնք ցանկանում են որ նա տեղհանատէրերի կողմը բռնէր: Դրա փոխարէն խոստանում են եկեղեցին պաշտպանել, որովհետև, ինչպէս որոմնութեամբ նկատեց մի հեղինակ, նրանց համար եկեղեցին ամենից առաջ՝ նրանց գրամարկղների պահապանն է:

Նրանք քրիստոնէութեան մէջ պաշտպանութիւն են տեսնում յեղափոխութեան դէմ: այդ պատճառաւ նրան պահպանում, փառաբանում են, իսկապէս երբէք չհաւատալով նրան: Հոգւով անհաւատ, նրանք ծունկ են չոքում Յիսուսի առաջ, որ նա նրանց շահերը իւր սուրբ պաշտպանութեան տակ առնէր: Յիսուսը չէ ցանկանում այդ. ինչո՞ւ. որովհետև նրանց իրաւանց և տիրապետութեանց մէջ լինում են այնպիսի անարդարութիւններ, որոնք նա չէ կարող արբագործել իւր Աստուածային իշխանութեամբ, նա՝ որ արժանապէս անուանվում է սուրբ և արդար: Եւ մենք, նորա աշակերտները, չենք կարող համաձայնել մի որ և է կուսակցութեան կամ դասակարգի շահերի պաշտպանութեան

ներքոյ դնել Աստուածը, որ մի ընդհանուր բարիք է բոլորի համար։ Մենք կարծում ենք, որ հասարակական գործերի ներկայ դրութիւնը ամրապնդել, առանց ջերմ սրտով ցանկալու որ նա բարեւօրութիւն գիտարարութեան և արդարութեան ոգեշնչելի ազդեցութեան տակ, նշանակում է Յիսուսի վարդապետութիւնը հերքել։ Եթէ դուք քրիստոնեաներ էք, ձեր սրբազան ցանկութիւնը պէտք է լինի բոլոր մերձաւորների գոյութիւնը և հոգու փրկութիւնը։ Բայց ես ասում եմ Աստուծոյ առաջ, որ կան այն տեսակ պայմաններ որոնց շնորհիւ այս անհնարին է՝ գոնէ առանց հրաշքի օգնութեան։ Ազգաբանութեան այնպիսի աստիճաններ կան, որոնց առաջ գժբաղդաբար կորչում է անհատական արժանաւորութեան ամեն զգայմունք։ Մեր գործարանները, որտեղ խառն են երկու սեռերը, սպանում, ապականում են հոգին. ճնշող, ծանր աշխատանքը մանուկների, որոնք ստիպուած են մեքենաների անիւ լինեու, դրականապէս արգելք է լինում նոցա բարոյական զարգացման, կիրակնօրեայ աշխատութիւնները մահ են սպառնում ամենատեսակ բարեպաշտութեան և կրօնի։ Անարդարութիւն կլինէր այս ոլորտի—թշուառութիւնների բոլոր պատասխանատուութիւնը մի միայն սեպհականատէրերի վերայ գցել, որոնք իսկապէս ոչ այլ ինչ են եթէ ոչ ժամանակի բերմունքի, հանգամանքների և նախորդ սերունդի սխալանայ արտադրութիւն։ Բայց մի և նոյն ժամանակ անարդարութիւն և անիրաւութիւն կլինէր ոչ միայն ընդունել նրանց որպէս անխուսափելի չարութիւն, այլ և խնդրել Յիսուսին որ Նա սրբագործէր նրանց և տիրապետողների իրաւունքները մշտապէս ամրապնդէր այս տեսակ պայմանների մէջ։

Յիսուսը այդ չի անիլ. ընդհակառակն Նա կզարթեցնի նրանց խղճի մէջ գաղտնի անհանգստութիւն, Նա՝ նրանց կյիշեցնի որ նրանք իրանց յանձնած գանձի պահապաններն են միայն. Նա՝ նրանց կմրգովի այն պատասխանատուութեան մտածմունքներով, որ գնում է նրանց վերայ իրանց դրութիւնը. Նա կյուզի նրանց եսականութիւնը, պատկերացնելով այն զարհուրելի անհաւասարութիւնը, որ բաժանում է նրանց ուրիշներից։ Այս ազդեցու-

թեան տակ սեպհականատէրերը կ՚յիշեն, որ նրանց առաջին պարտքն է կարճացնել այդ տարածութիւնը, բարձրացնել արհամարհուածներին, ամրացնել նրանց մարդկային արժանաւորութիւնը, որին նրանք իրաւունք ունեն, վերացնել անապահով գրութեան գոյութիւնը, որ ապանում է ամեն կարգ ու կանոնի և հեռևողականութեան ոգին, լուսաւորել նրանց միտքը, վարուել նրանց հետ ինչպէս խելացի արարածների — աշխատակիցների հետ և ոչ որպէս մշակների հետ, միաւորել նրանց, որքան այդ հնարաւոր է, ընդհանուր բարեաց հետ: Յիսուսը կսովորցնի սեպհականատէրերին նախանձով, անհաշտ ատքով չնայել այն բոլոր բարենորոգութիւններին, որոնք թոյլ են տալիս մեծամասնութեանը մասնակցելու այն բանում: ուր առաջ միմիայն մի քանիների առանձնաշնորհութիւններ էր կազմում: այլ ընդհակառակն գրկաբաց, ջերմագին սրտով ընդունել այդ բարենորոգութիւնները: Ահա թէ Աւետարանը ինչ պէտք է յիշեցնի սեպհականատէրերին և մենք՝ ինչ պէտք է պնդելով կրկնենք նրանց՝ այսօր, վաղը և միշտ: թէկուզ մեր ձայնը նրանց զզուեցնէր և մեր յամառութիւնը նրանց վիրաւորէր: Բայց, եղբայրներ, մի ուրիշ աւելի ձանձրացուցիչ բան կայ, քան մեր թոյլ խօսքերն են. դա մեղ շրջապատող թշուառութիւնն է, որ մենք երբէք իրաւունք չունենք մոռանալու: Ի՞նչ բանի կարող էր ընդունակ լինել մեր ձայնը, եթէ միայն մեր ցաւակցութիւնը մի ատոմիճանով բարձրանար այն անարգութիւնների և չարչարանքների հետ, որոնց համար մի միայն այս քաղաքը (Փարիզ) այդ չափ ընդարձակ և մշտական սեսարան է ներկայացնում:

Ուրիշները ցանկանում են որ Յիսուսը յունևորների կողմը բռնէր և նրանց համար վճռէր ժառանգութեան կէսը: Յիսուսը այս էլ չի անիլ: Ինչո՞ւ: Որովհետև եթէ իւր ծայրագոյն դատավճռով իւրաքանչիւրին հաւասար մասը տար, այն ժամանակ այդ դատավճիռը որ այսօր կարող էր պէտքական լինել, վաղը կարող էր անպէտք երևել և անհաւասարութիւնը կվերանորոգուէր ի թշուառութիւն ընդհանրութեան: Հասարակական կեանքի խնդիրների վճիռը դեռ չէ գտնուած և շատերը նրանցից որոնք հաւատացնում են թէ գտել են նրան, ցնորաբաններ են:

Պատուասիրութիւններից ամենաչարն ու արհամարհելին այն է, որ յենվում է ժողովրդական թշուառութեան վերայ և օգուտ է քաղում նրանցից, որ ժողովրդականութեան վատառակ է։ Եւ սրդէն ասացի, որ իւրաքանչիւր մարդկային անհատի իրաւունքը, պէտք է ապահովացնել ոչ միայն տեսականապէս, այլ և գործնականապէս նրան հնարաւոր անել. այդ իրաւունքն է՝ ապրել, իւր հոգին աղատելով։ Եթէ այս իրաւունքի հետ մարդս բոլոր ճանապարհները իւր համար բաց է գտնում, այդ իրաւացի, օրինաւոր է. բայց եթէ կյանկան աւելի հեռու գնալ, եթէ կմոռանեն յանուն Յիսուսի բոլորի համար ստացուածքի և շահի հաւասարութիւն հաստատել, այդ կլինի խաբեբայութիւն և սուտ։ Ճշմարիտ է որ կայ մի հաւասարութիւն միայն, հաւասարութիւն օրէնքի առաջ։ Բայց այդ շրջանից դուրս միթէ՞ կարող է լինել կատարեալ հաւասարութիւն։ Միթէ՞ բնութիւնը հաւասար է ստեղծել մեզ՝ հանճարով, առողջութեամբ, բարոյական և ֆիզիքական զօրութեամբ, զանազան ընդունակութիւններով։ Միթէ՞ գոյքի, ստացուածքի հաւասարութիւնը այսօր օրէնք դառնալով, կարող էր մինչև վաղը գոյութիւն ունենալ։ Եւ միթէ՞ նրան կարելի էր այլ կերպ պահպանել, եթէ ոչ ամենածանր նեղութիւններով, հարստահարութիւններով։ Եւ այդպէս ի զուր կգալք դուք Յիսուսի մօտ, Նրան ասելու. «Վարդապետ՝ ասա ցեղբայրը իմ բաժանել ընդ իս ժառանգութիւնն»։ Այս, ըստ երևոյթին, իրաւացի խնդրին՝ Յիսուսը չի պատասխանիլ։

Նա չի պատասխանիլ, որովհետև Նրա առաքելութիւնը երկնային է, որ փոխադարձ յարգանքով և սիրով պէտք է մօտեցնի նրանց, որոնց բաժանում են նոցա շահերը։ Սոյնը պէտք է լինի և եկեղեցւոյ սպասաւորների նպատակը։ Թող անշնորհակալ լինեն և ընդունելութիւն չգտնեն նրանք, ինչպէս և նրանց Ուսուցիչը։ Այդ ոչինչ։ Մենք չենք դադարիլ հանգցնել ատելութիւնը, որ ուրիշները այդպէս ջերմեռանդութեամբ բոցավառում են մի չօր զաւակների մէջ. նրանց մէջ, որոնց անուանում են արտօնեալներ և բաղդից զրկուածներ։ Մենք չենք դադարիլ նրանց ասելու, որ ատելութիւնը անիրաւութիւն է և որ նա ոչինչ չէ վճռում։ Մենք կպատերազմենք եսական հպարտութեան դէմ, աւերիչ, կործանիչ

աստեղութեան դէմ՝ որ մէկը բարձրից՝ միւսը ցածրից վիճաբանութիւն է հասցնում։ Բարձրանալով այս աստեղի վէճերից բարձր՝ որ թունաւորում է սիրտը՝ մենք կհրաւիրենք անխտիր բոլորին՝ ընդհանուր աղօթքի՝ ընդհանուր խոնարհութեան՝ փոխադարձ ներողամտութեան և սիրոյ համար՝ յանձնելով բարի կամքով այս հոգևոր հաւատարութեան տաճարը՝ որի մէջ՝ ինչպէս Ս. Գիրքը գեղեցիկ կերպով ասում է. հարուստները և աղքատները հանդիպում են՝ յիշելով որ նրանց երկուսին էլ Աստուած է ստեղծել։

Այժմ՝ երբ մենք հասկացանք թէ ինչո՞ւ Յիսուսը բացատրեց և թէ ի՞նչ իրատական դաս է մեզ տալիս լսենք թէ ինչ է պատասխանում երկու եղբայրներին՝ որոնք եկել էին նրա միջնորդութիւնը խնդրելու . . . :

Այդ պատասխանը հատարակ—դատարկ խօսքեր չէին. Յիսուսը կարդում էր նրանց հոգին՝ որտեղ ուզում էր իւր խօսքերը։ Նա տեսնում էր այնտեղ նրանց վէճի իսկական պատճառը։ Այդ պատճառը ժլատութիւնն էր. կայ ժլատութիւն տիրապետողների՝ կայ և՝ ժլատութիւն նախանձողների՝ այս կրքերն՝ որոնք մարդոց առաջ անհաւասար են՝ Աստուծոյ առաջ բոլորովին մի են։ Հարկ չկայ ասելու թէ նրանք որքան եղբայրներ միմեանցից բաժանել են՝ որքան ընտանիքներ անգթաբար գիշատել են։

Բայց պէտք է թափանցել այս զգայմանց խորութեան մէջ՝ որ դատարկ բացականչութիւնների մէջ չկորչենք։ Ոչինչ այնքան սովորական չէ՝ որքան եկեղեցու բեմի բարձրութիւնից լսել յարձակումներ հարստութեանց ունայնութեան վերայ։ Ապարդ իւն կլինէր աւելացնել որ այդ քարոզները ոչ որի չեն կերպարանափոխում՝ որովհետև այսպէս թէ այնպէս ոչ ոք չէ հաւատում այդ լեզուի անկեղծութեան։ Նա՝ այլ պայմանական հաւատարութեան մի մասն է կազմում՝ որ իւր մթութեամբ և սառութեամբ արդէն կորցրել է որեւէր շարժելու ընդունակութիւնը։

Աւելի խորաթնին կերպով նայենք այս բաներին։ Մինչ՝ յանցաւոր են նրանք՝ որոնք տիրապետում են մի որ և է բանի։ Յանուն Աւետարանի՝ քաղաքական իրաւանց և կենցաղական փորձերի պատասխանում եմ՝ ոչ։ Ես աւելի հեռու եմ գնում։ Յան-

յաւիր են նրանք որոնք ունենալով, ցանկանում են առաւել և ունենալ։ Աստուծոյ, այո՛, բայց իւր սրտում ոչ ոք չէ հաւատում դրան։ Վաճառականները, տեղանաւորները կիւրակէ օրերում լսում են այս տեսակ բաների մասին գեղեցկահիւս քարոզներ և լսա երևոյթին հաւանում են. բայց հենց միւս օրը կրկնում են իրանց պարապմունքին առաւել ջերմ սրտով, քան առաջ։ Կարգը այնպէս է որ մարդս ընդարձակում է իւր գործունէութեան շրջանը, ուր նա գտանում է։ Գիտնականը ցանկանում է առաւել գիտենալ. գործոն մարդը ցանկանում է առաւել գործ ձեռք բերել։ Սա այսպէս է և պէտք է այդպէս լինի։ Եթէ դուք այդ կարգելէք, ապարդիւն կերպով կհարուածէք բոլոր ձեռնարկութիւնները, կսպանէք աշխատանքը և յառաջադիմութիւնը։

Զարութիւնը ընդի՞ մէջն է և ո՞րտեղից է նա սկսւում։ Դիւրին է նրան ցոյց տալ Աւետարանի առաջնորդութեամբ. նա՝ եռականութեան մէջն է, որ զոհում է իրան այն, ինչ որ իսկապէս Աստուծոյն պէտք է նուիրէր։ Մեզ անհրաժեշտ է ընդհանուր սկզբունքը մոռաբերել։ Մենք ստացել ենք Աստուածանից կարողութիւն, ընդունակութիւն, որոնք մեզ միջոց են տալիս կատարելու մեր կոչումը, բայց ոչ մեր անհատական նպատակները։ Մեր կեանքի նպատակը, ինչպէս քրիստոնեաների, պէտք է լինի ծառայել Աստուծոյն և մեր եղբայրներին։ Այն միջոցները որ Աստուած տալիս է մեզ այդ նպատակին հասնելու համար. են՝ հանճար, գիտութիւն և կարողութիւն։ Եթէ այս միջոցները մեզ համար նպատակ կշինենք, ահա այդ իսկ է և չարութիւնը։ Ես օրինակ կբերեմ իմ միտքս պարզաբանելու համար։ Ինքնապաշտպանութեան համար Աստուած դրել է մեր մէջ սիրոյ զգացմունք դէպի մեր անձը։ Ինչպէս միջոց, դա՝ կատարելապէս օրինաւոր է։ Բայց շինեցէք նրան նպատակ և նա կդառնայ ինքնասիրութիւն—եսամոլութիւն։ Աստուած մեզ գիտութիւն է տուել ինչպէս միջոց ճշմարտութեան հասնելու, շինեցէք նրանից նպատակ և դուք կստանաք բանականութեան կուռք։ Աստուած մեզ ազատութիւն է տուել սիրայօժար կերպով նրան ծառայելու, շինեցէք նրան նպատակ,

ոչինչ մի որոնէք ձեր ազատութեան մէջ, բացի ձեր անհատական ազատութիւնը, դուք արդէն կհասնէք հպարտութեան: Աստուած մեզ այս աշխարհի բարիքները պարգևել է՝ ինչպէս միջոց գործունէութեան և բարեգործութեան. շինեցէք նրանցից նպատակ և դուք կստանաք ժլատութիւն:

Յիսուսի իսկական իսօքերով, ժլատութիւնը նրա մէջն է որ մարդիկ կեանքը հարստութեան մէջն են որոնում: Թափանցեցէք այս մտքի մէջ և դուք կզարմանաք նրա խորիմաստութեամբ և ճշմարտութեամբ: Յիսուսը նրանց չէ դատապարտում որոնք վաստակում են—և տիրապետում են, նա դատապարտում է միայն նրանց, որոնք կեանքը որոնում են այս աշխարհի բարիքների մէջ. ունեն թէ չունեն, նոյն է, որովհետև կարելի է լինել և աղքատ, բայց մի և նոյն ժամանակ ժլատ հարստութեան ծարաւով. ինչպէս ուրիշները ժլատ են լինում իսկապէս, հարստութիւն դիզելու բուռն ցանկութեամբ: Յիսուսը նախատում է արծաթասիրութիւնը, ինչ կերպարանք և ընդունէր նա: Աշխարհումն ժլատ են անուանում ագահութեամբ հաւաքողին. Ս. Գիրքը աւելի հեռու է գնում: Նա որոշակի ցոյց է տալիս ժլատութիւնը իւր յաջորդական երևոյթների մէջ և միակերպ դատապարտում է նրանց: Փողի մէջ ի՞նչն է սիրում երիտասարդը կամ աշխարհային կինը. պճնազարդութիւն, շռայլութիւն, դիւրին բաւականութիւններ: Ի՞նչ է որոնում նրա մէջ չափահաս մարդը. ոյժ, զօրութիւն,—ազդեցութիւն, բարձրանալու միջոց:—Վերջապէս ծերուկը, որ զգում է որ արդէն նրանում մեռել է ամեն պատուասիրութիւն, որ նրան այլ ևս չեն գրգռեցնում բաւականութիւնները, շքեղութիւնը, ներկայացնում է մեզ սիրոյ զզուելի տեսարան դէպի փողը, մի միայն նրան ունենալու համար: Այս ապացուցանում է, որ սիրտը այն աստիճան քարացած է, որ ամենասրտառուչ հրաւէրներն անգամ անկարող են նրան շարժել: Բայց այս բոլոր ձևերի տակ, փայլուն թէ խոտելի, փքուն թէ գարշելի, մշտապէս ծածկուած է, Ս. Գրքի վարդապետութեամբ, մի և նոյն կուռքի երկրպագութիւնը: Այդ կուռքը հրապուրիչ, նաղելի թէ զզուելի, այսուամենայնիւ կուռք է. և այդ բոլոր ժլատները հանդիպում են միմեանց մի և նոյն ընդհանուր կէտի

վերայ,—նրանք կեանքը որոնում են գանձի մէջ։ Բայց ճշմարիտ կեանքը դրա մէջ չէ կայանում։ այս ասում եմ և՛ ունեցողներին և՛ չունեցողներին. և ո՛ գիտէ, շատ կարելի է առաջինները ինձ աւելի հասկանան քան երկրորդները։ Ճշմարիտ կեանքը ամենից առաջ սրտի մէջն է և ոչ գանձի, որ ունին։

Փակեցէք տգէտին ամենահարուստ գրադարանի մէջ, նստացրէք հիւանդին ամենաճոխ սեղանի վերայ, շրջապատեցէք թառամած, ցամաքած, կշռացած սիրտը ամենամաքուր, ամենաքնքուշ բաւականութիւններով և դուք կունենաք ապշեցուցիչ ապացուցութիւն, որ կեանքը հարստութեան մէջ չէ, որ ունեն։ Ո՛րքան անգամ ես նկատած եմ յուսահատութիւն և հոգեկան տանջանքներ այն տներում, ուր հարստութիւնը կեդրոնացրել է իւր բոլոր փայլունութիւնը։ Ո՛րքան անգամ նկատած եմ այնտեղ փոխադարձ ատելութեամբ, նենգութեամբ և զայրոյթով լցուած սրտեր, ծերունու՝ որ դառը կսկիծով գերեզման է իջնում անգութ, ապերախտ որդու երեսից։ Ո՛րքան անգամ հանդիպել եմ այնտեղ ամեն բանից կշռացած սրտերի, զզուանքի դէպի կեանքը, կատարեալ անընդունակութեան զուարճութիւնների համար։ Ձե՞ք նկատել արդեօք, որ ամենահին ժամանակներից սկսած ինքնասպանութիւնն, առաւել հարուստների մէջ է պատահում քան աղքատների։ Ո՞հ, եղբայրներ, մարդկանց վիճակներում առաւել հաւասարութիւն է տիրում քան որքան կարծում ենք։

Հարստութիւնը չէ փրկում հիւանդութիւնից, նա չէ վերադարձնում մորը իւր կորցրած զաւակին։ Հոգեկան և սրտագին այնպիսի տարաբաղդութիւններ են լինում, որոնք ոչնչով պակաս չեն ամենաողբերգուրելի աղքատութիւնից։ Բայց փորձենք մի փոքր վեր բարձրանալ, մոռածել ճշմարիտ կեանքի մասին, այն կեանքի՝ որ մշտնջենապէս շարունակուելու է։ Մաքով սլանանք այն հանդիսաւոր լոպէին, երբ հարկաւոր կլինի հաշիւ տալ մեր գոյութեան մասին. և երբ ամեն բան կախուած կլինի Ծայրագոյն Դատաւորի կշռից, որին չէ կարելի խաբել։ Այն ժամանակ կտեսնենք, որ անսիրտ հարուստը և աշխարհային բաւականութիւններին անձնատուր եղած կինը կլսեն սարսափելի դա-

տավիճռ. «Դուք կեանքը որոնում էիք ձեր հարստութեան մէջ, այժմ ստացէք ձեր ինքնասիրութեան և ինքնաբաւականութեան վարձատրութիւնը»: Շատ կարելի է այդ բոլէն ձեզ հասնի 5—10 տարուց յետոյ, շատ կարելի է հենց վաղը և բոլոր ձեր խեղկատակութիւնները, ծաղրածութիւնները, անհաւատութիւնը այդ բոլէն չեն կարող յետաձգել աւելի, քան խելագարների աղաղակը կամ անմիտ ծիծաղը, որոնց Գիտագարայի ջրլեժը տանում անյայտացնում է նեսի արագութեամբ:

Ինչի՞ մէջ է ուրեմն կեանքը: Աստուածանից թողութիւն խնդրելու մէջ, հաշտութիւն նրա հետ, ընկերակցութիւն Քրիստոսի հետ, որ ճանաչուած, ընդունուած, սիրուած է և հոգու փրկիչ է:

Ճաւիս վերջում, սրի մէջ զննեցինք արդարութեան և հաւատարութեան խնդիրները, որոնք անտարակոյս նշանաւոր են, բայց օտար յաւիտենական կեանքին, անհամբերութեամբ ինձ ցանկալի կլինէր անցնել այն միակ աւարկային, առանց որոյ անհնար է մեզ փրկուել և որը միայն տալիս է մեզ խաղաղութիւն և բաղդաւորութիւն: Ո՛վ սրտեր, որոնք աշխարհից խաբուել և նոյն իսկ բաւականութիւնների մէջ ճաշակել են դառնութիւն, որ աշխարհը ծածկել է իւր ուրախութիւնների խորութեան մէջ. ո՛վ խորտակուած սրտեր, որոնց աշխարհը այս ուրախութիւններից անգամ զրկել է, երկրի հարուստներ — աղքատներ, բաղդաւորներ — անբաղդներ, ունիք տրդեօք դուք ճշմարիտ կեանք: Արդեօք Աստուած ձեզ համար Հայր է, արդեօք Յիսուս Քրիստոսը ձեզ համար Փրկիչ է: Յաւիտենական կեանքը ձեզ համար երջանիկ իրականութիւն, ժառանգութիւն է, որ ոչ ոք չէ կարող ձեզանից յափշտակել: Ահա իսկական աղբիւրն կենաց, որոյ առաջ մնացածը միայն խաբէութիւն է և ունայնութիւն: Ահա երանութիւն, որ անբաղդութեան, տանջանքների և նոյն իսկ մահուան միջոցում էլ կարող է փայլել յաւուով, ուրախութեամբ, երախտագիտութեամբ առ Աստուած: Բաղդաւոր է նա, որ զրկուելով այն ամենից, որին աշխարհը նախանձում է, իւր ամրապինդ ապաստանարանը կոչանի Յիսուսի սիրոյ մէջ, որից ոչ ոք չէ կարող նրան բաժանել: Բաղդաւոր է նա, ով որ Աստուածային թագաւորութիւնն ունի երկրիս վերայ, անարգանք

*ների, զրկանքների և չարչարանքների մէջ։ Նա կատանայ նրան և՝ երկնքում Յիսուս Քրիստոսի ամենաբարձր փառքի և յաւիտենական երանութեան մէջ։*

(Բերսիէ)։

Խ. Ք. Խ.։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

### ԴԱՍԱԿԱՐԳԵՐ։

*Պետութեան մէջ և սորա իշխանութեան ներքոյ, իբրև ամբողջը կառավարող զօրութեան ներքոյ զարգանում է քաղաքական (ընկերական) հասարակութիւնը։ Ամենից առաջ նա հանդէս է գալիս, երևում է իբրև ամբողջութիւն մարդոյ ժողով (ընկերութիւն), այսինքն արտաքին միութիւն անհատների, որոնք կազմում են աղգ, և միանում են իրանց ազգայից փոխադարձաբար բարեբարութիւն տալու համար։ Բայց եթէ այդ ժողովը հետազօտելու լինենք նորա բուն էութեամբ, կտեսնենք, որ նա հասարակութիւն է, այսինքն անհատների ոչ միայն արտաքին, այլ և ներքին կանոնաւոր միութիւն է, որ հիմնուած չէ միայն առանձին անձնուրոյութեանց կամքի վերայ, այլ և բնական անհրաժեշտութեան, կազմակերպող ու կարգադրող զօրութեան վերայ է հիմնուած, որ անկախ է առանձին անհատներից։ Մասամբ անհատներն իրանց*

կապուած են ճանաչում գերդաստանի հետ և ընդհանրին ամենքն էլ նոյն ազգային կնիքն են կրում (բայի այն երկիրներից, ինչպէս զորօրինակ Ամերիկան, ուր քաղաքական հասարակութիւնը կազմուած է լաւ մեծի մասին այլ և այլ ազգերի գաղթականներից) մասամբ ներքին անհրաժեշտութեան օրինաց համեմատ կազմուում է «աշխատանքի բաժանումն» այլ և այլ թէ մարմնաւոր և թէ հոգեւոր պիտոյքներին բաւարարութիւն տալու համար, հանդէս է գալիս գործունէութեանց բազմազանութիւնը զանազան բարոյական նպատակների համար, որոնք ամենքը միասին նպաստում են մարդասիրութեան ամեն ինչ բովանդակող նպատակին: Համեմատ գործունէութեան այս զանազան եղանակներին մարդիկ էլ բաժանուում են այլ և այլ դասակարգերի: Միևնոյն դասակարգին պատկանող անձինք նոյն կենսական կոչումն ունին, ուստի և նոյնանման են նոցա շահերն ու գաղափարները, զարգացումն ու կեանքի եղանակը, առհասարակ—նոքա ունին մի ընդհանուր կնիք—տիպար: Դասակարգերն, անխոտիոխ, բնական, խստիւ սահմանափակուած խմբեր չեն, որոնց մէջ մարդիկ սերնդից սերունդ կաշկանդուած մնալու դատապարտուած լինէին և որոնցից անհնարին լինէր տեղափոխուելու այլ խմբերի մէջ: Զգէտք է նոցա վերայ նայել իբրև մարդկային կամայականութեան գործի կամ արդիւնքի վերայ: Ընդհակառակն նոյն իսկ ազգային կեանքի զարգացման հետ դասակարգերը կազմուեցան ազատութեան և անհրաժեշտութեան միութեամբ: Առանց դասակարգերի ազգը կներկայացնէր անտարբեր և լուծեալ բազմութիւն և քաղաքական հասարակութիւնն էլ այդ դէպքում կլինէր լոկ հիւլէական անհատների ժողովածու: Այսպէս ուրեմն քաղաքական հասարակութիւնը չէ հասարակ միութիւն անհատների, գերդաստանների և ընկերութեանց՝ այլ զանազան դասակարգերի միութիւն է, որոնք փոխադարձաբար պիտի ներգործեն միմեանց վերայ և հաւասարական ուժով գործեն: Առանձին անհատն պետութեան հետ յարաբերութիւն ունի, իբրև դասակարգի պատկանող անձն միայն:

Ֆրանսիական յեղափոխութիւնն իւր ազատութեան և հաւասարութեան վերացական գաղափարներով շատ ձգտումն ունեցաւ

ջնջելու դասակարգերն, որովհետև դասակարգական կարգերի հետ կապուած հին չարագործութիւնք և նախապաշարմունքները ջնջելիս, վասի հետ նոցա և լաւ կողմերն էլ վերացրեց։ Նոյնպէս և ներկայ կառավարութիւնք ձայնատուութեան ընդհանուր իրաւունքով—ձայնատուութիւն բոլորովին անտարբեր խառն բազմութեան ժողովրդոց—շատ խախտեցին դասակարգական գաղափարը։ Չնայելով այս ամենին, դասակարգերը չեն կարող բոլորովին անհետանալ և անդիմադրելի բնական անհրաժեշտութիւնը միշտ պահել է և պահպանում է նոցա նշանակութիւնը։ Ներկայումս աւելի և աւելի հաստատանում է այն ճանաչողութիւնն ու գիտակցութիւնը, թէ ամեն պետական հաստատուն կառավարութիւն պէտք է հիմնուած լինի դասակարգերի տարբերութեան վերայ։

Դասակարգերն արդարութեամբ բաժանուում են այնպիսի դասերի, որոնք աշխատում են նիւթական և ֆիզիքական նպատակների համար, և կան այնպիսիք, որոնք աշխատում են բարձր վսեմ նպատակների համար—տարբերութիւն, որ անշուշտ չպէտք է վերացական մնքով հասկացուի։ Բայց և այնպէս, որքան էլ այս տարբերութիւնն իրականութեան համաձայն է և նշանաւոր—այնու ամենայնիւ բաւարար կերպով չէ որոշում այն յարաբերութիւնն, որ զանազան դասակարգերն ունին հասարակութեան և պետութեան հետ։ Այդ պահանջը բաւարարութիւն գտնում է այն ժամանակ, երբ դասակարգերը բաժանում ենք հասարակական կամ հրապարակական և մասնաւոր դասակարգերի (Շտալ)։ Հասարակական են այն դասակարգերն, որոց գործունէութիւնն անմիջապէս ծառայում է հասարակութեան և կատարուում է, ասենք, յանուն հասարակութեան և նորա համար։ Իսկ մասնաւոր և կամ այլապէս ասած անհատական են այն դասակարգերն, որոնք մերձաւորապէս ներգործում են անհատների վերայ, և որոց գործունէութիւնը ծագումն առնում է անհատական շահերից և ծառայում է հասարակութեան միայն միջապէս։ Հասարակական դասակարգերն են՝ ազնուականք, զինուորականք և քաղաքական ու եկեղեցական պաշտօնեաների դասակարգերն։ Մասնաւոր դասակարգերն են՝ երկրագործաց կամ գիւղականաց դասը, ձեռագործական և առև-

տրական դասակարգերը։ Այս վերջին տեսակին վերաբերելի են նոյնպէս բժիշկները, փաստաբաններն, ուսուցիչներն և գեղարուեստագէտները, որովհետև նոքա աշխատում են առաջ առաջ անհատների շահերի համար։ Աղնուականութիւնը հասարակական դասակարգ պէտք է համարուի այն հիման վերայ, որ նա առանձին իմն կերպով կապուած է միապետութեան և պետութեան հետ, այն ինչ ընդարձակ կալուածների տէրերը պատկանում են մասնաւոր դասակարգերին։ Աղնուականութեան հետ կապուած են ոչ միայն ընդարձակ կալուածի տիրապետութիւնը (աղնուականութիւնն առանց հողային սեպհականութեան զուրկ է գոյութեան էական պայմանից), այլ և ծննդեան որոշ իրաւունքներ ու ժառանգական արտօնութիւնք, որոնք մարդուս տալիս են հասարակութեան մէջ բարձր դիրք։ Հին ժամանակներում կային աղնուական ընտանիքներ, որոնցից լինում էին թագաւորներ և աղնուականութիւնն աւելի և աւելի զարգանում էր, իբրև տիրապետող դասակարգ, իբրև նմանութիւն թագաւորական իշխանութեան։

Մի կողմից յայտնի է՝ թէ աղնուականութեան այս տիրապետութիւնն որպիսի ճնշումն ու ծանրութիւն էր գործում միւս դասակարգերի վերայ, միւս կողմից մենք գիտենք, որ մեր ժամանակ աղնուականութիւնը կորցրեց իւր քաղաքական արտօնութեանց մեծ մասը։ Բայց և այնպէս ամենևին չէ կարելի ասել, որ նա ամեն վերաբերմամբ ջնջուած է իբրև դասակարգ։ Նա ունի իւր յատուկ սեպհական դասակարգական գիտակցութիւնն իւր պատմական յիշատակների մէջ, որոնցով նա առանձին եղանակով կապուած է ազգի պատմական կեանքի հետ։ Սերտութեամբ յարուած լինելով թագաւորի անձնուորութեան, աղնուականները առանձին կոչումն ունին գահը պահպանելու և պաշտպանելու, իրանց հայրենեաց շահերի ներկայացուցիչները լինելու ամեն կողմանէ, որպէս զի պաշտպանելու և նպաստելու և իբրև առաջնակարգ անձինք պետութեան մէջ պատրաստ պիտի լինին, երբ հարկը պահանջի, զոհ բերելու հայրենեաց օգտի համար։ Թէպէտ և աղնուականութիւնը կորցրեց իւր քաղաքական արտօնութիւնքն, որ վայելում էր ի վրնաս այլ դասակարգերի, բայց և այնպէս միշտ մնում է կապը ժա-

ռանգական ազնուականութեան և ժառանգական միապետութեան մէջ, որ առանց ժառանգական ազնուականութեան օգնութեան և նեցուկ լինելուն, շատ միայնացած ու անչատ կմնար։ Այն պետութիւններում, ուր ներկայացուցիչք լինում են ըստ դասակարգերի, և ուր ազնուականութիւնը պահպանած է իրապէս իւր պատմական նշանակութիւնը — հիմնաւոր է և՝ այն կարգադրութիւնն, որ ազնուականութիւնն էլ, իբրև դասակարգ ունենայ իւր ներկայացուցիչներն։ Առ հասարակ հարկ չէ անպայման կերպով ու առանց շրջահայեցողութեան վիճել ազնուականայ ցեղական արատաւորութեանց դէմ։ Որովհետև գիտուք թէ ես ազնուական չեմ ծնած, այլ ծնած եմ միլիոնատէր ցեղական իրաւամբ ժառանգելու մի կամ մի քանի միլիոններ. միթէ՞ վէճ կբարձրացնէին և՝ այդ իմ ժառանգական իրաւանցս դէմ ու կխոչէին նրանց ինձանից։ Միթէ կը կամենան անարդամաբանօրէն դատել, բացառութիւն անելով միայն գրամագլխի վերաբերմամբ։

Մենք այստեղ մանրամասնօրէն չենք խորհրդածիլ հասարակական դասակարգերի վերայ, որովհետև նոցա նշանակութիւնը կախուած է այն հասատութիւններից, որոնց հետ նոքա կապուած են։ Ընդհակառակն մենք առաւելապէս ուշադրութիւն կդարձնենք մասնաւոր դասակարգերի վերայ, և այս մասնաւանդ այն պատճառով, որ նոքա ժամանակակից հասարակութեան մէջ աւելի ոչ-քի ընկնող դեր են կատարում քան միւս դասակարգերը։ Հէնց նոցա մէջ անհատական ազատութիւնը այն աստիճանի զարգացման է հասել, որ նորա վերայ մի կողմից հարկ է նայել իբրև շատ օրինաւոր և ուրախատիթ երևոյթի վերայ, որ բերում է իւր բարի պտուղներն, իսկ միւս կողմից իբրև մի երևոյթի վերայ նայելու է, որ արդէն առաջ է իւր դառն և մահաբեր պտուղներն և հասցրել է քաղաքական հասարակութիւնը ծանր և դժուար վիճակի, որից դժուար է ելք գտնելը։ Այս առաւելապէս վերաբերելի է ձեռագործական դասակարգին։

Երկրագործների դասակարգը կամ ֆէ-ղաքանէրի դասը մշակութեան կոչումն ունի, այն է երկիրը մշակելով մատակարարել բնական բերքեր ու նիւթեր, որոնք ապա պիտի մշակուին մարդ-

կային զանազան պիտոյքը լցուցանելու համար։ Ամենահին ժամանակներում երկրագործութեան մի տեսակ սրբութեամբ էին վերաբերում, ոչ միայն սերմի մէջ ծածկուած գաղտնիքի պատճառով և ոչ էլ միայն այն գեղեցիկ տպաւորութեան համար, որ ցանքը ու հունձը գործում են, այլ և այն պատճառով, որ երկրագործութիւնը գլխաւոր պայմանն է բարձրագոյն մշակութեան (քաղաքակրթութեան) քաղաքական հասարակութեան և պետութեան կեանքի համար։ Երկրագործ դասակարգի ամենօրեայ աշխատանքը դրդում է նրան յերկիւղ ցեռուն և ի համբերատար հնազանդութիւն Աստուածային Նախախնամութեան, որովհետև այդ աշխատանքը բոլորովին կախուած է բնութեան շնորհքներից՝ անձրևից և եղանակի բարեյաջող վիճակից և նրանցով է պայմանաւորուած։ «Ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխն և զանագան» (Յակոբ, Ե. 7)։ Այստեղ բնութիւնն է ամենից աւելի տուողը. մարդկային աշխատանքն այստեղ շատ փոքր է գործում։ Մենք կարող ենք տնկել և ջրել, իսկ Աստուած է, որ աճեցնում է։ Կեանքը բնութեան հետ միասին, որ տարէց տարի եղանակների փոփոխմամբ իւր միակերպ շրջանն է կատարում, այն աղդեցութիւնն է ունենում, որ երկրագործ դասակարգի կեանքն էլ միակերպութեան կնիք է ստանում, հակամէտ է դառնում դէպի հաստատուն սովորութիւնք և կախումն է ունենում միանգամ ընդունած և սովորական կանոններից։ Այս միակերպութեան վերաբերելի են որոշ չափաւորութիւնն և անարհեստականութիւնը կեանքի ամբողջ եղանակի մէջ, պարզութիւնն ու խնայողութիւնը կերակրի, զգեստի ու բնակարանի։ Բոլորովին հիմնաւոր է ոմանց խօսքը, թէ գիւղականաց դասը պէտք է առանձին զգեստ ունենայ, որ անկախ լինէր նորաձևութեան անընդհատ տատանումից ու փոփոխութիւններից։ Իւր բնական դրութեամբ և ուղղութեամբ գիւղականաց դասը աւելի հակամիտ է դէպի պահպանողականութիւն, քան դէպի յառաջադիմութիւն։ Յայտնի բան է նորա պահպանողականութիւնը, քաղաքական պահպանողականութիւն չէ։ Դէպի քաղաքագիտութիւն, դէպի պետական գործերն, այս

խօսքերի բուն նշանակութեամբ, գիւղացին շատ քիչ սէր և համակիրութիւն ունի, թէև վրդովեալ ժամանակներում նորա մէջ էլ կարող են ծագել այդ սէրն ու համակրութիւնը. քաղաքական արբեցութեան վիճակում յամենայն դէպս նորա քաղաքական շահերով հետաքրքրուիլը միջապէս է։ Նորա պահպանողականութիւնը հիմնուած է նորա վերայ, որ գիւղացին կապուած է հողի հետ, որ նա ոչ միայն կամենում է իւր հողային կալուածն ընդարձակել, այլ և առաջ առաջ կամենում է պահպանել իւր դաշտն, իւր բակը և իւր դաշտային անտեսութիւնն իւր և իւր սերնդի համար։ Եթէ գիւղացին կարգի է բերել իւր սեպհական գործերը, նա ըստ իւր, բնութեանը մօտիկ և դեռ ևս չնրբացած, կշռադատութեան, բոլորովին կանոնաւոր է համարում այն, որ բոլոր մնացածների մասին հոգում է բարձրագոյն իշխանութիւնը։ Գիւղացու այն հասկացողութեան ու հայեացքի մէջ մենք չենք կամենում եսականութիւն տեսնել, որ սովորական է մեր ժամանակում և ոչ էլ անտարբերութիւն դէպի հայրենիքի գործերն, այլ կամենում ենք ցոյց տալ այն, ինչ որ գիւղացու քաղաքական հասկացողութեան հիմնակէտն է, բնական կանոնաւոր կէտն, ուր միանում են բոլոր հասարակական շահերը։ Այս բնական պահպանողականութեան շնորհիւ, որ գիւղացուն կապում է հողի, հայրենիքի հետ և ամիսփոխութեան կնիք է դնում նորա կեանքի, եղանակի նորա աշխատանքի և բարքի վերայ — այդ դասակարգի վերայ իրաւամբ և արդարութեամբ նայում են, իբրև «յուսալի ու վստահելի դասակարգի վերայ», անտարահով ժամանակներում, իբրև մի դասակարգի վերայ, որ ամենից աւելի ընդունակ է հայրենեաց պաշտպանութեան համար։

Գիւղական դասի վերջին սերնդի մէջ զարգացման նշանաւոր յառաջադիմութիւն երևում է և այն անհատական ազատութեան ընդարձակման վերաբերութեամբ. այս մասին ազատականութիւնն անտարակոյս շատ նպաստել։ Գիւղական դասը, շատ ժամանակ չէ, որ ազատուել է ստրկութեան անարժան վիճակից, նոր են բարձած ու խզած և այլ կապերն, անձնական ինքնուրոյնութեան մեծ քայլն այն հանգամանքն է, որ կապալառուական յարաբերութեան տեղը

բանեց հողի ազատ սեփականութիւնը։ Բայց այն ձերբազատութեան հետ անշուշտ կապուած են զանազան վտանգներ ու դժուարութիւնք։ Այստեղ մենք կբաւականանք, ցոյց տալով բարոյական վտանգներն, այն է, որ գիւղականաց դասը բարօրութեան հասնելով, կարող է փորձութեան մէջ ընկնիլ, չբաւականանալով այլ եւ այն կենցաղավարութեան եղանակով, որ նրան կվայելէ, այլ կսկսէ վարել նոր կեանք անվայել ճոխութեամբ։ Իսկ գիւղական դասը լուծուելու վրայ է լինում միշտ, երբ նա ձգտում է խախտելու այն սահմաններն, որոնք նրան բաժանում են այլ դասակարգերից եւ որոց մէջ մնալով միայն ունի նա ոյժ եւ զօրութիւն։ Գիւղական դասը դէպի անկումն է գնում, երբ գիւղացին ամաչում է իր պարզ զգեստից եւ գեղջկուհին կամենում է հագնուել քաղաքացի մեծատուն կանանց նման, երբ ճոխ խնջոյքները գիւղայոց մէջ սովորական են դառնում եւ մի ենոյն ժամանակ զարթում է նոցա մէջ կեղծ գեղարուեստական ուղղութիւն, կամ երբ գիւղացին իւր կիսուսութեամբ, որ սատացած է լրագիրներից եւ կամ ժողովրդական անուս առաջնորդներից, սկսում է յայտնել դատողութիւնք քաղաքական խնդիրների մասին, դատում է այնպիսի առարկաների վերայ, որոնք նորա հասկացողութիւնից բարձր են, ինչպէս զարօրինակ երբ բռնքում է Լատին լեզուի դասատուութեան դէմ դպրոցներում, ամեն գիտնական աշխատանքի դէմ եւ լուսաւորութեան չափ գնում է գիւղականաց կրթութիւնը։ Բոլոր այս եւ սոցա նման երեւոյթները ձերբազատութեան վնասակար պտուղները համարելի են եւ դաբա ի վերջոյ կարող են այնտեղ հասցնել գործն, որ գիւղական դասը կարող է դադարել վտահելի դասակարգ լինելու, մանաւանդ երբ քաղաքական շարժմանց ու քննադատութեանց չափազանցութիւն անձնատուր կլինի։

Ձերբազատութեան վնասակար պտուղների շարքում դասելի է եւ այն հանգամանքն, որ գիւղական դասի մէջ զարգանում է հարստապետական ամբարհաւաճութիւնն ու հպարտութիւնը, եւ այս սեպհականատէր գիւղայու եւ վարձկանների կամ մշակների յարաբերութեան մէջ, երբ առաջինը վերջիններին չէ տալիս պատշաճ անձնական ինքնուրոյնութեան, որ ինքն լիովին վայելում է

կամ աւելի ճշտենք մեր միտքը՝ նա չէ մատակարարում պայմաններն այդպիսի ինքնուրոյնութեան համար՝ որանից մակաբերելու է՝ որ ձերբազատութեան գործը ընդորոյին կատարեալ չէ և որ ձերբազատութեան էական պահանջը մնում է անբաւարար։ Մինչև որ ժողովրդապետական ոգւով ներշնչուած կալուածատէրերն և նոցա ղեկավարները չեն հոգալ անձնուիրութեամբ մշակների վիճակը բարելաւելու վերայ—նոցա յայտնած հաւատարմութեան գաղափարները չեն կարող առանձին կշիռ և նշանակութիւն ունենալ և նոքա չպիտի կարողանան հաւատացնել մարդոց՝ թէ իրանք աշխատում են ընդհանուր հասարակական շահերի համար։

Գիւղական դասի հետ մի շարքում կդասենք և ընդարձակ կալուածների տէրերին։ Մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքն՝ որ հասարակութեան այս դասակարգն ապրում է գիւղացիների մէջ՝ ուր նա պարապում է գիւղատնտեսութեամբ ընդարձակ չափով և ընդ նմին մեծ հարստութիւն և բարձր կրթութիւն ունի՝ գիւղական դասի հետ համեմատելով։ Նա ոչ միայն զօրեղ պահպանողական տարր է կազմում պետութեան պահպանութեան համար՝ այլ և գիւղական դասին կարող է օգտաւէտ լինել թէ խօսքով և թէ գործով։ Նա իւր կենցաղավարութեամբ գիւղացիների շրջանում կարող է էական կերպով նպաստել քաղաքակրթութեան և մտաւոր զարգացման տարածման՝ միևնոյն ժամանակ ծանօթացնելով գիւղացիներին և՝ գիւղատնտեսութեան մէջ կատարուած նոր գիւտերի հետ։ Ուր հասարակութեան այն դասակարգն առաւելապէս ներշնչուած է քրիստոնէական ոգւով և քրիստոնէութեան շահերով՝ այնտեղ նա իւր ազդու օրինակով ոչ միայն կամրապնդէ գիւղացւոց մէջ քրիստոնէական և եկեղեցական կենցաղավարութիւնն՝ այլ և արդիւնաւոր կերպով կնպաստէ՝ որ եկեղեցին և գոլորոյն իրանց վայելուչ դիրքը ստանան։

Մինչդեռ գիւղական դասը կատարում է իւր մշակութեան — կրթութեան կոչումն՝ հայթհայթելով ու պատրաստելով բնական բերքեր ու նիւթեր՝ յեռագործական դասը կատարում է իւր կոչումն այդ բերքերը մշակելով մարդկային պիտոյից բաւարարութիւն տալու համար։ Այս դասակարգը կազմում են արհեստաւորներն ու

գործարանատէրերը. արհեստաւորն աշխատում է անհատների առանձին յատուկ պահանջների համար, իսկ գործարանատէրը— որևէ վերացեալ գաղափարական ընդհանուր պահանջի համար (Հեգել)։ Այս դասակարգը կոչուած է առաւելապէս աշխատասիրութեան և հնարագիտութեան համար։ Հէնց այս դասակարգի մարդոց մէջ և մանաւանդ արհեստաւորաց մէջ զարգանում է տարրական գեղարուեստական զգայմունքը, ձգտումն արտադրելու ոչ միայն ամուր և նպատակայարմար ապրանք, այլ և ցանկութիւն իւր ապրանքի վերայ գեղեցկութեան և սքանչելիութեան կնիքը դրոշմելու։ Միջին դարերի գեղարուեստաւորները, իրանց գործը ոկսեցին իբրև հասարակ արհեստաւորներ և գուցէ ամեն ժամանակ այս այսպէս է եղած։ Ինչպէս որ արհեստը մայրն է ստեղծական արուեստի, այնպէս և գեղարուեստը աղդում է արհեստի վերայ. սորա մեծ օրինակը կարող է համարուել Դանիան այն աղդեցութեամբ, որ այստեղ ունեցան Տորվալդսէնի (քանդակագործ) արտադրութիւնք տեղական արհեստաւորների ճաշակի վերայ։

Արհեստաւորին և գործարանին տրուում են միայն կողմնանմիշակ նիւթեր. աշխատանքը պէտք է կատարէ ամեն ինչ, որ պահանջուած առարկայ.ք պատրաստուին, որ գիւղացու կոչման ու վիճակի բոլորովին հակապատկերն է կազմում որովհետև գիւղացու համար ամենամեծ աշխատանքը քաշում է բնութիւնն, որ նիւթերը արտադրում է և հասունացնում։ Արհեստաւորն ու կերպասագործը պէտք է գնահատեն ժամանակն և խնայեն այն բոլորովին այլ եղանակով ու աւելի խիստ կերպով, քան երկրագործը։ Արտում ցորենն աճում է ու այն ժամանակ, երբ մարդս քնած է ու չէ աշխատում։—միևնոյնը չէ կարելի ասել ձեռագործական արտադրութեանց վերաբերմամբ, երբ մուրճը կամ ասեղը չեն գործում կամ չէ բանում։ Ուստի և ձեռագործական դասակարգը ճշտութեամբ պէտք է հաշուէ աշխատանքի ժամերն և շահագործէ նրանց, մինչև անգամ որոշ հանգամանքներում պէտք է գիշեր և ցերեկ աշխատէ, որպէս զի նշանակած ժամանակ կարողանայ ոկսած գործը վերջացնել։ Ժամացոյցն՝ այդ արհեստական գիւտն, որով մարդկային հանճարը ստիպեց մեքենային չափելու ժամանակն և որ մար-

ցնում է մեր կեանքի մէջ ճշտութիւն, այդ դասակարգի արտադրութիւնն է և գլխաւորապէս նորա համար ունի նշանակութիւն։

Ձեռագործական դասի հակադրութիւն երկրագործականին երևում է և նրանում, որ ձեռագործական դասակարգն աւելի հակամիտ է դէպի յառաջադիմութեան քան դէպի պահպանողականութիւն։ Դա միշտ ձգտում է նոր գիւտերով գերազանցելու անցեալից։ Իւր գիւտերով նա մարդկային ընկերութեան մէջ առաջ է բերում նորանոր պահանջներ, որով պատճառում է ոչ միայն օրինաւոր ճոխութիւն, այնպիսի աւարկաների գործադրութիւն, որոնք վերաբերում են բաւականութեանց և կեանքի զարգացման, վայելչականութիւն ու դիւրութիւն են առթում կեանքին, որ անհրաժեշտութեան սահմանից դուրս է, այլ և երբեմն պատճառ է լինում ապօրինի աւելորդ ճոխութեան, կեանքի շռայլ նրբութեան, որից վնասուում է ընդհանուր բարօրութիւնը։ Մարդիկ չափազանց փափկասէր են դառնում։ Ըստ որում ձեռագործական դասակարգն սերտ կապ ունի աւևարի հետ, որ միացնում է զանազան երկիրներն ու ազգերին, ուստի և նա աւելի աշխարհաքաղաքացիական դասակարգ է, քան ազգային։ Դա նոյն յարաբերութեան մէջ է դէպի երկրագործական դասակարգն, ինչ յարաբերութիւն ունի դրամի շարժական ոյժը դէպի անշարժ հողային սեպհականութիւնը։ Ներկայիս ձեռագործութեան մեծ զարգացումն, որոյ շնորհիւ հասարակութեան մէջ գումարը մեծ ոյժ է դարձել, հիմնուած է մասամբ մշակող ուժերի մեծ բաժանման վերայ, որ պայմանաւորուում է նորագիւտ մեքենաներով ու շոգու զօրութեան սրամիտ գործադրութեամբ, մասամբ էլ անհատական ազատութեան ընդարձակման վերայ, ազատութեան, որ Ֆրանսիական յեղափոխութեան պտուղն է և արտայայտուում է ազատ մրցութեան մէջ (Ադամ Սմիտ)։ Ազատ մրցութիւնը շատ արդիւնքներ տուած է, որովհետև նա խզեց ճնշող և կաշկանդող կապերն, որոնք յատուկ էին հին արհեստաւորաց ընկերութեանց և խմբակներին։ Բայց գժբաղդութիւնն այն է, որ խզուեցան բոլոր կապերն և ոչ թէ միայն ապօրինիները, վնասն այն է, որ փոխանակ համաձայն ժամանակի պահանջներին բարեփոխելու այդ ընկերութիւնքը, նրանց

բոլորովին վերջ տուին, ջնջեցին և անհատական ազատութիւնն ամեն վերաբերմամբ ոտի կանգնեցրին ամրացրին. դժբաղդութիւնն այն է, որ ազատ մրցութեամբ բարձրացրին զօրեղի իրաւունքն և առաջացրին ամենքի պատերազմն ամենքի դէմ։ Ուստի և ազատ մրցութեան շնորհիւ մեծ թշուառութիւն առաջ եկաւ մարդկութեան սեռի համար։

Առևտրական դասակարգը կոչումն ունի բնութեան և արհեստի արտադրութիւնքը տեղափոխելու և նրանց վաճառք — ապրանք դարձնելու։ Նա միջին անդամն է արտադրողների և ծախսողների մէջ։ Առևտուրը նաւագնացութեան հետ միացմամբ աշխարհիս զանազան մասերը փոխադարձ յարաբերութեան մէջ է դնում ուստի և շատ նպաստում է քաղաքակրթութեան զարգացման։ Առևտուրը, ղեկավարելով նիւթական առարկաների շարժումն ու տեղափոխութիւնը, նպաստում է և՛ մտաւոր հաղորդակցութեան (շտալ)։ Բոլոր որում առևտուրը չէ կարող առանց գրամի կատարուել, բայց և ոչ միշտ կարող է առձեռն կանխիկ գրամով լինել, վասնորոյ նա հիմնուում է հաւատարմութեան վերայ և վաճառականաց համերաշխութեան վերայ (հաւաքական երաշխաւորութիւն). ուստի և ստանձնած պարտաւորութեանց ճիշդ և անխախտ կատարումն գլխաւոր տեղն է բռնում վաճառականական դասակարգի բարոյագիտութեան մէջ։ Ինչպէս որ առանց հաւատարմութեան չէ կարող կատարուիլ առևտուրը, նոյնպէս նա չէ կարող վարուիլ և առանց շահադիտութեան, առանց շահ և օգուտ ստանալու միջոցներն որոնել ու գտնելու. ուստի և վաճառական դասն ընդհանրապէս պէտք է դիտող լինի ու ղգոյշ և պէտք է ուշադրութիւն դարձնէ պատահարակցութեան (КОНЪ — юнктура) վերայ, իսկ բարձր առևտրական դասակարգը բացի դրանից առհասարակ պիտի դիտէ իրերի ընդհանուր վիճակը բոլոր աշխարհումն։ Ընդ նմին անհրաժեշտ է, որ նա վճռողաբար գործող լինի, որպէսզի շատ նկատէ ու տեսնէ բարեյաջող հանգամանքներն ու յարմար բոպէները. վաճառականի համար առանձին նշանակութիւն և կշիռ ունի առածը՝ թէ «ժամանակը դրամ է»։ Շահադիտութիւնն առատ օգտի ու շահի համար անշուշտ երկ-

բայական բարոյական արժանիք ունի։ Այս դեռ չին դարերումն էլ արտայայտուեցաւ առասպելի մէջ Մերկուրիոսի՝ առևտուրի հովանաւոր չաստուածոյ վերայ, որ մի և նոյն ժամանակ հովանաւոր էր համարում և՝ գողերի ու քաղցրաբարբաւ խաբեբաների։ Աւաւօրը ծնած, արդէն երեկոյեան նա Ապողոնից գողացաւ յիսուն եղը, որոնցից երկուսն իսկոյն զոհ բերեց ի պատիւ իւր անձին։ Իսկ երբ վերջապէս գողութիւնը յայտնուեցաւ և նա պարտաւոր էր վերադարձնել գողացածը, նա շատ շնչաբեր կերպով սեպհականեց իրան քառասուն ութը եղները, քաղցր խօսքերով Ապողոնին համոզելով, որ նա եղները իրան թողնէ փոխարէն այն քնարին, որ գեղեցիկ կերպով շինեց սատկած կրիայի սկրից, սորա վերայ լարեր ձգելով։

Մենք համոզուած ենք, որ առևտրական դասը պէտք է ուշադրութիւն դարձնէ շահի վերայ։ Բայց ուշադրութիւնը զուրկ չը պիտի լինի բարոյական նշանակութիւնից, պէտք է բարոյական բնաւորութիւն ունենայ և այս նպատակին կարելի է հասնել, եթէ այդ ուշադրութիւնը կը լինի համեմատական յարաբերութեան մէջ շրջապատող հասարակութեան վիճակի հետ և չի դառնալ ճիշդ հարստահարութիւն, ինչպէս անում են հրէաները։ Թէև վաճառականն անում է իւր առուտուրն, իբրև մի մնոնաւոր գործ, բայց նա մի և նոյն ժամանակ ներշնչուած պիտի լինի գիտակցութեամբ, որ ինքը պէտք է ծառայէ հասարակութեան և գործէ նորա օգտի համար։

Առևտրական դասն ըստ իւր էութեան ձեռագործական դասակարգի նման աւելի աշխարհաքաղաքացիական է քան ազգային։ Բայց այստեղ ազգային սկզբունքն արտայայտուում է այն հակադրական դրութիւնների (սիստեմի) մէջ, որոնցով առուտուրը զանազան երանակների է բաժանուում։

Երկու դրութիւնք—սիստեմներ կան՝ հովանաւորական դրութիւն, (որ իսկապէս ազգային դրութիւն է) և ազատ առևտրի դրութիւնը (աշխարհաքաղաքացիական դրութիւն)։ Հակասութիւնն այս դրութեանց մէջ չէ կարելի վերացնել։ այլ միայն մեղմաւորապէս, եթէ ուշք դարձնուի զանազան ժամանակներում

գործադրուող, կատարուող թէ ազգային և թէ աշխարհաքաղաքացիական յարաբերութեանց վերայ։ Անպայման ազատ առևտրի դրութեան ներկայացուցիչն է Ադամ Սմիթը (1723—1790)։ Նա ըստ երևութին պաշտպանում է աշխարհաքաղաքացիութիւնը, բայց իրօք պաշտպանում է ազգային—եռական շահերը, անգլիական ազգի բարօրութիւնն, որովհետև ազատ առևտրի ու. ազատ մրցութեան ժամանակ շահն ու օգուտը միշտ զօրեղի կողմումն է լինում և ազատ առևտուրը միշտ օգտաւէտ է հէնց Անգլիային։ Ադամ Սմիթին հակառակորդ կարող է համարուիլ Ֆր. Լիստը (1789—1846)· սա թէև հակառակ չէ աշխարհաքաղաքացիութեան գաղափարին, բայց պահանջում է մի և նոյն ժամանակ, որ իւրաքանչիւր ազգ նախ զարգացնէ իւր արտադրական ոյժերն և պնդում է, թէ իւրաքանչիւր ազգի համար կը գայ ժամանակն, երբ միջազգային առևտրի մէջ առաջ կը գայ որոշ սահմանափակութիւն, երբ արդելական և հովանաւորական դրութիւնն անհրաժեշտ կը դառնայ, եթէ ազգը չէ կամենում կորցնել իւր անտեսական ինքնուրոյնութիւնն, որ սերտութեամբ կապուած է բարոյական անկախութեան հետ։

Վերոյիշեալ մասնաւոր կամ անհատական դասակարգերին վերաբերել կարելի է և այսպէս անուանեալ չորրորդ դասակարգը, այն է մշակների դասակարգն, որ բովանդակում է իւր մէջ վարձկանների մեծ բազմութիւնն, որոնք միայն մշակելու ֆիզիքական ոյժ ունին, բայց բոլորովին զուրկ են սեպհականութիւնից։ Նոքա որոշ օրական վարձով աշխատում են գործարաններում և արհեստանոցներում, դաշտերում և նաւագործարաններում, ապրում են օրական վաստակով և թէպէտ գերդաստան ունին ու բազմաթիւ զաւակունք, բայց դժուար թէ կարող լինին իսկապէս ընտանեկան կեանք վարելու։ Սա հասարակութեան այն դասն է, որ մեր ժամանակում պահանջ է յայտնում, որ ինքն էլ ճանաչուի քաղաքական հասարակութեան մի դասակարգ և ունենայ ազատով իրաւունքներ, թէև յաճախ ոչ իրաւացի կերպով կոչուում է պրոլետարիատ (չքաւոր սինկքոր)։ Պրոլետարիատ խօսքն աւելի ընդարձակ միտք – գաղափար է արտայայտում։ Սա բովանդակում է իւր մէջ

բոլոր չքաւորներին, միացնելով սորա հետ և սինլքորութեան գաղափարը, հասարակութեան այն բաղադրիչ մասն, որ չը պիտի լինէր։

Մենք ասացինք, որ պրոլետարիատ խօսքն աւելի ընդարձակ միտք ունի։ Նա հասարակութեան ամեն դասերումն էլ կարող է լինել։ Ռիլի հայեացքով կարելի է խօսել հարստապետական պրոլետարիատի վերայ, այսինքն ազքատացած ազնուականների վերայ, որոց արդիւնքները բաւական չեն բոլոր պիտոյքները լցուցանելու համար, աստիճանաւոր պրոլետարիատի վերայ, որովհետև մի քանի սարին պաշտօններ շատ սուղ վարձատրութիւն են տալիս։ Պրոլետարիատին կարելի է վերաբերել նշանաւոր բաղմութիւնը գրականութեամբ զբաղուողների ու հրապարակախօսների, որոնք գոյութեան համար պատերազմ են մղում, ըստ որում նոքա ապրուստի ոչ միայն նիւթական միջոցներից զուրկ են, այլ չունին անգամ և՛ մասաւոր — հոգեկան դրամագլուխ, ապրում են այն վարկով, որ վայելում են բաղմաթիւ ազէտ կամ կիսակիրթ հասարակութեան կողմից։ Պրոլետարիատին պատկանում են թատրոնական քննադատներն, որոնք համեմատական շահ են ստանում դերասաններից և երգիչուհիներից, նոցա մասին գրած ախորժ և գովասանական յօդուածների համար, շրջիկ դերասաններն, ձիարշաւներն ու երաժիշտները, սկսած շատ երևելիներից, որոնք նուագահանդէս են տալիս, մինչև հասարակ երգիչներն ու երգիչուհիք, որոնք հասարակական զուարճութեանց տեղերում երգում են, և ապրում են հիւրերի գանձանակը գցած գրամներով և այլն, և այլն։ Բոլոր այս մարդոց, մի խօսքով այլ դասակարգերի մէջը, Ռիլը կոչում է չորրորդ դասակարգ։ Բայց մենք կարծում ենք, որ չորրորդ դասակարգի գաղափարն իւր բովանդակութիւնը ստանում է, եթէ նրան սահմանափակենք միայն վերոյիշեալ վարձկան մշակների թուով, որոնք ներկայ ժամանակի այսպէս անուանեալ մշակների խնդրին առիթ տուին։ Բոլոր մնացած պրոլետարիատը չէ կարող իսկապէս դասակարգ կազմել այն պատճառով, որ նա այլ դասակարգերի մէջն ու դիրքն է, որ չէ կարելի ասել մշակների մասին, որոց վերայ է այստեղ խօսքը։ Ոչքան մեծ թերութիւնը էլ նկատուէին վերջիններին մէջ, այնու ամենայնիւ նոցա վերայ հարկ է նայել իբրև մի բնական տարրի վերայ, որ

մուտ է գործել մարդկային հասարակութեան զարգացման մէջ և որ զգում է կարիք և ձգտումն ազատուելու այն նեղ վիճակից, որոյ մէջ նա գտանուում է։

Զը նայելով, որ շատ բան ընդհանուր է բոլոր դասակարգերի մէջ, էլի իւրաքանչիւր դասակարգ, մասնաւոր թէ պաշտօնական կեանքի վերայ նայում է իւր առանձին հայեցակէտից, կեանքի զանազան խնդիրները նա գնահատում է իւր սեպհական շահերի դրդմամբ և քաղաքակրթութեան իւր առանձին աստիճանի համեմատ։ Էյլենիցն ասում է, որ ամեն փոքրագոյն ճճին էլ հասկանում է և ճանաչում կեանքը համաձայն իւր տեսակէտին։ Ոչ միայն մասնաւոր անհատներին, այլ և այն հասարակական անհատներին էլ, որոնք դասակարգ են կոչուում, վերաբերում է այն գրութիւնը, թէ իւրաքանչիւրն էլ նոյանից կեանքի վերայ նայում է և նորա մասին դատում է ըստ իւր տեսակէտի։ Բայց ոչ միայն ընդհանրապէս կեանքն, այլ և մարդկութեան հասարակական կեանքն այլապէս է իրան ներկայացնում պաշտօնատարի գիտակցութիւնն, այլապէս ազատասուորի կամ գործարանատիրոջ գիտակցութիւնն, այլապէս են նորա աղնուականի կամ գեղարուեստագէտի ճանաչողութեամբ և այլն, և շատ դրաւիչ տեսարան կունենայինք, եթէ հնար լինէր աշխարհի և կեանքի բոլոր այդ բազմազան պատկերները միանուագ կարողանայինք դիտել։ Այստեղ խօսում ենք ընկերական հայեացքի մասին կեանքի վերայ։ Իւրաքանչիւր դասակարգի քաղաքական հասարակութեան նպատակի ու խնդիրների մասին կազմած գնահատութիւնն ու հայեացքն աւելի կամ պակաս մասնաւոր են, և որոշ չափով սահմանափակուած։ Բայց առանձին դասակարգերից քարոյր, քաղաքական հասարակութիւնից քարոյր կանգնած է սեռութիւնն, իբրև ամբողջն իշխող և նրան կառավարող զօրութիւն, որ իրաւանց կարգադրիչ է և իւրաքանչիւրին իւր տեղը սահմանող։ Արդէն այս կողմից երևում է զօրեղ բարձրագոյն իշխանութեան նշանակութիւնը։ Այն է՝ իշխանը ամեն դասակարգերից բարձր դիրք ունի, նա ոչ մի դասին չէ պատկանում թէև սկզբում իւր ծագումն աղնուականաց դասակարգից առած է, իւր դիրքով նա ամեն մասնաւոր շահերից բարձր է կանգնած։

Այսպէս պետութիւնն ու քաղաքական հասարակութիւնը կազմում են միութիւն, որոյ մէջ երկու դրութիւն, (սիստեմ), քաղաքականն և ընկերականն, անընդհատաբար միմեանց հետ շփում են, միմեանց հետ յարաբերութեան մէջ են։ Պետութիւնն իշխանութեան դրութիւնն է, ἐξουσία և κράτος-ը, որ ղեկավարում է բոլոր հասարակական կեանքն ու թափանցում նորա մէջ։

Հասարակութիւնն կենսական շահերի դրութիւնն է, որ զարգանում է պետութեան շրջանում և կառավարում է պետութեան օրէնքներով։ Առանց քաղաքական հասարակութեան պետութիւնն անբովանդակ ձև միայն կլինէր։ Իսկ քաղաքական հասարակութիւնն, առանց պետութեան, կներկայացնէր բազմակերպութիւն, բազմազանութիւն՝ մի հարուստ բովանդակութիւն առանց միութեան, որ կառավարում է նրան և կարգի դնում։ Այլ և թէ պետութիւնն ու քաղաքական հասարակութիւնն երկու տարբեր բաներ են, այդ ամենքի համար պարզ և հասկանալի կլինի, եթէ ամեն ոք իրան հեռևեալ հարցն առաջարկէ, ի՞նչ կմնայ, երբ որև է երկրում պետութիւնը վերջանայ, այսինքն եթէ այդ երկրի կառավարութիւնն ու օրէնսդրութիւնն անյնի այլ պետութեան ձեռք։

Ազգն իւր լեզուով և կրօնով կշարունակէ իւր գոյութիւնը։ Ընտանեկան կեանքն ըստ առաջնոյն կշարունակուի. թէև մի քանի դասակարգեր, մանաւանդ զինուորական և աստիճանաւորաց դասերը կդադարեցնեն իրանց գործունէութիւնը, բայց միւս դասակարգերը կշարունակեն իրանց նախկին կեանքը։ Այսպէս ընկերական կեանքն առանց արգելքի, որոշ չափով կշարունակուի մինչև անգամ այն ժամանակ, երբ քաղաքական պետական կեանքն էապէս կորցրած է իւր ինքնուրոյնութիւնը։ Մենք ասում ենք էապէս, որովհետև քաղաքական տարրները, զորօրինակ առանձին իրաւաբանական կարգադրութիւնք ու հաստատութիւնք, հասարակական կարգերը կմնան և կպահպանեն իրանց զօրութիւնը։ Բայց այնու ամենայնիւ իրերի կանոնաւոր և բնական վիճակն է քաղաքական սկզբունքի և ընկերական սկզբունքի միութիւնն, այնպէս որ

L'ordre politique և l'ordre sociale համաձայնութեամբ գործում են, միմեանց յարմարում և միմեանց համապատասխանում են։

Այսպէս միշտ մնում է միևնոյն մեծ ամբողջն, որ պետութիւն ենք կոչում, ինչ հայեցակէտից էլ որ զննելու լինենք նրան, թէ քաղաքական և թէ ընկերական տեսակետից։

---

## ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Ընդհանուր բարեաց վերաբերելի է բացի հասարակաց բարօրութիւնից և՝ ընդհանուր բարոյականութիւնը։ Ընդհանուր կամ հասարակական բարոյականութիւնն արտայայտուում է այն բարքի ու սովորութեանց մէջ, որոնք ընդհանրապէս պարտաւորական են ամբողջ ազգի համար և նորա մէջ գործադրելի։ Նա՝ բարոյականութիւնը պայմանաւորուում է ոչ միայն ազգի քաղաքակրթութեան և լուսաւորութեան չափով, այլ առաւելապէս մարդուս անձնական կեանքի մէջ տիրապետող բարոյական սկզբունքներով, արդարասիրութեան և սիրոյ չափով, հնազանդութեան և շիտակութեան աստիճանով, որ տարածուած է հասարակութեան մէջ, այլ և պատրաստականութեամբ դէպի զոհաբերութիւն հասարակաց օգտի համար։ Հասարակական բարոյականութիւնը ընորոշ կերպով արտայայտուում է հասարակութեան զանազան դասակարգերի փոխադարձ յարաբերութեանց մէջ, այստեղ պէտք է ուշք դարձնել նորա վերայ թէ արդեօք նոցա տարբերութեանց հետ միասին, կայ նոցա մէջ և՝ պատշաճաւոր հաւասարութիւն, այնպէս որ հասարակութեան բոլոր դասերը համերաշխ լինին միմեանց հետ և կապուած մի և նոյն մարդասիրական և հայրենասիրական գիտակցութեամբ, թէ հասարակութեան մի քանի դասակարգերը ճնշուած են միւսներից կամ թէ վերջապէս դասակարգական տարբերութիւնը ջնջուել են անտարբեր հաւասարութեան մէջ, այնպէս որ իւրաքանչիւր ոք անտարբերութեամբ վերաբերուում է դէպի ամբողջն, հոգում է բացառապէս իւր մասին։ Այսպիսի հասարակութեան մէջ պահպանուում է էլի միայն տարբերութիւնն ունևորի և չքաւորի մէջ և անձնաւորութեան արժանիքը գնահատուում է և չափուում հարստութեամբ։ Հասարա-

կական յարաբերութիւնն արտայայտու�մէ այն համեմատական յարաբերութեան մէջ, որ գոյանուում է աշխատանքի և զուարճութեան մէջ. նա զանազան տեսակի է լինում նայելով, թէ արդեօք աշխատասիրութիւնը, միացած չափաւորութեան հետ զուարճութեանց մէջ, ազգի ընդհանուր տիրապետող առաքինութիւնն է կազմում, թէ նորա մէջ աւելի տիրապետում է զուարճասիրութիւնն ու ձգտումն դէպի վայելքներ և ճոխութիւն: Բայց ամենից աւելի հասարակական բարոյականութեան ընաւորութիւնն որոշ կերպով արտայայտուում է նրանով, թէ ինչպէս են վերաբերուում անհատները դէպի ամբողջ հասարակութեան կարգերն ու հաստատութիւններն և այստեղ հարկ է ուշք դարձնել նորա վերայ, թէ արդեօք ճանաչուում է և պահպանուում ընտանեկան կեանքի և ամուսնութեան սրբութիւնը, թէ գերդաստանական կեանքը մեծ մասամբ խախտուած է. արդեօք հեշտութեամբ կատարուում են և լուծուում պսակներն. արդեօք անառակութիւնն ընդհանրացած երևոյթ է և անարգուում է արդեօք նա հասարակայ կարծքի կողմից. արդեօք պոռնկութիւնը շատ տարածուած է մեծ քաղաքներում, արդեօք իրաւանց կարգերն և իշխանութեան հեղինակութիւնը յարգուում են, թէ աւելի տիրապետող է աղատամտութիւնն, որ ոչ մի հեղինակութիւն չէ ճանաչում, այնպէս որ իւրաքանչիւր ոք գործում է, ինչ կամենում է, իսկ թոյլ կառավարութիւնը տանում է այդպիսի քմահաճութեանց. արդեօք յաճախ են պատահում օրինազանցութիւնք և եղեռնագործութիւնք. արդեօք ազգը ներշնչուած է եկեղեցու դաւանութեամբ, թէ նրա մէջ աւելի տիրապետող են անհաւատութիւնն, անտարբերութիւն ու թեթևամտութիւնը: Երբ որ խզուում են կապերն, որոնք կապում են անհատներին այս հասարակական հաստատութեանց հետ—առաջ է գալիս ազգերի անկումն:

Անշուշտ պետութիւնը վերոյիշեալներից շատ բան ոչ կարող է պատուիրել և ոչ էլ արգիլել: Բայց պետութիւնը կարող է և պարտական է հասարակական բարոյականութեան զարգացման ու ամրանալուն նպաստել: Բարուց և պետութեան օրէնքների մէջ

կայ փոխադարձ ներգործութիւն։ Ինչպէս որ բարքը ներգործում է օրէնսդրութեան վերայ, այնպէս էլ օրէնքները ներգործում են բարուց վերայ (Մոնտեսկիէ)։ Այսպէս զորօրինակ անշուշտ աւերիչ և վնասակար ազդեցութիւն պիտի գործեն բարոյականութեան վերայ այն օրէնքներն, որոնք փոխանակ դժուարացնելու ամուսնութեան լուծումն, շատ և շատ թեթևացնում են այն, ինչպէս և քաղաքական ամուսնութեան օրէնքներն, որոնք իրանց ձևակերպութիւններով կարծես յորդորում են, որ մարդիկ հրաժարուին եկեղեցական պսակագրութիւնից, իբրև անբնական և անտարբեր սովորութիւնից։ Որովհետև բազմութիւնն (ամբոխը) նայում է, թէ ինչ է վարդապետում պետութիւնն և ինչ սրբագործում է, իբրև չափ և կանոն, և իրան բարոյապէս արդար է համարում, երբ գործում է պետութեան օրէնքներին համաձայն։ Պետութիւնը ներգործում է յօգուտ բարոյականութեան դրական եղանակով, երբ նա հովանաւորութիւն և օգնութիւն է ցոյց տալիս քրիստոնէական եկեղեցուն և քրիստոնեայ դպրոցին և գործում է յօգուտ բարոյականութեան բացասական կերպով, երբ դիմադրում է հասարակական գայթակղութեանց։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ քրիստոնեայ պետութիւնը պէտք է հովանաւորէ քրիստոնէական աստուածպաշտութեան։ Թէպէտ պետութիւնը յարգում է անհատական ազատութիւնը, բայց և այնպէս նա պէտք է կարգադրութիւնք անէ կիւրակի և տօն օրերի վերաբերութեամբ, պէտք է արգելէ առևտուրն ու աղմկալից երթևեկութիւնք աստուածպաշտութեան ժամանակ և դադարեցնէ թատրոնական ներկայացումներն ու հասարակական զուարճութիւնքը պահոց ժամանակ։ Երբ ժամանակակից պետութիւնը ջնջում է կամ անզօր է անում այն կարգադրութիւնք, որոնք ժամանակի ընթացքում պատուաստուել ու միացել են ազգի կեանքի հետ, զորօրինակ ընդհանուր ապաշխարանաց և աղօթքի օրերում, որոնք նշանակած են ազգային յանցանքների ու Աստուծոյ դատաստանի գիտակցութիւնը զօրացնելու համար, նա թոյլ է տալիս հասարակական զուարճութիւնք. վերոյիշեալ այսպիսի կարգադրութեանց ջնջումն և չը պահպանելը կարելի է պատճա-

ռակարգել միայն այնպիսի մարդասիրութեան տեսակէտով, որ հակառակ է բոլորովին կրօնին, մարդասիրութեան, որ կարծում է, թէ նա չը պէտք է զրկէ ազատութիւնից այն մարդոց, որոնք օտար են եկեղեցուն և չեն կարող առանց զուարճութեանց մնալ և աւելի ծանրակշիռ ու կարևոր է համարում հաճոյանալ այդ մարդոց քան թէ պաշտպանել գայթակղութիւնից բնակչաց այն մասն, որ քրիստոնէութեամբ ներշնչուած է և դէպի սա տրամադրուած։ Նոյն տեսակէտն է ազդողն, որ պետութիւնն, գոլով տէր և գործադրիչ երկաթուղիների, ոչ միայն ընդհանրապէս կիրակի օրերն, այլ և աստուածպաշտութեան ժամերին թոյլատրում է երկաթուղիական երթևեկութիւնը և սոցա հետ կապուած բոլոր գործունէութիւնն և այսպէս թուլացնում է և խախտում ազգային գիտակցութեան մէջ յարգանքը դէպի Տիրոջ նուիրած օրն, ընդ նմին խլում է իւր մշակ դասից սորա հանգստեան օրերն, խլում է նոցա հանգստութիւն ի Տէր և շունչ քաշելու միջոցն իւր ընտանեաց մէջ։ Եթէ պետութիւնն ինքն է այդպիսի անուշադրութեան և արհամարհանաց օրինակ ցոյց տալիս դէպի կիրակի օրը, պէտք չէ զարմանալ, որ նա, շնորհիւ թոյլ և անորոշ կարգադրութեանց ոչն օրերի վերաբերմամբ, պէտք է զիջանի և այլ հանգամանքներում, զորօրինակ դաշտային աշխատանաց էլ պիտի զիջանի աստուածպաշտութեան ժամանակ։

Խղճի և իսօքի ազատութիւն տալով հանդերձ հասարակութեան պետութիւնն էլի չէ կարող թոյլ տալ, որ հրապարակաւ հայհոյուի Աստուծոյ անունն, հրապարակաւ ծաղրուի քրիստոնէական կրօնը, լինի այս բանաւոր կերպով հասարակական ժողովներում կամ թէ տպագրութեամբ։ Թէպէտ և պետութիւնը պիտի թոյլ տայ գեղարուեստին զարգանալ համաձայն իւր օրէնքներին, բայց և այնպէս նա չէ կարող թոյլ տալ, որ հրապարակաւ ի ցոյց հանդէս գրուին այնպիսի գեղարուեստական արտադրութիւնք, որոնք հասարակական բարոյական զգացմունքները շօշափում են և կամ թոյլատրել այնպիսի ներկայացումներ, որոնցով սրբապղծուում են և անարգուում սրբազան առարկաները։ Անշուշտ մի քանի դէպքերում դժուար կը լինի սահման որոշելն, որից հարկ

չէ անցնիլ և որ, յայտնի բան է, զանազան կը լինի զանազան ժամանակներում և կրթութեան զանազան աստիճաններում։ Բայց ամեն ժամանակ հարկ է ճանաչել որոշ սահմանն, որ ոչ ոք չը պէտք է անցնի։

Երբ պետութիւնը թոյլատրում է հասարակական տների (անառականոց), թղթախաղի տների գոյութիւնն և բաղդի բերմունքից կախումն ունեցող թղթախաղերն, այդպիսի պետութիւնը ղեկավարում է այն հայեցակէտով, որ տանում է դէպի գայթակղութիւն։ Այն հանգամանքն, որ պետութիւնը թոյլատրում է հասարակական տների գոյութիւնն և ենթարկում է նրանց իւր հսկողութեան, պատճառաբանում է նրանով, որ այդ դէպքում նա ղիջանում է անզիմագրելի անհրաժեշտութեան, որպէս զի կարողանայ աւելի մեծ չարեաց առաջն առնել, որպէս զի բարձր դասի կանանց ապահովէ բռնութիւնից և գայթակղութիւնից և որպէս զի տարախոխիկ հիւանդութեանց առաջն առնել կարողանայ։ Ինչ կը վերաբերի վերջին հայեցակէտին, մենք կը նկատենք միայն, որ անհնարին է պետութեան համար բարոյական պարտականութիւն համարել մեղքի համար անվտանգ տպաստանարան կանգնելը, որովհետև իւրաքանչիւր ոք ինքն իրան պահպանել պարտական է։

Դառնանք այժմ այն հայեցակէտին, թէ օրինաւոր թոյլատրուած պոռնկութիւնը պէտք է բարձր դասի կանանց գայթակղուելու վտանգից ազատելուն ծառայէ և իբրև թէ սորա համար անհրաժեշտ է առանձին դաս այնպիսի կանանց, անշուշտ բնակիչների ստորին և ամենաչքաւոր դասից, որոնք անձնատուր լինէին մեղքին և նշանակուէին խայտառակութեան անօթ լինելու։ Այս հայեացքը բոլորովին վերագարձնում է մեզ դէպի ազգերի հեթանոսական հայեացքը, ազգերի, որոնք այլ կոչումն չունէին բայց եթէ իրանց մարդկային արժանաւորութիւնը պարտական պիտի լինէին զոհելու յոգուտ այլ բարձր գիրք ունեցող անձանց։ Բայց քրիստոնեայ պետութիւնը պէտք է վճռական կերպով դիմադրէ այդպիսի հայեացքին։ Ընդհակառակն նա իւր կոչումն պիտի համարէ ամեն կերպով հոգալն, որպէս զի քաղաքական հա-

սարակութեան մէջ չը գտանուին վերոյիշեալ թշուառ և զզուելի կին արարածներն, որոնցից շատերն այդ պարապմունքին անձնատուր են լինում չքաւորութեան և կարիքի պատճառով. ուստի և այս մեր քննութեան առարկայ եղող խնդիրը սերտութեամբ կապուած է մշակների և պրոլետարիատի խնդիրների հետ, որոնց մասին վերևը խօսեցինք: Ներքին քարոզութեան համար կազմուած քրիստոնէական ընկերութիւնք փոքր ինչ արդիւնք ցոյց են տուած թէ այդ բարոյական անկման առաջն առնելու և թէ անկեալներին վերկելու վերաբերմամբ, թէև չարեաց մեծութեան հետ համեմատելով այդ ընկերութեանց գործունէութեան հետևանքները շատ և շատ նուազ են: Բայց եթէ պետութիւնը մինչև անգամ մոռածելիս լինէր, որ ինքն այդ վերաբերմամբ ոչինչ չէ կարող անել—յամենայն դէպս նա չը պէտք է յայտնապէս կազմակերպէր կանանց այդպիսի դաս: Մանաւանդ նա չը պէտք է հաստատէ այն օրինօք ինչ ձևով էլ լինի, ինչպէս այդ անում է ֆրանսիական կառավարութիւնն, որ որոշեալ գումարի համար տալիս է այդ արհեստով պարապելու արտօնագիր և որանից ստացած հարկերով իւր դրամական վիճակն է բարելաւում: Մեզ կարող են առարկել, որ հասարակական տների ջնջմամբ և կանոնաւորուած պոռնկութիւնը վերջացնելով, ինքն անբարոյականութիւնը չի վերանալ: Նկատողութիւնն անշուշտ արդար է, բայց նա չունի նշանակութիւն այն խնդրի վերաբերմամբ, որոյ մասին է մեր խօսքը: Որովհետև խնդիրը նորա մասին չէ, թէ արդեօք կառավարութիւնը պէտք է իւր կողմից արտաքսէ աշխարհից անբարոյականութիւնն, այլ այն մասին է, թէ արդեօք վայել է նրան խեղաթիւրել բարոյական գաղափարները ժողովրդի մէջ, ունի՞ արդեօք նա այս անելու, կանոնելով անբարոյականութիւնը, փոխանակ դատապարտելու մեղքն իբրև մեղք: Դեռ Լիւտէրն առաջ բերեց խնդրի այս երեսն և այդ առարկայի վերաբերմամբ հետևեալ կարծիքը յայտնեց. «Հեթանոսական պէտք է համարել այն կառավարութիւնքն, որոնք թոյլատրում են այդպիսի տների (անառականոց) գոյութիւնը:

Բայի դրանից հասարակական բարոյականութիւնն ընկնում է, երբ պետութիւնը թոյլ է տալիս, որ թղթախաղի տները գոյութիւն

ունենան, ուր թուղթ խաղացողները կորցնում են բոլորն, ինչով թէ իրանց և թէ իրանց ընտանեաց գոյութիւնը պիտի պահպանէին և կրքից յափշտակուած աշխատում են միմեանց անանկացնել, հարստութիւն ձեռք բերելու համար։ Հասարակական բարեկեցութիւնը խանգարուում է և նրանով, որ պետութիւնը, թէև արգելում է թղթախաղի մասնաւոր տների գոյութիւնը, բայց ինքը կազմում է վիճակախաղեր, կարծես հրաւիրում է, որ աշխատեն անբարոյական ճանապարհով հարստութիւն ձեռք բերելու և այսպէս աշխատում է իւր դրամական վիճակը բարելաւելու։ Գոյք ձեռք բերելու բարոյական ճանապարհը աշխատանքն է, որովհետև միայն նա «ով կամենում է աշխատել, իրաւունք ունի ուտելու»։ Եւ եթէ յիրաւի մեզ բաժին ընկնում է գոյք, դա պէտք է մեզ տաւած լինի, բայց հարկ չէ ջանալ ստանալու այն առանց աշխատանքի, ճիգն թափելով ամենատեսակ արհեստական միջոցներով բերմունքն յօգուտ իւր անելու և կամ բաղդի հեթանոսական կայր չաստուածուհուն մաղթելու։ Դատապարտելի է վիճակախաղը նրանով, որ փոխանակ աշխատելու և խոնարհութեամբ ապասելու Նախախնամութեան մեզ ուղարկած շնորհ ու պարգևներին, մարդիկ արհեստական կերպով կազմում են բաղդի անիւն և այսպէս մի քանիսը վաստակում են, իսկ շատերը ստիպուում են կորուստ ունենալու։ Վիճակախաղի վնասակար ազդեցութիւնն առաւելապէս արտայայտուում է մշակ դասի վերայ, որ հեշտութեամբ անճնատուր է լինում փորձութեան և փոխանակ աշխատելու իւր բաղդը փորձում է վիճակախաղի մէջ, որպէս զի դրա միջոցով յաջողի բարելաւելու իւր վիճակը։ Նկատման արժանի է այն, որ պետութիւնք ինչ պատճառաբանութեամբ որ իրանց արդարացնել են ճգնում հասարակաց տների թոյլտուութեան վերաբերմամբ, նոյն պատճառաբանութեամբ աշխատում են արդարացնել պետական վիճակախաղերի կազմումն, այն է հեռաւեալ դատողութեամբ. վիճակախաղի նպատակը պէտք է լինի աւելի մեծ չարեաց առաջն առնելը, կիրքն ու հակամիտութիւնը դէպի խաղ ոչ մի եղանակով չէ կարելի ջնջել. ուստի և լաւ է նրան կանոնաւորել պետութեան հսկողութեան ներքոյ։ Այդ նոյն հակաօրինական դատողու-

թիւնն է, հիմնուած այն գաղափարի վերայ, թէ մեղքի առաջն առնելու համար, հարկաւոր է նրան կազմակերպել, կանոնաւորել, այսինքն մեղքը պէտք է մեղքի առաջն առնէ։

Վերջ ի վերջոյ պէտք է խոստովանել հեռաւեալ ճշմարտութիւնը. «բոլոր այն իմաստութիւնն, որ ձգտում է անբարոյականութիւնը ուղղել անբարոյականութեան միջոցով, փոխանակ նրան Աստուծոյ երկիւղով և աշխատասիրութեամբ արմատախիլ անելու, սխալ և կեղծ իմաստութիւն է և բոլոր այս ուղղութիւնը ջնջելի է։

(Շարունակելի)

# ԱԶԳԱՅԻՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ

### Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 18⁹⁰/₉₁ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ.

Անցեալ սեպտեմբեր ամսի 28-ին Գէորգեան Հոգևոր ճեմարանի վարչութիւնը հանդիսով տօնեց, ինչպէս իւրաքանչիւր տարի, այդ հիմնարկութեան տարեդարձը, որը տասնևեօթներորդն էր այս անգամ։ Հանդէսը կայացաւ ժամի 12-ին սուրբ պատարագից յետոյ ճեմարանի հանդիսարան դահլիճում ներկայութեամբ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի, Էջմիածնի համարեա ամբողջ միաբանութեան, տեղական պաշտօնական հիմնարկութիւնների մի քանի ներկայացուցիչների, եկուոր ուխտաւորների, ուսուցչական ամբողջ խմբի և ճեմարանի բոլոր սաների։ Հանդէսը բացեց ճեմարանի տեսուչ գերապատիւ Սարգիս եպիսկոպոսը իւր ճառով ճեմարանի անցեալի և նորա նշանակութեան վերաբերեալ։ Ապա մի յառաջաբանով գիտութեան և նրա կոչման մասին՝ ներկայացրեց ներկայ հանդիսականներին ճեմարանի տասնևեօթներորդ ուսումնական տարուայ տեղեկագիրը ճեմարանի տեսչի օգնական պ. Յովհաննէս Սաղաթելեան. որից յետոյ ճառ կարդաց ճեմարանի ուսուցիչ պ. Լևոն Մանուէլեան՝ յայտնելով այն միտքը, թէ ուսումնարանը պիտի լինի տարածող քրիստոնէական սիրոյ։ Ընդմիջումներին երգում էր ճեմարանի երգեցիկ խումբը։ Այս տարի առաջին անգամ հանդիսին մասնակցեց ճեմարանի նորակազմ՝ առ այժմ փոքրաթիւ օրկեստրը, որը մեծ տպաւորութիւն թողեց հասարակութեան վերայ։ Հանդէսը կնքեց Ամեն. Երեմիա Սրբազան Տեղակալը յորդորական խօսքերով— ուղղուած ճեմարանի վարչութեան, ուսուցչական խմբին և նորա սաներին։

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍԱՐԳԻՍ ՍՐԲԱԶԱՆԻ ՃԱՌԸ·

### Սրբազան հարք և պատուական հանդիսականք՝

Մայր Աթոռոյս հոգևոր ճեմարանը այսօր ուրախութեամբ տօնախմբումէ՝ տօնումէ իւր գոյութեան 17-րդ ամաց տարեշրջանը· մի տարեշրջան՝ որ ինչպէս մատաղերամ ճեմարանի սանուց համար՝ նոյնպէս Ս· Էջմիածնի Սրբազումար Միաբանից և բոլոր հայ ազգութեան համար մի նշանաւոր ուրախութեան և խնդութեան տարեշրջան է։

Երջանկայիշատակ Տ· Գէորգ հանգուցեալ Հայրապետը՝ այս ազգային մեծ հաստատութեան հիմն ձգելուն միջոցին՝ Նորա ազգին ընձեռելի ապագայ բարիքն աչքի առաջ ունենալով՝ թէ ինչ քաղցր՝ թէ ինչ գեղեցիկ՝ թէ ինչ վսեմ և հեռատես խորհրդածութիւններով և յոյսերով էր ինքն իրեն մխիթարում ու զուարճացնում՝ ամենքիս յայտնի է և տարակուսանաց տեղի չունի· և այս շատ բնական է· երբ որ մարդս ինքն իրեն մտածումէ՝ որ մի առաքինական գործ է կատարել՝ մի Աստուածահաճոյ ձեռնարկութիւն է յառաջ բերել՝ կարծես թէ մի գերբնական հոգեվայելութեան և երազի մէջ է ընկնում՝ երևակայելով նորա օգուտներն ու պտուղները՝ որ պիտի արտադրէ այդ Աստուածահաճոյ ձեռնարկութիւնը։ Պէտք է խոստովանել՝ որ ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Հայրապետն շատ լաւ ըմբռնեց ժամանակի պահանջը և իւր սիրելի ազգին կարիքը· նա իմացաւ օգուտ քաղել հանգամանքից և կանգնեց ահա՛ ինչպէս տեսնումէք սոյն այս բարոյական գիտութեան բարձրատանը—ճեմարանը՝ հայ ազգութեան կենդրոնի շուրջ՝ ամենի սրտին մօտիկ Հայաստանի Մայր Աթոռ Ս· Էջմիածնի հովանոյն ներքոյ։ Մեծագործ Հայրապետի նպատակն էր՝ ճեմարանը հաստատելով հայ ազգութեան համար մի բարձր՝ մի գերակատար ուսման՝ գիտութեան և բարոյականութեան սրբավայր տաճար հաստատել՝ մի լուսապայծառ փարոս կանգնել՝ որոյ ճառագայթիցն հոլեր շատ հեռու պիտի ծաւալէին իւրեանց պայծառ լոյսը՝ և շատ հեռու տեղերից ականողների աչքերը պիտի խաղաեցնէին։

Հանգուցեալ Հայրապետի նպատակն էր՝ որքոյ հօրն մերոյ Գրի-

գոր Լուսաւորչի զաւակները ի մի կենդրոն բարոյական կրթութեան ժողովելով՝ ճշմարիտ կրօնասիրութեան և Աստուածպաշտութեան եռանդն արծարծել, նոցա միտքն ու հոգին սնուցանելով Հայաստանեայց—Առաքելական եկեղեցւոյ մաքուր, անարատ և անխարդախ կաթամբ, որով և պատրաստել հայ եկեղեցւոյ և ազգութեան համար անպարտելի ախոյեաններ, ընտիր և արթուն հովիւներ, քաջաքարոզ և ճարտարաբան քարոզիչներ, բարոյական, անխոնջ և իմաստուն ուսուցիչներ և դաստիարակներ. նորա միտքն ու նպատակն էր՝ վայրավայրին դան ցիր եղած ազգն հայոց ի մի կենդրոն սիրոյ և արենակցութեան ժողովելով՝ ջերմեռանդն կրօնասիրութեան և Աստուածսիրութեան հետ ազգայնութեան և ս. կրօնի կապ կամ՝ գաղափար ամրապնդել և անքակտելի սիրով միաւորել Հայաստանի Մայր-Աթոռ ս. Էջմիածնի հետ, որոյ մէջ միմիայն կարող էր և պիտի լինի մեր ազգի և եկեղեցւոյ ապագայ բարօրութեան և փրկութեան յոյսը. և վերջապէս հանգուցեալ Հայրապետի նպատակն էր կենդանի նահատակ ս. Լուսաւորչի շնորհաբաշխ աջոյն հովանոյն ներքև բարձր գիտութեան, ուսման և բարոյականութեան լոյս ու յոյս ծաւալել ընդհանուր հայ ազգութեան սրտից և հոգւոյը մէջ. որով և Հայաստանեայց ս. եկեղեցին, որ ժամանակների բնութիւնից և դառնութիւնից փոքր ինչ խամրայեալ էր՝ վերստին փառազարդ յարդարել արմատաքի կամ բոլորովին հալածելով տգիտութեան խաւարը, որից յառաջ եկած են ախտաւոր դէպքերը և տակաւին յառաջ են գալիս, որ ամեն մի հայ սրտի վիշտ է պատճառում։

Այժմ տեսնենք՝ թէ հանգուցեալ Հայրապետի եռանդուն յոյսերը որ չափով և որքան պատկուած ենք տեսնում Մայր-Աթոռոյս ՀԵմարանի հիմնելու նպատակին վերաբերմամբ։ Պէտք է խոստովանել ճշմարտապէս՝ թէ երջանկայիշատակ Հայրապետի յոյսերը թէև պատկուած են տեսնուում ըստ մեծի մասին, բայց տակաւին թերի է նա մի էական հանգամանքում։ ՀԵմարանը թէև տուած ունի հայ ազգութեան և եկեղեցւոյ ընտիր անդամներ, գործունեայ և փորձառու վարժապետներ, ուսուցիչներ և դաստիարակներ, բայց չունի տուած տակաւին քաջարթուն հովիւներ, ճարտարաբան

քարոզիչներ և որ մեծն է՝ ՀԵՄԱՐԱՆը իւր 17 րդ տարեշրջանում չը կարողացաւ գրաւել ցայսօր հայ ազգի սէրն ու համակրութիւնը։ Իմ խնդարկ կարծեցաց կարող է լինել ապացոյց այն, որ ցայսօր ժամանակի մեր ՀԵՌՆԿԱՍ սիրելի համազգիներից ոչ ոք ուշք չը դարձրեց, ոչ ոք չը մոռածեց ՀԵՄԱՐԱՆի վիճակը նախանձելի առնել, նորա վիճակը ապահովել։ Ի ՏԷՐ հանգուցեալ ԳԷՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ իւր ՀԵՌԱՏՈՒՆԿ բարոյական բուրաստանը իւր կենդանութեան միջոցին հայրական գթով խնամարկելից յետոյ՝ իւր արդիւնալից կեանքը կնքեց։ Արբազան Հայրապետի մահուանից յետոյ ՀԵՄԱՐԱՆի բաղդն յանձնուեցաւ կամ լաւ ևս ասել ծանրացաւ Ս. ԷՋՄԻԱԾՆի սրբակրօն միաբանութեան վրայ. նոյն միաբանութիւնը սրբութեամբ պահպանելով այդ ազգային անգին աւանդն իւր կարգով կանոնով յանձնեց նորընտիր Հայրապետ Մակար կաթուղիկոսի (այժմ հանգուցեալ) ձեռքը։ Նորին Ս. Օծութիւն երջանկայիշատակ Հայրապետն անդադար հոգ և խնամք ունեցաւ նորա յաւաջադիմութեան և բարոյական զարգացման վրայ և իւր վշտալի հայրապետութեան օրով ծանրագոյն հոգսերից մէկը կազմում էր ՀԵՄԱՐԱՆի կառավարութիւնը և խնամքը, իսկ այժմ որովհետև սա ևս չը կայ ի միջի, ըստ որում Աստուածային նախատահմանութեան հաճոյ թուեցաւ կոչել իւր մօտ իւր սիրելի կամարարը, մեզ թողլով որբ, ուստի այդ մեծ հիմնարկութեան հոգն ու խնամքը դարձեալ ծանրանում է նոյն Ս. ԷՋՄԻԱԾՆի սրբակրօն միաբանութեան վերայ, որոյ գլուխ կանգնած Արբազան ՏԷՐ ՏԷՂԱԿԱԼը և ԱՆԴԱՄ ՍԻՆՕՂԻ քաղցր պարտականութիւն իւրեանց են ճանաչում այդ ազգային անգնահատելի աւանդն նոցին կարգով և կանոնով պահպանելով հասուցանել նորընտիր Հայրապետի ձեռքը, որին նախատահմանութիւնը կընտրէ և կառաջնորդէ։

Ս. ԷՋՄԻԱԾՆի ՀԵՄԱՐԱՆին հոլանի կայ հայրապետական թագն ու գաւազանը, իսկ հայրապետական թագին և գաւազանին հոլանի կայ ԱՆ ԱՆեղին, ուրեմն կեցցէ՞ Հայրապետութիւն Հայոց և ՀԵՄԱՐԱՆ։

## Պ. ՍԱՂԱԹԵԼԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ.

### *Օրբաղան հայրեր և յարգելի հանգիստականներ,*

« Եւ բնակեալ ի կեանս խուրեանց, որպէս ի
« թանձրամած խաւարի.... հոգեքն կալեալ ի
« մարմնոյ որպէս կենդանի ի դերեզմանի....»

*Այս գեղեցիկ և մեծիմաստ խօսքերը, որ Եղիշէն ասում է նրանց մասին, որոնք ընկղմած էին հեթանոսական մոլութիւնների մէջ, բոլոր իրաւամբ կարելի է վերաբերել ագիտութեան խաւարի մէջ ընկղմածներին: Եւ ես չէի կարող աւելի յաջող բնաբան բերել իմ այսօրուայ զեկուցման, որի մէջ մտադիր եմ նախապէս մի քանի խօսք ասել գիտութեան նշանակութեան մասին. որովհետև այս տօնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ գիտութեան տօն, միայն համեստ սահմանների մէջ,*

*Մեր սերունդը իրեն համեմատաբար կարող է բաղդաւոր համարել նախկիններից: Այժմ մեր ժողովրդի բոլոր տարրերը ցոյց են տալիս մեծ հակումն դէպի եւրոպական կրթութիւնը, մեծ մասամբ կարծես ինստինկտաբար զգալով նրա փրկարար զօրութիւնը, մինչդեռ ուրիշ ասիական երկիրներում մտածող և լուսաւորուած մարդիք տանջւում են, թէ ինչպէս գիտութեան պահանջ ստեղծեն. այն աստիճան զօրեղ է նրանց ժողովուրդների մէջ հակաքաղաքակրթական նախապաշարմունքները: Կրկնում եմ որ այդ կողմից մեր ներկայ սերունդը ժողովրդի բոլոր խաւերում մեծ քայլ է արել դէպի յառաջադիմութիւնը: Մեր հասարակութեան մտածող մասի հոգսը այն չէ, թէ ի՞նչ միջոցներով մաքառել գոյացած նախապաշարմունքների դէմ, որոնք դիմադրում են գիտութեան մուտքին, այլ բոլորովին հակառակը — ուրիշ հոգս, թէ ինչ ինչ միջոցներով հնար գտնել բաւարարութիւն տալու ամեն տեղ լայնածաւալ չափով նկատուող ձգտման դէպի ուսումը:*

*Եւ այդ բուռն ձգտումը դէպի գիտութիւնը ամենալաւ որոշիչն է մեր ազգի բաղդի: Այժմ ոչ մի ոյժ, նոյն իսկ քաղաքական զօրութիւն չի կարող պաշտպանել մի ժողովուրդ վերջնական անկումից շատ անգամ նոյն իսկ կորստից, եթէ նա համառում է մնալ*

եւրոպական քաղաքակրթութեան հոսանքի մէջ։ Աւելորդ եմ համարում օրինակներ բերել պատմութիւնից և ներկայից։ Նոքա բազմաթիւ են և մեծ մասամբ ի հարկ է Ձեզ յայտնի։ Եւ ճշմարիտ, ինչպէս մարդ, ինչ ասպարէզում էլ նա լինի, կարող է արժանի լինել իրեն կոչման, այսինքն տէր լինել բնութեան մէջ, եթէ նա բոլորովին զուրկ է գիտութեան լոյսից։ Այս ճշմարտութիւնը, կրկնում եմ անողոքելի է ամեն տեսակէտից և նրան ենթակայ է իւրաքանչիւր ասպարիզի մարդ։ Բայց, Արբազան հայրեր, գիտութիւն, ուսում ասելով, ես աչքի առաջ ունեմ նոցա եւրոպական մտքով։ Շատ անգամ գիտութեան անունով նրան աղաւաղումն են առաջարկում իբրև սովորելու նիւթ, կամ նրա անջատուած մասերը, այսպիսի դէպքում աչքի առաջ ունենալով ոչ թէ ուսման կոչումը և նպատակը, այլ ընդհակառակը ուսումը ծառայեցնելով ուրիշ անարժան նպատակների։

Իսկական գիտութեան, եւրոպական գիտութեան, նպատակն է ամենից լաւ ծանօթացնել մարդուն բնութեան և տիեզերքի հետ։ Արդեօք գիտութիւնը վերև յիշուած ծաւալով չէ՞ անհրաժեշտ եկեղեցուն ընծայուող, կամ եկեղեցական ուսումնարաններում կրթուող մարդկանց համար։ Նախախնամութեան արտայայտութիւնը բայի զուտ կրօնական աղբիւրներից էլ ինչո՞ւմ պիտի փնտուել, եթէ ոչ բնութեան և տիեզերքի օրէնքների մէջ, որոնց ուսումնասիրութեամբ հիմնովին կարելի է պարզել այդ մասին վերաբերեալ խնդիրները։ Այդ այժմ լաւ ըմբռնել է աստուածաբանական գիտութիւնը և ընդարձակ կերպիւ օգտուում է միւս գիտութիւններից։ Այդ դեռ գիտութեան մի լուսաւորեցուցիչ կողմն է։

Գիտութիւնն է տալիս, Արբազան հայրեր, մարդուն օգտուել բնութեան ոյժերից անսահման կերպիւ, մինչդեռ նա առաջ սարուկ էր այդ ոյժերի։ Բաւական է յիշեցնել միայն մի քանի փաստեր։ Այժմ մարդը յաղթել է ժամանակին և տարածութեանը։ Դուք մի քանի վայրկեանում կարող եք Ձեր միտքը յայտնել երկրագնդի վերայ Ձեզանից ամենահեռաւոր կէտում գտնուող մարդուն, մի քանի օրով անցնել այնքան տարածութիւն, որի համար առաջ տարին քիչ էր։ Ով տուեց մարդուն տեղեկութիւն բնութեան այդ

ոյժերի մասին, որոնց նա այժմ ծառայեցնում է իւր նպատակներին, մինչդեռ նա առաջ սարսափով էր վերաբերուում դէպի նոցա և շատ անգամ իւր ստուածը շինում ու պաշտում։

Գիտութիւնն է պարզում մարդուն, որ անհատի երջանկութիւնը սերտ կապուած է հասարակութեան հետ և հենց դրա պատճառաւ անհատը պիտի աշխատի օգնել հասարակութեան լաւ կազմակերպելուն։ Նայեցէք մի կողմից եւրոպական միւս կողմից ուրիշ երկիրների հասարակութիւնների վերայ։ Մինչդեռ առաջիններում մարդու կեանքը, պատիւը, խիղճը գոյութեան միւս հանգամանքները դրուած են ամենալաւ պայմանների մէջ և հաստատութիւնները յարմարեցրած մարդկային բնութեան պահանջներին, միւսներում մարդկային անձնաւորութիւնը ճնշուած է սպանիչ հակաբնական պայմանների մէջ, քիչ չեն տեղեր, ուր մարդը դեռ ստրուկ է, իսկ շատերում ամենատոր կրքերի համար չի դադարում հոսուել մարդկային արիւնը։ Ինչո՞ւ են այդ ազգերը այդքան յետ մնացել եւրոպացիներից, չէ՞ որ այդ եւրոպացի ազգերի նախահայրերին լաւ յիշում ենք, թէ ինչպէս նոքա նոյնպէս կիսավայրենի դրութեան մէջ էին։ Պատճառը պարզ է։ Մինչդեռ եւրոպացի ազգերի մտածող մտքերը ոչ մի զոհողութեան առաջ չէին կանգնում մարդկային մտքի զարգացման ճանապարհը բաց անելու համար, միւսներում աշխատում էին ամեն հնարքով միանգամայն ընդ միշտ փակել այդ ճանապարհը։ Եւ հետեւանքը ինչ եղաւ։ Այդ ազգերը ոչ թէ մնաւորապէս միայն յետ մնացին, այլ վերջ ի վերջոյ պիտի դառնային եւրոպացի ազգերի հպատակներ։

Գիտութիւնը, կը նշանակէ, վեհայնում է մարդուն և արժանի անում նրան իւր կոչման։ Եթէ այդ այդպէս է, Արբազան հայրեր, իրաւացի՞ կը լինի եթէ ուսումնական հիմնարկութիւնների մէջ նրա մասերը, կտորները միայն աւանդուին,— կամ թէ նրա լուսով լուսաւորուած լինին հասարակութեան մէջ սահմանափակ թուով անհատներ, իսկ նրա միւս խաւերը ընկղմած լինին խաւարի և թշուառութեան մէջ։ Եւ կարելի՞ է այդ ձևով օգնել մի հասարակութեան, տանել նրան դէպի յառաջադիմութիւնը։ Ես մի րոպէ չեմ կասկածում Ձեր պատասխանին այս հարցի վերաբերմամբ։ Եւ համոզուած

եմ՝ որ մեր հասարակութեան մնածող և արժանաւոր մասի ցանկութիւնը կարտայայտեմ՝ եթէ ասեմ՝ որ ուսումնարանը կոչուած է տարածել գիտութիւնը՝ որքան կարելի է լայն ծաւալով՝ որքան հնար է լայն շրջանում։ Եթէ այսպիսի պահանջ աչքի առաջ ունենալով դառնանք նայելու մեր ժողովրդի վերայ՝ ի՞նչ ողբալի տեսարան կը բացուի մեր առաջ։ Մենք կը տեսնենք՝ որ նրան ծածկում է ընդարձակ և թանձր խաւար՝ որի մէջ դանդաղ կերպիւ փայլում են լոյսի աղօտ նշոյլներ։ Այդ մեր երկրում գտնուած սակաւաթիւ ուսումնարաններն են։

Ուսումնարանը մեզանում ունի մի այլ կոչում։ Մեր ժողովրդի արտաքոյ կենցաղը՝ պահանջների ստիճանը՝ վերջիններիս բաւարարութիւն տալու միջոցները՝ արդիւնաբերութեան ձևերը դեռ ամենաողորմելի դրութեան մէջ են։ Նրա մեծամասնութեան ընակավայրը որջի է նման՝ իսկ ապրուստը ցաւելու միայն արժանի։ Ո՞վ կարող է նրան տեղեկութիւն տալ աւելի լաւ կենցաղի մասին և նրան իրագործելու միջոցների մասին՝ եթէ ոչ ուսումնարանը։ Ուրեմն ուսումնարանը մեզանում եւրոպական գիտութիւնների հետ պիտի տարածի տեղեկութիւններ և եւրոպական կուլտուրայի մասին։ Մենք կը ցանկանայինք՝ որ մեր հասարակութեան կրթութեան ղեկավարները և նրա մտածող մասերը ամենախիստ կերպով պահանջէին ուսումնարանից՝ որ նա ծառայի իւր այդ վեհ նպատակին։

Այս կարճ յառաջաբանից յետոյ՝ որով մեզ գուցէ չաջողուեց մեր ցանկացածի չափով յայտնել մեր գաղափարները գիտութեան մասին՝ կանցնենք Տեղեկագրին Դէորգեան ձեմարանի 17-երրորդ տարուայ ուսումնական տարեշրջանի՝ որը սկսուել է և բաւական չափ ժամանակ շարունակուել ուրիշ վարչութեան օրով։

## ՅՈՒՅԱԿ ՀԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹՈՒԻ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐԻ։

*Հեմարանը բաղկացած էր ինչպէս և առաջ 4 դպրոցական դասարաններից և 3 լսարանական՝ որոնց մէջ աշակերտները զետեղուած էին հետևեալ կարգով։*

| | | | |
|---|---|---|---|
| Գ-դ դաս. | 30 աշ. | *I* լսարան | 10 ուսանող. |
| Դ-դ դաս. | 23 աշ. | *II* լսարան | 12 ուսանող. |
| Ե-դ դաս. | 18 աշ. | *III* լսարան | 12 ուսանող։ |
| Զ-դ դաս. | 22 աշ. | | |

*Ըստ բնակութեան տեղի հետևեալ կերպով էին բաժանուում աշակերտները։*

### I ՌՈՒՍԱՍՏԱՆ։

#### ա. ԵՐԵՎԱՆԻ ՎԻՃԱԿ։

| | | |
|---|---|---|
| Ղամարլուեցի | 1 | աշ. |
| Էրատիինցի | 1 | » |
| Քալարեցի | 1 | » |
| Ալեքսանդրապոլցի | 17 | » |
| Մահմուտջուղցի | 2 | » |
| Հին-Նախիջևանցի | 1 | » |
| Ագուլեցի | 2 | » |
| Մեղրեցի | 3 | » |
| Յղնացի | 2 | » |
| Բռնակոթցի | 1 | » |
| Դէօրիսցի | 1 | » |
| Վաղարշապատցի | 7 | » |
| Օշականցի | 1 | » |
| Աշտարակցի | 2 | » |
| Մարգարեցի | 1 | » |
| Իգդիրցի | 1 | » |
| Ղազանֆարցի | 1 | » |
| Կարսեցի | 7 | » |
| Թազագիւղցի | 1 | » |
| Խլի—Ղարաքիլիսեցի | 1 | » |
| Դեմիրակլուեցի | 1 | » |
| Սաչլուեցի | 1 | » |
| Համամլուեցի | 1 | » |
| Աղբուլաղցի | 1 | » |
| ընդամենը | 59 | աշ. |

#### բ. Վրաստանի և Իմերէթիի նահ.

| | | |
|---|---|---|
| Տփխիսեցի | 2 | աշ. |
| Դիլիջանցի | 1 | » |
| Կողբեցի | 1 | » |
| Դոշերցի | 1 | » |
| Ախալցխացի | 6 | » |
| Աղդանցի | 1 | » |
| Գանձակեցի | 1 | » |
| Բանանցեցի | 3 | » |
| ընդամենը | 16 | աշ. |

#### Արցախի նահ.

| | | |
|---|---|---|
| Շուշեցի | 4 | աշ. |
| Նորշէնցի | 1 | » |
| Մարաղեցի | 1 | » |
| Վարդաշէնցի | 2 | » |
| Հաւարիկեցի | 1 | » |
| Շուշիքենդցի | 1 | » |
| Օձնեցի | 1 | » |
| Հադրուդցի | 1 | » |
| ընդամենը | 12 | աշ. |

#### Ադրբէջանի նահ.

| | | |
|---|---|---|
| Մողոկցի | 1 | աշ. |
| Ղզարցի | 2 | » |

| | | |
|---|---|---|
| Եկատերինոդարցի | 1 | » |
| Վլադիկաւկազցի | 1 | » |
| Ընդամենը | 5 | աշ. |

Բ. Սարաբէյայ Ընտ.

| | | |
|---|---|---|
| Նոր-Նախիջևանցի | 4 | » |
| Թոխատեցի | 1 | » |
| Մեծ-Սալայեցի | 2 | » |
| Զլդրցի | 1 | » |
| Օդեսացի | 1 | » |
| Մայկոպցի | 1 | » |
| Ընդամենը | 10 | աշ. |

## II ՏԱՃԿԱՍՏԱՆ.

ա. Տաճկահայաստան.

| | | |
|---|---|---|
| Երզնկացի | 2 | աշ. |
| Սղերայի | 1 | » |
| Աւրանցի | 1 | » |
| Վանեցի | 2 | » |
| Ընդամենը | 6 | աշ. |

բ. Անատոլիա.

| | | |
|---|---|---|
| Ամիոնգարահիսարցի | 1 | աշ. |
| Գէօթահեցի | 1 | |
| Ամասիացի | 1 | » |
| Սեբաստացի | 1 | » |
| Ընդամենը | 4 | աշ. |

գ. Եւրոպական Տաճկաստան.

| | | |
|---|---|---|
| Պոլսեցի | 3 | աշ. |

դ. Կիլիկիա.

| | | |
|---|---|---|
| Ատանայի | 1 | աշ. |
| Անթափցի | 1 | » |
| Խյանեցի | 1 | » |
| Հաջնցի | 1 | » |
| Ընդամենը | 4 | աշ. |

## III Պարսկաստան:

| | | |
|---|---|---|
| Դաւրեժցի | 7 | աշ. |
| Ուաշտցի | 1 | » |
| Ընդամենը | 8 | աշ. |

*Ձեմարանի բոլոր տանները գիշերօթիկ էին, ուստանում և տպրում էին Մայր Աթոռի հաշուով բացի հեռաւեալ 7 հոգուց:*

Աղաջանեան Գրիգոր
Աւետիսեան Շաւարշ
Դրամբեան Համազասպ
Միրզայեան Սահակ
Յովսէփեան Հայրապետ
Տէր Ոսկանեան Մելիքսէթ

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՒ ՆՈՅԱ ԱԻԱՆԴԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒ ԴԱՍԵՐԻ ԹՈՒԻ ՑԱՆԿԸ·

1· Կրթ· աւանդուում է միայն Ե-րդ դասարանում 3 դասով շաբաթական: Ուսուցիչն էր արժ· Սահակ վարդապետ Բաղդասարեան· պարապել է 11 դաս, թողել է 37 դաս անյայտ պատճառով: Ամնական ռոճիկը՝ 66 ռուբլի և 66 կոպէկ, տարեկան 799 ռ· 92 կոպ·:

2· Ո—ռ—ն Ս—ը Դրոց· Գ-րդ դասարանում 3 դաս, Դ-րդ դասարանում 3 դաս, Ե-րդ դասարանում 2 դաս, Զ-րդ դասարանում 2 դաս· ընդամենը 10 դաս շաբաթական:

3· Քննաբանո—ին Ս—ը Դրոց· Ա· լսարանում 3 դաս, Բ-րդ լսարանում 3 դաս· ընդամենը շաբաթական 6 դաս:

4· Եկեղեցական Պատմո—ին· Ա· լսարանում 2 դաս, Բ-րդ լսարանում 2 դաս, Գ-րդ լսարանում 2 դաս· ընդամենը 6 դաս:

Այս երեք առարկաները աւանդում էր պ· Սարգիս Տէր-Գաբրիէլեան· պարապել է 476 դաս, թողել է 70 դաս հիւանդութեան պատճառով և 21 դաս անյայտ պատճառով: Ամնական ռոճիկը՝ 125 ռուբլի, տարեկանը 1500 ռուբլի:

5· Հայոց լեզո—· Գ-րդ դասարանում 5 դաս, Դ-րդ դասարանում 5 դաս, Ե-րդում 3 դաս, Զ-րդում 3 դաս· ընդամենը 16 դաս: Ուսուցիչն էր պ· Նիկողայոս Քարամեան: Պարապել է 402 դաս, թողել է 25 դաս հիւանդութեան պատճառով:

6· Հայոց Պատմո—ին· Գ-րդ դասարանում 2 դաս, Դ-րդում 2 դաս, Ե-րդում 2 դաս· ընդամենը 6 դաս: Ուսուցիչն էր պ· Նիկողայոս Քարամեան· ամնական վարձն էր՝ 125 ռուբլի, իսկ տարեկանը 1500 ռուբլի:

7· Հայապատմի աշխարհագրո—ին· աւանդուում էր միմիայն Գ-րդ դասարանում շաբաթական 2 դասով· ուսուցիչն էր շնորհնակ Տիգրան սարկաւագ Տէր-Յովհաննիսեան· պարապել է 38 դաս, ուրիշ ուսուցիչների տեղ պարապել է 8 դաս: Ամնական վարձն էր 25 ռուբլի, իսկ տարեկանը 300 ռուբլի:

8· Ընդհանո—ր Պատմո—ին· Դ-ում 2 դաս, Ե-ում 2 դաս, Զ-ում 2 դաս· ընդամենը 6 դաս:

9· Ռ–ոաց գրականութիւն. Ա· լսարանում 2 դաս, Բ-ում 2 դաս և Գ-ում 2 դաս· ընդամենը 6 դաս:

10· Ռ–ուսական աշխարհագրութիւն. Դ-րդ դասարանում 2 դաս:

Այս երեք առարկաներն աւանդում էր պ· Ստեփան Լիսիցեան· պարապել է 296 դաս· թողել է 10 դաս հիւանդութեան պատճառով և 21 դաս անյայտ պատճառով: Ամսական վարձն էր 115 ռուբլի, իսկ տարեկան 1380 ռուբլի:

11· Եկեղեցական մատենագրութիւն. Բ-րդ լսարանում 2 դաս, Գ-րդ լսարանում 2 դաս· ընդամենը 4 դաս:

12· Մատենագիրների ուսումնասիրութիւն. երեք լսարաններին միասին 2 դաս:

13· Հայոց մատենագրութիւն. Հինը Ե-րդ դասարանում 3 դաս, Զ-ում 3 դաս և Նորը՝ Ա· լսարանում 2 դաս· ընդամենը 8 դաս:

Այս երեք առարկաները աւանդում էր պ· Կարապետ Կոստանեանց· պարապել է 246 դաս, թողել է 70 դաս հիւանդութեան պատճառով և 21 դաս անյայտ պատճառով: Ամսական վարձը 200 ռուբլի, իսկ տարեկանը 2400:

14· Տրամաբանութիւն. Զ-րդում 4 դաս:

15· Մանկավարժութիւն. Ա· լսարանում 3 դաս:

16· Հոգեբանութիւն. Բ-րդ լսարանում 3 դաս:

17· Մեթոդիկա. Գ-րդ լսարանում 3 դաս:

18· Բարոյական փիլիսոփայութիւն. Դ-րդ լսարանում 3 դաս:

Այս հինգ առարկաներն աւանդում էր պ· Սեդրաք Մանդինեանց՝ պարապել է 352 դաս, թողել է 14 դաս անյայտ պատճառով: Ամսական վարձը 200 ռուբլի, իսկ տարեկանը 2400 ռուբլի:

19· Թուաբանութիւն. Գ-րդ դասարանում 2 դաս:

20· Հանրահաշիւ. Գ-րդ դասարանում 2 դաս, Դ-ում 1 դաս, Ե-ում 2 դաս, Զ-ում 1 դաս· ընդամենը 6 դաս:

21· Երկրաչափութիւն. Դ-ում 3 դաս, Ե-ում 1 դաս, Զ-ում 1 դաս· ընդամենը 5 դաս:

22· Բնագիտութիւն. Ե-ում 2 դաս, Զ-ում 2 դաս· ընդամենը 4 դաս:

23· Ֆիզիկական աշխարհագրությունն· Ե-ում 1 դաս։

24· Տիեզերագրությունն· Զ-ում 1 դաս։

Այս վեց առարկաներն աւանդում էր պ· Լևոն Խոջայեանց· պարապել է 319 դաս, թողել է 25 դաս հիւանդութեան պատճառով։ Ամսական վարձը 110 ռուբլի, իսկ տարեկանը 1320 ռուբլի։

25· Ֆրանսերէն· Դ· Ե· Զ· դասարաններում և Ա· Բ· Գ· լսարաններում 17 դաս։ Ուսուցիչն էր պ· Աստուածատուր Պիտանեան· պարապել է 423 դաս, թողել է 20 դաս հիւանդութեան պատճառով և 4 դաս անյայտ պատճառով· ուրիշ ուսուցիչների տեղ պարապել է 1 դաս։ Ամսական վարձը 100 ռուբլի, իսկ տարեկան 1200 ռ·։

26· Բնախօսութիւն· Դ-ում 2 դաս։ Ուսուցիչն էր արժ· Նահապետ աբեղայ Նահապետեան՝ ստանալով ընդ նմին և Տեսչութեան համար ամսական 250 ռուբլի, իսկ տարեկան 3000 ռուբլի։

27· Ընդհանուր աշխարհագրություն· Գ· դասարանում 4 դաս։ Ուսուցիչն էր պ· Դէորգ Տէր-Բարդուղիմէոսեանց· պարապել է 90 դաս։ Ամսական վարձը 75 ռուբլի, իսկ տարեկան 900 ռուբլի։

28· Ռուսաց լեզու· Գ· Դ· Ե· և Զ· դասարաններում չորս չորս դաս, ընդամենը 16 դաս։

29· Ընդհանուր գրականություն· Ա· Բ· և Գ· լսարաններում երկերկու դաս· ընդամենը 6 դաս։ Այս առարկաների ուսուցիչն էր պ· Յովհաննէս Յովհաննիսեան· պարապել է 361 դաս, թողել է 8 դաս հիւանդութեան պատճառով և 7 դաս անյայտ պատճառով։ Ամսական վարձը 125 ռուբլի, իսկ տարեկան 1500 ռուբլի։

30· Զայնագրություն· Գ· դասարանում 3 դաս, Դ-ում 2 դաս։ Ուսուցիչն էր արժ· Ղևոնդ վարդապետ· պարապել է 140 դաս։ Տարեկան վարձը 5 դասի համար 799 ռուբլի և 92 կոպեկ։

31· Տաճկերէն լեզու· ուսուցիչ և քարտուղար պ· Ռուբէն Ռուբինեան, պարապել է 112 դաս, թողել է 16 դաս անյայտ պատճառով։ Ամսական վարձը 75 ռուբլի, իսկ տարեկան 900 ռուբլի։

32· Նկարչություն· Դ· և Դ· դասարաններում։ (Ե· և Զ· դաս·) ընդամենը 6 դաս։

33· Պատմություն քրիստոնէական աշխարհի 2 դաս Ա· Բ· և Գ· լսարաններում միացեալ։ Դասատու Պ· Վարդգէս Սուրէնեան· պա-

բաղել է 132 դաս, թողել է 21 հիւանդութեան և 3 դաս անյայտ պատճառով։ Ռոճիկը 8 դասի համար 799 ռուբլի, 92 կոպէկ տարեկան։

34. Տնտէս և վերակացու՝ շնորհունակ Գարեգին տարկաւագ Յովսէփեան 300 ռուբլի տարեկան ռոճիկով։

35. Պարոն բժիշկ Զարգարեան իբրև բժիշկ ճեմարանի և միաբանութեան 1500 ռուբլի ռոճիկով։

Ուսումն սկսուեցաւ Սեպտեմբերի 6-ին, վերջացաւ Ապրիլի 13-ին. ուրեմն ընդամենը պարապել են եօթն ամիս և կէս և ուսումնական տարին ունեցել է ընդամենը 136 օր։

Հինգշաբթի Յունուարի 31-ից լսարաններումը այլ և դաս չը կար, իսկ փետրուարի 1-ից ուսանողներից շատերը ցրուեցան, նոյնպէս և ուսուցիչներից ոմանք չը յաճախեցին մի քանի օր շարունակ։

Անցեալ տարեշրջանում Յունուարի վերջերից ճեմարանի սովորական և ներքին կեանքը ընդհատուեց, յերևան եկան մեծ անբաւականութիւններ և ապա շփոթութիւններ աշակերտների մէջ, որոնց հետևանքը եղաւ արմատական փոփոխութիւններ ճեմարանի վարչական կազմակերպութեան, աշակերտների թուի և ուսուցիչների խմբի մէջ։ Երեք լսարանների ուսանողները, այն է 28 հոգի և 7 հոգի մնացած դասարաններից հեռացան ճեմարանից, թողնելով լսարաններում միայն 4 տարկաւագ և 2 ուսանող և այդպիսով ճեմարանը մնաց առանց լսարանների։ Արժանապատիւ Նահապետ աբեղան հրաժարուեց տեսչական պաշտօնից, իսկ Դերապատիւ Սարգիս Սրբազանը ժամանակաւոր կառավարիչ նշանակուեցաւ ճեմարանը խաղաղեցնելու նպատակով և ապա փետրուարի 20-ից Կաթողիկոսի կոնդակով, որը կարդացուեցաւ Մարտի մէկի Ուսուցչական ժողովի նիստում, նշանակուեց ճեմարանի տեսուչ։ Երկու ուսուցիչներ՝ պարոնայք Լիսիցեան և Խոջայեան զրկուեցան իրենց պաշտօններից, իսկ նրանց դասերը մնացած ուսուցիչները բաժանեցին իւրեանց մէջ, տեղակցութեամբ պ. Պետրոսի Սիմոնեան, որը այդ ժամանակուանից մուտք է գործում ճեմարանը՝ իբրև պատմութեան ուսուցիչ։ Իսկ բարձր. Մակար վարդապետը կարգեցաւ կրօնի ուսուցիչ։

Շփոթութիւնների օրից ընդհատուած ուսումը սկսուեց Մարտի

5-ից և շարունակուեց մինչև Զատկի տօները, պանցից յետոյ անմիջապէս սկսուեցան քննութիւնները։

## ՅՈՒՑԱԿ ՔՆՆԱԿԱՆ·

| | Թիւ աշակերտների և ուսանողների· | Արձակուածներ· | Կամաւոր հեռացածներ· | Քննուածներ են· | Փոխադրուել են· | Վերաքննութեան հանձնարկուել են և փոխուել· | Մնացել են· |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գ-դ· | 30 | » | » | 30 | 15 | 5 | 10 |
| Դ-դ· | 23 | » | 5 | 18 | 7 | 7 | 4 |
| Ե-դ· | 18 | » | 4 | 14 | 12 | 2 | » |
| Զ-դ· | 22 | 6 | 2 | 14 | 13 | 1 | » |
| Ի· լ՚· | 10 | » | 7 | 3 | 3 | » | » |
| Ի լ՚· | 12 | » | 11 | 1 | 1 | » | » |
| Ի լ՚· | 12 | » | 10 | 2 | 2 | » | » |
| | 127 | 7 (9) | 38 | 82 | 53 | 15 | 14 |

Քննութիւններից յետոյ Սրբազան տեսուչը տրմնտական վոփոխութիւններ կատարեց Ջեմարանի ուսուցչական խմբի մէջ՝ ազատ կացուցանելով իւրեանց պաշտօններից — Արժ· Նահապետ աբեղային, պ· պ· Նիկողայոս Քարամեանցին, Յովհաննէս Յովհաննիսեանին, Վարդգէս Սուրէնեանին, Դէորգ Տէր-Բարդուղիմէոսեանին և երկու սարկաւագ վերակացուների՝ շնորհունակ Տիգրանին և Գարեգնին։ Զը կարողանալով տանել մի ծանր դրութիւն, այն է՝ տեսնել լսարանների անայութիւնը և

նրա սաների թերուսում մնալը, Սրբազան Տեղակալի հաւանութեամբ Գեր. տեսուչը հրաւիրեց հեռացած ուսանողներին։ Հրաւէրն մեծ արձագանք գտաւ։ Առաջին և երկրորդ լսարանների սաները 15 թուով վերադարձան Ջեմարան, իսկ երկրորդ լսարանից 2 հոգի. մնացած երրորդ լսարանցիները իրաւունք ստացան վերջնական քննութիւն տալու։ Իսկ առաջին և երկրորդ լսարանցիները, որովհետև վերջին կիսամեակում հեռացան, վոխադրուեցան հետևեալ լսարանները պարտաւորուելով երկու դասընթացքների քննութիւն տալու այս տարի։

Աղաս կացուցած ուսուցիչների տեղ հրաւիրուեցան՝ պ. պ. Ստեփաննոս Կանայեան Հայոց պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան, Ընդհանուր պատմութեան համար. Յովհաննէսեան՝ Բնագիտութեան, Երկրաչափութեան, Հանրահաշուի և Տիեզերագիտութեան. Լևոն Մանուէլեան՝ Ընդհանուր գրականութեան և Ռուսաց լեզուի. Յ. Սաղաթելեան՝ օգնական Տեսչի և դասատու Ռուսաց մատենագրութեան ու Ընդհանուր աշխարհագրութեան. Աբովեան՝ աւագ վերակացու և դասատու Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան. Պալեան՝ Հայոց լեզուի, արժ. Սահակ աբեղայ Ամատունի՝ Հայնագրութեան դասատու, պ. բժիշկ Զարգարեան՝ Բնախօսութեան դասատու. արժ. Ծ. Մակար վարդապետը՝ Կրօնագիտութեան. Նշանակուեցաւ տնտես Ջեմարանում պ. Թադէոս Տէր—Մանուէլեան։ Վերակացուներ հրաւիրուեցան՝ պ. պ. Սրշակ Կարապետեան, Աղաբէգ Արշակունի և Մինաս Պանջուլազեան։

Այս տարի արտասովոր և մինչև այժմ չը տեսնուած թուով խընդրամատոյցներ եղան, որոնց թիւը 100-ի հասաւ, դոյանից մեծամասնութիւնը ենթարկուեցաւ քննութեան։ Շնորհիւ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի վերոյիշեալ քննողներից մեծամասնութիւնը ընդունուեցաւ և այսօր ուրախութեամբ սրտի կարողացանք յայտնել, որ Ջեմարանի սաների թիւը այս տարի հասաւ մօտ 143-ի, որ երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի մահից յետոյ Ջեմարանում առաջին դիպուածն է։

## Պ. Լ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ ՃԱՌԸ.

### Սրբազան հարք եւ յարգելի հանդիսականներ,

Այսօր լրանում է Գէորգեան հոգեւոր ճեմարանիս բացման տասնեւեօթամեակը. ինձ յանձնուած է այդ առիթով մի քանի խօսք ասել սրբազան հարց եւ յարգելի հանդիսականների առջեւ, եւ ես կցանկայի յայտնել այստեղից հայ ժողովրդի ամենանուիրական ըղձերը եւ յոյսերը, որ նա տածում է այս հոգեւոր ճեմարանիս վերաբերմամբ. ես կցանկայի նոյնպէս շեշտել եւ այն նպատակը, որին, նուաստիս կարծիքով, հետեւում է մեր այս հոգեւոր ուսումնարանական հիմնարկութիւնը:—

Մի յունական աւանդութիւն ասում է թէ, երբ մարդիկ դեռ եւս վայրենի դրութեան մէջ՝ գոյութեան համար արիւնստ կռիւ էին մղում իրար դէմ, երբ նոցա դեռ եւս օտար էր լուսաւորութեան գաղափարը, երեւաց մի մարդասէր, անունը Պռոմեթեւս, որ՝ խղճահարուելով մարդկութեան տխուր վիճակի մասին, որոշեց փրկել մարդկութիւնը. դորա համար նա երկնքից խլեց աստուածային կրակը եւ այն հրով ներշնչեց մարդկային հոգուն սէր եւ եղբայրութիւն եւ շնորհեց մարդկութեան քաղաքակրթութեան առաջին հիմքը: Այդ աստուածային կրակը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ գեղարուեստ եւ գիտութիւն: Եւ իսկապէս, հին յունական եւ հռոմէական ազգերը, այս երկու գործոնների շնորհիւ, իրանց քաղաքակրթութիւնը հասցրին վառահեղ մեծութեան եւ իրանց լուսաւորութեան ամենաթանկագին գաղափարները աւանդեցին գալիք ազգերին:

Բայց երկար չտեւեց այդ ազգերի գոյութիւնը. Պռոմեթեւսի վառած լոյսը դարերից յետոյ հանգաւ, եւ աշխարհին կամաց կամաց սկսեց տիրել անվերծանելի խաւարը: Մարդիկ մոռացան սէր եւ եղբայրութիւն, եւ այդ դեռ բաւական չէ. եսասիրութիւնը դարձաւ մարդկային կեանքի մէջ ամենաառաջին ղեկավարը: Աշխարհը սպասում էր նոր Աստուածային վերանորոգչի:

Եւ նա եկաւ: Բայց նա եկաւ ոչ թէ Պռոմեթեւսի կարճատեւ ժամանակաւոր քարոզով, ոչ. նա աշխարհ եկաւ յա-էջեանական սէրդ

գաղափարով, եղբայրութեան քարոզով, — և խաչ բարձրանալով՝ նա անմահացրեց այդ համամարդկային սիրոյ գաղափարը։

Եւ Փրկչի առաջին աշակերտները ցրուեցին աշխարհիս չորս կողմը՝ ամեն տեղ վարդապետելով իրանց Մեծ Ուսուցչի սիրոյ և եղբայրութեան գաղափարը. ոչ մի բան չկարողացաւ խոչընդոտ լինել նոցա սուրբ քարոզին. նոցա այրում էին խարոյկի վերայ, նոցա գազանների առաջն էին ձգում, նոցա վառում էին — բայց քրիստոնէութեան լոյսը այնուամենայնիւ հրաշալի ուժով և արագութեամբ տարածւում էր ամեն տեղ . . . :

Եկան միջին դարերը և այդ լոյսը կարծես կանգ առաւ, սկսեց մինչև անգամ աղօտանալ, բայց ոչ այն պատճառով, որ քրիստոնէական լոյսին յատուկ էր աղօտանալը, այլ այն պատճառով, որ նորա տարածողները չիմացան վարուել նորա հետ. նորան դրին տաճարների մէջ, պինդ փակեցին տաճարների դռները, խզեցին իրանց կապերը ժողովրդի հետ, և Փրկչի քարոզը անմատչելի դարձաւ մարդկանց համար։ Զուր տեղը չէ, որ միջին դարերը կոչւում են խաւարի և տգիտութեան դարեր։ Բայց արդէն XV դարում սկսուեց քրիստոնէական ազգերի վերածնութիւնը. մարդկութիւնը կարծես սթափուեց քնից, և արթնանալով սարսափեց շրջապատող խաւարից։ Մարդկութեան ամենաառաջնակարգ ղեկավարները հասկացան, որ քրիստոնէական լոյսը տարածելու համար նորան պակասել են շատ բաներ. նա առաւ գիտութիւնը և գեղարուեստը՝ լուսաւորութեան, համամարդկային սիրոյ և եղբայրութեան գաղափարները ժողովրդի մէջ տարածելու համար։ Եւ լուսաւորութեան այդ երկու կարող գործոնները — գիտութիւնը և գեղարուեստը — գնալով աւելի և աւելի ընդլայնեցին իրանց ծաւալը՝ անմիջապէս խորտակելով առաջ անկած խոչընդոտները։ Եւ ուսումնարանը եղաւ, որ առաջին անգամ հիւրընկալեց նոցա իւր գրկի մէջ։

Այժմ պարզ է, թէ ի՞նչ նպատակի պիտի ծառայեն այն գիտութիւնը և գեղարուեստը, որ աւանդւում են այս հոգևոր ճեմարանիս մէջ։ Գիտութիւնը պիտի բանայ նորա մէջ կրթուող սերնդի միտքը, քրիստոնէական սիրոյ և եղբայրութեան գաղափարները լաւ ըմբռնելու համար, իսկ գեղարուեստը պիտի ազնուացնէ սա-

նիկների հոգին՝ այն գաղափարները մաքուր հոգու միջով անցկացնելու համար։ Ճեմարանը պիտի պատրաստէ լուսաւորուած, ազնուացած և քրիստոնէական սիրով տոգորուած հոգևորականութիւն և ուսուցիչներ։ Մեր ժողովուրդը — սպասում է դոցա, և, ես հաւատացած եմ, նա գրկաբաց կընդունէ այդպիսիներին։ Մեզ հարկաւոր է ոչ միայն մտաւոր, այլ և բարոյական վերածնութիւն. մեր աղգը կարօտ է հոգևոր վերանորոգութեան։

Նիւթապաշտութիւնը վերջին դարերի ընթացքում շատ և շատ է ալաւաղել մեր ժողովրդի հոգին, սորա մէջ աղօտացել է լուսաւոր և ջերմ սիրոյ զգացումը, պէտք է նորան հասկացնել, որ մարդս միայն հացով չէ կենդանի, այլ և Աստուծոյ բերանից ելնած ամեն մի խօսքով։

Ոքան է նա հասել այս նպատակին, այդ ես չգիտեմ։ Բայց ցանկանանք, Սրբազան հարք և յարգելի հանդիսականներ, և աշխատենք մենք բոլորեքեան մեր կարողութեան չափ, որ տարէց տարի առաջադիմէ այս հիմնարկութեան սուրբ գաղափարը, և մենք կարողանանք վերջապէս տեսնել մի ժամանակ մեծ թուով պատրաստուած հոգևորականներ և ուսուցիչներ՝ մարդկային սիրոյ և եղբայրութեան իդէալը ժողովրդի բոլոր խաւերի մէջ հաւասարապէս տարածելու համար։

---

Հանդէսը փակեց Տեղակալ սրբազանը հետևեալ յորդորական խօսքերով, ուղղուած Ճեմարանի ուսուցչական խմբին և նրա սաներին։

Մեր Մայր Աթոռի հոգևոր Ճեմարանի բացման տարեդարձի տօնին այս գիտութեան և լուսաւորութեան տաճարում՝ այս տասն և եօթ տարի է, որ անընդհատ նրա վարչութիւնը այսպէս հոգևոր երգերով և իմաստալից ճառերով մեզ ներկայ եղողներիս ուրախացնում է և մխիթարում։ Բայց մենք աւելի այն ժամանակը ուրախ և մխիթարուած կլինենք, երբ որ մեր Հոգևոր Ճեմարանի մէջ կտեսնենք օր աւուր ուսման յառաջադիմութիւն և ձգտումն՝ համապատասխանել այժմեան քաղաքակրթութեան պահանջներին. մենք աւելի այն ժամանակ ուրախ և մխիթարուած կլինենք, երբ

որ մեր Հոգևոր Ճեմարանի մէջը կոչեսնենք սիրոյ, խաղաղութեան և միութեան ոգին թագաւորած։ Ահա սրանք են, որ Հոգևոր Ճեմարանի գոյութիւնը կարողեն հաստատել և նրան արժանի անել իւր կոչման։ Սիրելիք, գիտեմ, անշուշտ, դեռ և սա շատերիդ որոնումն թարմ մնացած կլինի անցեալ փետրուար ամսոյ մեր Հոգևոր Ճեմարանում պատահած խռովութիւնների տխուր և դառն հետևանքը, որ մօտաւորապէս 40 ընտիր և յառաջադէմ աշակերտներ իրենց սիրելի և սրտին մօտիկ Ճեմարանը թողեցին իրենց յայտնի պատճառներով և հեռացան։ Յայտնի է թէ ինչ տխուր տպաւորութիւն թողեց այդ որտաճմլիկ դէպքը հանգուցեալ Հայրապետից սկսած մինչև վերջին միաբանի նոյնպէս և սիրելի աղգայնոց վերայ։ Բայց օրհնեալէ Աստուած, որ նրանցից մեծ մասը վերադարձաւ իրենց սիրելի Ճեմարանի գիրկը։

Սիրելի և ուսումնասէր աշակերտներ, դուք այս լուսաւորութեան տաճարից գիտութեան լոյս պիտի ստանաք, որով պիտի լուսաւորէք խաւարի մէջ ընկղմած հայ մանուկներին թէ Ռուսաստանում, թէ Հայաստանում, թէ Պարսկաստանում և թէ Տաճկաստանում։ Հայ ազգի յոյսը ձեր և ձեր նման կրթութեան ընծայուածների վերայ է և ձեզանից է իրեն ապագայ սպասում։ Վերև ասացինք, որ մեր Ճեմարանի հաստատութիւնը և գոյութիւնը պահպանողը սէրն է, խաղաղութիւնը և միութիւնը։ Այդ սիրոյ, խաղաղութեան և միութեան կապը ո՞վ պիտի պահպանի, եթէ ոչ մեր Ճեմարանի վարչութիւնը, որի ղեկը հանգուցեալ Հայրապետը յանձնել է գերապատիւ Սարգիս արքաղանին։ Մաղթենք, որ թէ իրեն և թէ իր աշխատասէր ուսուցիչներին Հոգին Սուրբ զօրաւիգ լինի և Տէր Յիսուսը օրհնի մեր Հոգևոր Ճեմարանի սաներին, ինչպէս օրհնեց երեք մանկանց։

Երեկոյեան Ճեմարանում հրավառութիւն կար։ Հիւսիսային կողմը լուսաւորուած էր բազմաթիւ գոյնզգոյն լապտերներով։ Ճեմարանի ճակատը—մուտքի կամարները զարդարուած էին թարմ ծաղիկներից և ոստերից հիւսուած պսակներով, որոց մէջ որոշ կարելի էր նկատել «Գ.» տառը։ Իսկ ճակատի վերայ փայլում էին վենդելներ, որոց մէջ աչքի էր ընկնում Ճեմարանի իւղանկար պատկերը, և զանազան ձևերի փայլուն լապտերներ։ Ամեն կողմից ծածանւում էին գոյնզգոյն դրօշակներ։ Իսկ եղեքարական արեգակը լուսաւորում էր ամբողջ տեսարանը։

Գիւղի հասարակութիւնը և հեռաւոր տեղերից եկած ուխտաւորները զբօսնում էին Ճեմարանի բակում։ Երեկոն կենդանացաւ, երբ մի կողմից Ճեմարանի երգեցիկ խումբը, միւս կողմից աշակերտներից կազմուած նոր նուագախումբը փոփոխաբար սկսեցին երգել և նուագել։ Հրախաղը, բենգալեան կրակները, վեր սլացող օդապարիկներն անդադար ներկայացնում էին նորանոր տեսարաններ։ Փոքր ինչ յետոյ համարեա ամենքը ժողովուեցան Ճեմարանի հարաւային բակը, ուր մոգական լապտերով ցոյց էին տրւում պատկերներ Քրիստոսի կեանքի էական վայրկեաններից և բնական երևոյթներից։ Ուսանողներից մէկը ասում էր պատկերների բովանդակութիւնը։ Առաջին անգամ ցոյց տրուեցաւ երջանկայիշատակ Գէորգ Դ. Ճեմարանի հիմնադրի պատկերը, որ ընդունուեցաւ բուռն ծափահարութեամբ։ աշակերտները երգեցին Ճեմարանի երգից հետևեալ կտորը։—

«Եւ ընդ ամին միշտ պանծասցի
«Ի փառաւոր յիշատակի
«Անուն սորին վեհ հիմնադրի
«Տէր Տէր Գէորգ հայրապետի»։

Ապա լապտերը ներկայացրեց Խրիմեան հայրիկի պատկերը։ Հասարակութեանը տիրեց մեծ ոգևորութիւն։ տեղացին անվերջ կեցցէներ և ծափահարութիւններ։

Յամի 10-ին Ճեմարանի ուսուցիչներն ուսանողներն և աշակերտները ժողովուեցան Ճեմարանի դահլիճը ընտանեկան երեկոյթի։ Առաջարկուեցան Սրբազան Տեղակալի, Սրբ. Տեսչի, Ճեմարանի յա-

բաուեւութեան, ուսուցիչների եւ աշակերտների կենացները, որոնք բուռն ծափահարութեամբ եւ կեցցէներով ընդունուեցան։ Իւրաքանչիւր անգամ խումբը նուագում էր այլ եւ այլ ազգային երգեր։ Երրորդ լսարանի ուսանող Քիւրքչեանը կարդաց իւր շարադրութիւնը—«Դիտութեան ազդեցութիւնը բարոյականութեան վերայ» վերնագրով։ Կարդացուեցան մի քանի յարմար ոտանաւորներ մեր յայտնի բանաստեղծներից։ Ժամի 12-ին Սրբ. Տեսուչը փակեց հանդէսը օրհնելով եւ քաջալերելով աշակերտներին։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

### ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

—

2. Հոկտեմբ. Սինոդի պ. պրոկուրորը բացակայելով Թիֆլիս՝ նրա պաշտօնը մայիսի 31-ի օրագրով յանձնուած էր Սինոդի Ատենադպիր պ. Սիմէոն Փիլիպոսեանցին, իսկ վերջինիս պաշտօնը յանձնուած էր Կառավարչական մասի գործավար պ. Գաբ. Սմբատեանցին, որը վարելու էր նաեւ իւր պաշտօնը։ Այժմ պ. պրոկուրորը վերադարձած լինելով իւր արձակուրդից, իւրաքանչիւրը յիշեալ պաշտօնեաներից ստանձնում են իրենց բուն պաշտօնները։

—

4. Հոկտ. Մուղնի գիւղի այս տարուայ վարձկալը՝ պ. Ստեփանոս Համազասպեան հասուցած լինելով Մայր Աթոռի շտեմարանին տարեկան կապալագինը՝ քսան երկու խալուար ցորեն, յետ ստացաւ իւր գրաւականը՝ հարիւր տասն ռուբլի։

—

4. Հոկտ. Յանձնուեց Գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցին քահանայ ձեռնադրել իւր որդեգիր դպիր Կարապետ Տէր-Յակոբեանցին Գողթն գաւառի Ազա գիւղի վրայ։ Այս դպիրը ծնուած է 1864 թ. նոյն Ազա գիւղում եւ սովորել է նոյն Գրիգոր Սրբազանի մօտ՝ Պատմութիւն Ս. Գրոց, Հայոց եւ Ռուսաց լեզու, Ընդ. Աշխարհագրութիւն, Հայոց եւ Բնական պատմութիւն, Թուաբանութիւն, Ձայնագրութիւն եւ գեղագրութիւն։

—

4· Հոկ· Վլադիկաւկասի Մինաս քահանայ Միրանեանցը Սինոդի 26 յուլիսի օրագրով ենթարկուած էր երկամեայ՝ ապաշխարութեան եկեղեցու դրան առաջ։ Այժմ Աստրախանի կոնսիստորիայից ստանալով վլադիկաւկասի ժողովրդականների ազերսագիրը՝ որի մէջ յիշւում են նաև յիշեալ քահանայի յօգուտ եկեղեցու և ուսումնարանների արած աշխատութիւնները և զիջանելով ժողովրդի խնդրին մեղմացրուեց նրա պատիժը՝ ազատելով նրան բոլորովին ապաշխարութիւնից և ենթարկելով միմիայն 20 ռուբլի տուգանքի յօգուտ Աստրախանի թեմի հոգևորականների որբերի և այրիների գանձանակին։

—

8 Հոկտ· Մայր Աթոռի փաստաբան պ· Ռուբէն Հասան Չալալեանցին տրուեց 250 ռուբլի ճանապարհածախս՝ որ պարոնը ներկայ լինի Նախիջևանի գաւառի կալուածական վէճերի քննութիւններին հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում։ Կարմիր վանքի կալուածների գործի քննութիւնը նշանակուած է հոկտեմբերի 14-ին՝ Թազաքեանդինը 2-ին՝ փորադաշտինը—նոյեմբերի 8-ին՝ Ռամիսի տուրբ Սարգսինը—13-ին և Բիստ գիւղինը 25-ին։ Ընդամենը 5 գործ և իւրաքանչիւր գործի համար 50 ռուբլի ճանապարհածախս՝ պ· Հասան Չալալեանցի հետ ունեցած պայմանի (20 մարտ՝ 1889 թ·) 4-դ յօդուածի համաձայն։ Պ· փաստաբանը իւրաքանչիւր գործի քննութեան հետևանքի մասին առանձին առանձին յայտնելու է Սինոդին ի գիտութիւն։

—

9 Հոկտ· Ալէքսանդրապոլի վիճակային փոխանորդ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանցին միամսեայ արձակուրդ է տրւում Թիֆլիս գնալու բժշկութեան համար։

—

9 Հոկտեմ· Պատուիրուեց Նուխուայ փոխանորդ բարեշնորհ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանցին՝ փոխադրել Մելքիսեդեկ քահանայ Յովսէփեանցին Զորլու գիւղից Նուխի քաղաքը՝ ս· Մինաս եկեղեցին՝ իսկ Զորլու և Միրզաբէկլու գիւղերում կարգել ուրիշ քահանայ։ Տէր-Մելքիսեդեկ քահանան չէր կարողանում տանել

Ջորլու և Մերզաբէկլու գիւղերի օգն ու ջուրը, ս. Մինաս եկեղեցու ժողովուրդը ցանկութիւն էր յայտնել նրան քահանայ ունենալու և վերջապէս ս. Մինասի ծխականները լինելով 450 տուն, մի քահանայով դժուարանում էին կառավարուել։

—

9 Հոկտեմ. Տիտուվեարնի սովետնիկ Խաչատուր Տէր-Խաչատրեան ընդունուեց դիւանական աստիճանաւոր, Երևանի կոնսիստորիայում առանց ռոճկի ծառայելու պայմանով։

—

9 Հոկտ. Իւր խնդրի համաձայն բարեշն. Գէորգ աբեղայ Ռշտունին տրձակուում է տնտեսութեան պաշտօնից և կարգուում է վերակացու Հայատան Մայր Աթոռոյս։ Տնտեսութիւնը յանձնուում է բարեշնորհ Ներսէս Աբեղային, իսկ մառանապետութիւնը բարեշնորհ Յովհաննէս վարդապետ դպիր Վարդանեանին։

—

9 Հոկտմ. Հրամայւում է Վանական կառավարութեան օրինաւոր ամրդաիսօսութեամբ վարձով տալ Վաղարշապատի շուկայից դուրսը գտնուած հացագործութեան երկու կրպակները, որոնց վարձկալութեան ժամանակը լրանում է առաջիկայ 1892-թ. յունուարի 20-ին։

—

11 Հոկտմ. Պատուիրւում է Թիֆլիզի կոնսիստորիային թոյլ տալ Ախալցխայի Ղազարոս քահ. Պահլաւունուն գնալ Սպահան ուսուցչութեան պաշտօնով միամեայ ժամանակով։ Քահանայի ժողովրդի հովութիւնը յանձնել մի ուրիշին։ Ղազարոս քահանան հրաւիրուած է Պարսկաստանի գեր. Եսայի Սրբազան Առաջնորդից։

—

11 Հոկտմ. Տաթևու յաջորդութեան Ղարաքիլիսայ գիւղի քահանայորդի Խաչատուր Տէր Սիմէոնեանցի քահանայութեան գործը դադարեցնում է այս քահանայացուի մահուան պատճառով։

—

11 Հոկտմ. Ղարաբաղի խանապատ գիւղի Միքայէլ քահ. Բաղալեանցը դիմել է խնդրագրով Սինոդին, գանգատուելով իւր

ժողովրդի աղքատութեան, քահանայական հասոյթների նուազութեան և գերդաստանի բազմաթիւ անդամներին սնուցանելու ու կրթելու դժուարութեան վրայ և խնդրում է տեղափոխել իրեն Անդրկասպեան երկիրը՝ Մերվ քաղաքը։ Ս. Սինոդը մերժեց նրա խնդիրքը, յիշեցնելով որ իւրաքանչիւր քահանայ պարտական է մնալ իւր ժողովրդեան մէջ։

—

11 Հոկտ. Նախիջևանի (Հին) յաջորդ բարեշնորհ Գրիգորիս վարդապետից յետս պահանջուեց 158 ռուբլի գումարը, որ գոյացած էր Ելիսաւետապօլու թեմի Աւագ Ս. Նշան և Պանդալևոն Բժիշկ ուխտատեղիների արդիւնքից և տրուեց Գետաշէնու դըպրոցին։ Այլ և աղդարարուեց ի զգուշութիւն յիշեալ վարդապետին, որ իւր պատճառաբանութիւնները անտեղի էին և Ելիսաւետապօլու Հոգևոր Կառավարութեանը գրած թղթերի ոճը՝ անվայել։

—

11 Հոկտ. Սարգիս քահանայ Օրբէլեանցը զրկուում է հոգևորական բոլոր աստիճաններից և յանձնուում է մարմնաւոր իշխանութեան, Սիբիր աքսորուելու համար։ Յիշեալ քահանան դատուել է և դատապարտուել Թիֆլիսի նահանգական դատարանում օրինաց 556 յօդուածով նախատեսուած յանցանքի համար։

—

14 Հոկտ. Երևանի Կոնսիստորիային հրամայուում է յանդիմանել Տէր-Գէորգ քահանայ Թալիանոսեանցին և Տէր-Ստեփաննոս քահ. Տէր-Գրիգորեանցին, որոնց անզգուշութիւնից առաջացել է այն, որ Այնալու գիւղի բնակիչ Յովհաննէս Շահգեալդեանին տրուել է երկու վկայագիր, մինը մեարիքական վկայական, միւսը ֆաղ-աֆ։ Երկու վկայագրերը գիւղին հակասում են միմեանց։ Մէկի վկայութեամբ Յովհաննէս Շահգեալդեանցը ծնուած է 1868-ին, միւսի վկայութեամբ՝ 1870-ին։ Էջմիածնի գաւառի զինուորական Ատենում նկատուելով այս հակասութիւնը՝ հաղորդուեց Սինոդին, և քննութիւնից երևեց, որ 1870 թուի տումարում գրուած սխալ տեղեկութեան հեղինակ քահանան վախճանուած է։

—

14 Հոկտ. Թիֆլիսի Կոնսիստորիայի առաջարկութեան համաձայն Իգդիրցի Արշակ Մինասեանցը ուսումնաւարտ Ներսիսեան դպրոցի և ուսուցիչ, ազատուում է հարկատուութիւնից և մոնում է հոգևորականների կարգը, իբրև սպասաւոր Ախալքալաք քաղաքի եկեղեցու։

—

14 Հոկտ. Վլադիկաւկասի նահանգական դատարանի պրոկուրօրն սեպտ. 11-ին, ընդ համարաւ 6025 ուղարկել է Ս. Սինոդը մի գրութիւն, որը պարունակում է Ղզլարցի 2-դ կարգի վաճառական հանգուցեալ Աւագ Թորոսեան Ֆիլեանցի կտակի քաղուածքը։ Հանգուցեալի կտակակատարն է Մկրտիչ Մուլթանեանց Ղզլարցին։ Քաղուածքից երևում է, որ հանգուցեալը կտակել է ա) 1000 ռուբլի Ղզլարի Հայոց դպրոցին, բ) 1000 ռ. Ղզլարի Բարեգործական Ընկերութեան, գ) 2000 ռ. Գէորգեան ճեմարանին, դ) 300 Ղզլարի քահանաներին, ե) 150 ռ. իւր ծխատէր քահանային՝ Տէր-Սահակ Պողոսեանին, զ) 300 ռ. Ղզլարի Հայոց գերեզմանատան եկեղեցու նորոգութեան համար, է) 250 ռ. Էջմիածնի միաբանութեանը, ը) 250 ռ. Ղզլարի ս. Գէորգ վանքին, թ) 500 ռ. Բագուայ Մարգասիրական Ընկերութեանը, ժ) 1500 ռ. իւր թաղման և գերեզմանի արձանի համար։ Հրամայուեց Աստրախանի Կոնսիստորիային ստանալ կտակակատարից Մայր Աթոռին հատանելիքը և հոկել կտակի կատարմանը։

—

16 Հոկտմ։ Ս. Սինոդում ստացուեց Տեղական Սրբազանի առաջադրութիւնը (15 Հոկտմ։ թ. 31), որի մէջ ասում է. «Կովկասի քաղաքական մասի պ. Կառավարչապետը իւր գրութեամբ (10 Հոկտմ։ թ. 516) ծանուցանում է ինձ, որ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍՐԸ ներքին գործոց Նախարարի ամենահպատակօրէն զեկուցման համաձայն, անցեալ սեպտեմբերի 19-ին ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ բարեհաճել է հաստատել՝ Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակի նախկին Առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսին, Ելիսաւետպոլի Ցաջորդ Գրիգորիս Աղուանեանց եպիսկոպոսին և Ս. Գայանէի վանքի վանահայր Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանին Ս. Էջմիածնի Սինոդի անդամութեան պաշտօնում։ Այս ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կարգադրութիւնը ծա-

նուցանելով Սինոդիդ առաջադրում եմ անել պատշաճական տնօրինութիւն գերապատիւ եպիսկոպոսներին և բարեշնորհ վարդապետին իրենց պաշտօնները վարելու հրաւիրելու համար։ Այլ և յայտնում եմ ի գիտութիւն, որ հեռագրել եմ արդէն Սրբազան Գրիգորիս եպիսկոպոսին յանձնել բոլոր յաջորդական գործերը Ելիսաւետոպոլու Հոգևոր Կառավարութեանը և վուԹալ Էջմիածին»։ Սինոդը սահմանեց՝ Էջմիածնում ներկայ եղող գեր՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին և բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետին հրաւիրել սահմանած կարգով հաւատարիմ ծառայութիւն երդուելու իրենց նոր պաշտօնում ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, իսկ Գրիգորիս սրբազանին երդման հրաւիրել, երբ նա կը ժամանէ Էջմիածին։

—

18 Հոկտ։ Որովհետև ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կարգադրութեամբ Սինոդի Անդամ և Մայր Աթոռիս գանձապահ Ներսէս եպիսկոպոսը արձակուելով իւր պաշտօններից աքսորւում է Ռուսաստան, նրա տեղը գանձապահ կարգուեց Անդամ Սինոդի՝ բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետը, որին պատուիրուեց օրինաւոր ցուցակով՝ Տէր Տեղակալի և Անդամների ներկայութեամբ, ընդունել բոլոր հաշիւները, գանձարանի մուտքն ու ծախսը գրել միշտ ժապաւինեալ տոմարներում Սինոդի գրաւոր հրամանների համաձայն, բնաւ երբէք չը տալով դրամ որ և է մէկին առանց Սինոդի թոյլտուութեան։

—

24 Հոկտ։ Պատուիրուեց Երևանի կոնսիստորիային «կատարողական թերթով» ծախել չը տալ Ղարսեցի պ։ Հ։ Ռաշմաջեանցի տները, այլ պահանջել նրանից որ օրէնսդրական կարգով գրաւ դնելով իւր կալուածքները՝ խոստանայ չորս տարուայ ընթացքում վճարել իւր 1600 ռ։ պարտքը Կարսի ս։ Աստուածածին եկեղեցուն, իսկ եթէ պ։ Ռաշմաջեանցը չը համաձայնի, այն ժամանակ կատարողական թերթով արգելք դնել նրա տների վարձի վրայ մինչև եկեղեցու պահանջի լրումը։

—

24 Հոկտ։ Թոյլ տրուեց Թիֆլիսի թեմի խանդօ գիւղի բնակիչ՝

Դշխուհի Նուրջանեանցի և Զաքարիայ Շիրինեանցի պսակը, նախապէս ենթարկելով նրանց երեք ամիս ապաշխարանաց եկեղեցու դրանը, ապօրինի կենակցութեան համար։

—

25 Հոկտ. Բջնի գիւղի վարձկալը պ. կապիտան Ալեքսանդր Մելիք Աղամալեանը յանձնած լինելով վանական կառավարութեան անգամ Ներսէս վարդապետին այդ գիւղի տարեկան վարձը՝ հարիւր քառասուն խալուար ցորեն, հրամայուեց գանձապահին յետ տալ նրա գրականը։

—

25 Հոկտ. Մողնու ս. Գէորգ վանքի վանահայր և Ապարանի գործակալ Ղուկաս աբեղայ Եղիազարեանցը լինելով քննութեան տակ, նրա փոխանակ վանահայր և գործակալ կարգուեց Աշոտ աբեղայ Շախիեանցը։

—

26 Հոկտմ. Ագուլեաց Ս. Թովմայի վանքի կալուածքները խլելու համար Ցնակերտցիների յարուցած վէճը քննելով Ս. Սինոդը հրամայեց. պահպանել այդ վանքի բոլոր կալուածքները, բացի Ցնակերտ գիւղի շինամիջում գտնուած «աւերակ» կոչուած հողից, որն և Ագուլեցիների հաճութեամբ ընծայել Ցնակերտի եկեղեցուն, այն պայմանով որ Ցնակերտցիք հրաժարուեն վիճողական դատավարութիւնից և երկու տարուայ ընթացքում այդ գետնի վերայ դպրոց շինեն։ Հրամայուեց Ս. Թովմայի վանքի բոլոր վարելահողերը վարձով տալ օրինաւոր հրապարակական աճուրդասօսուվ թեամբ։

—

30 Հոկտմ. Ս. Սինոդը վաւերացրեց Ս. Գայիանէի վանքի վանահօր և Պղատոն ու Գրիգոր Մելքոնեանների պայմանագրութիւնը, որով վանքի այգին տրուում է վարձով իններ տարով։

—

30 Հոկտմ. Ղարաբաղի Տող գիւղի քահանայացուի Աղեքսանդր Տէր Բարսեղեանցի գործը դադարեցուում է նրա մահուան պատճառով։

—

30 Հոկտմ։ Մայր Աթոռիս Միաբանութիւնը կարեկցելով Ռուսաստանի սովեալների դառն վիճակին, կարևոր համարեց վանքի արդիւնքներից օգնութիւն ուղարկել նրանց 1000 րուբլի, որն և Սրբազան Տեղակալը առանձին գրութեամբ ուղարկեց Երևանի պ. Նահանգապետին խնդրելով հասուցանել ուր հարկն է։

—

30 Հոկտմ։ Հրամայուեց գանձապահին տալ տասն հազար րուբլի Վանական Կառավարութեանը Վանքի, Ճեմարանի և Տպարանի հոկտեմբեր ամսուայ ծախքերի համար։ Անցեալ ինն ամիսների ընթացքում Վանական Կառավարութիւնն ստացել է գանձարանից եօթանասուն և ութ հազար րուբլի, որ այս տասն հազարի հետ անում է ընդամենը ութսուն և ութ հազար րուբլի։

—

30 Հոկտմ։ Տպարանական ժողովը յայտնում է Սինոդին թէ ուղարկել է 1892 թուականի համար չափաբերական, խոստովանութեան և երիցիոխանական տումարներ եկեղեցիներին, Երևանի թեմը 1326 օրինակ, Տփխիսի թեմը 871 օրինակ, Բեսարաբեայի թեմը 115 օրինակ, Աստարխանինը 114 օրինակ, Ղարաբաղին՝ 603 օրինակ, Շամախունը՝ 117 օրինակ, ընդամէնը 3146 օրինակ, որոնց գները կոնսիստորիաները ուղարկելու են Սինոդ։

—

1 Նոյեմ։ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցը ժամանելով Էջմիածին, հրաւիրուեց Սինոդի Ատեան, երդում ընդունելու և իւր նոր պաշտօնը՝ Սինոդի անդամութիւնը՝ վարելու համար։

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՊԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ

*Այսօր ի մեծափառ աւուր անուանակոչութեան Նորին Կայսերական Մեծութեան* ԹԱԳՈՒՈՐ ԿԱՅՍԵՐ *Միաբանութիւն Էջմիածնի յետ Ս. պատարագի ի ծունկս անկեալ կատարելով զհանդէս տօնին ի վեր ընծայեաց Տեառն Ամենակալն զջերմ աղօթս վասն երկարութեան կենաց* ԹԱԳՈՒՈՐ ԿԱՅՍԵՐ *և բարեբաստիկ աւուրց տանն Ռըքայական ի ցնծութիւն հաւատարիմ հպատակացն համայնից։ Յարգանօք խնդրեմ ի Բարձր Գերագանցութենէ Ձերմէ զայս զգացումն հաւատարմագոյն հպատակութեան Հոգևորականաց Հայոց սիրել զԳահոյիւք* ԹԱԳՈՒՈՐ ԿԱՅՍԵՐ։

---

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ՏԵՂԱԿԱԼԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻ ԷՋՄԻԱԾՆԻ։

*Պ. Նախարարն Ներքին գործոց ծանուցանէ Կառավարչապետին, թէ* ԹԱԳՈՒՈՐ ԿԱՅՍԸՆ *ըստ ամենահպատակ զեկուցման հեռագրի՝ որով արտայայտին զգացմունք Հոգևորականութեան Հայոց Էջմիածնի պատճառաւ մեծափառ աւուր անուանակոչութեան Նորին Մեծութեան, Ամենողորմածագոյն հաճեցաւ հրամայել շնորհակալ լինել յիշեալ Հոգևորականութեան։*

**ԶԱՐԲԱՐԱԳՈՅՆ զայս կամ պատիւ ունեմ ծանուցանել Ձերդ Բարձր Սրբազնութեան յաղագս յայտնելոյ ում անկ է։**

**Ի պատճառս բացակայութեան Կառավարչապետի՝**

Օգնական նորա, Գեներալ-Լէյտենանտ ԿՈՄՍ ՏԱՏԻՇԶԵԻ։

**Ի տեղի վերատեսչի Դիւանատան՝**

Փոխ-Վերատեսուչ՝ Յ. ՄԻՅԿԵԻԻԶ։

---

Վարչութիւնը Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ճշմարիտ պարտականութիւն է համարում ինքեան յայտնել շնորհակալութիւն բարձրապատիւ Վահան վարդապետի յաջորդին Նուիրոյ և պարոնայցն Բէդէլեանի, Գէլէ Շահինեանի, Խոշաֆեանի, Մատաթեանի, Մէլիք Թանգեանի, Տէր-Մկրտչեանի, Ազաջանեանցի, Տէր-Մինասեանի, Կարապետ Կոստանեանի և բարեկրօն Մելեանց քահանայի, որոնք բարեհաճած էին Ճեմարանիս 17-րդ տարեգարձի առթիւ ուղարկել շնորհաւորական հեռագիրներ։

---

## Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր։

Եկեղեցոյ բերան բնաբանում տպուած է հետևեալ սխալը։ առաջորդ տպուած է—«նա» և «արգելեալ» բառի տեղ—«կալեալ»։

# ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԸՍՏ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

---

ԴԱՍԱՒՈՐԵԱԼ ԵՒ ԲԱՑԱՏՐԵԱԼ

Ի ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԷ ՄԿՐԵԱՆ

Երկրորդ Տպագրութիւն, սրբագրեալ և յաւելեալ

---

*Կ. Պոլիս Տպագրութիւն Յ. Պաղտասարեան*

1891

---

*Այս պատուական Աղօթագիրքը կը պարունակէ մեր Եկեղեցւոյ բոլոր ժամերգութիւններն.*

*Նախ՝ ԿԻՐԱԿԻ օրերու կարգը մինչև Ս. ՊԱՏԱՐԱԳԻ խորհուրդը. և ապա ԼՈՒՐ օրերու, ԱՐԵՒԱԳԱԼԻ, ՀԱՇՈՒ, ԽԱՉԱԿԱՆԻ և ՀԱՆԳԻՍՏԵԱՆ (եկեղեցի) ժամերգութիւններն ամբողջ, իւրաքանչիւրոց մէջ գտնուած Քարոզներուն և Աղօթքներուն աշխարհաբար թարգմանութիւններովն, և Ս. Պատարագի խորհրդոյն բացատրութիւններովն, և այլ և այլ ճոխ ծանօթութիւններով։*

*Գրքին սկիզբը դրուած է խիստ կարևոր Յառաջաբան մը՝ յորում Հրապարակական և Առանձնական Աղօթից վրայ պիտանի տեղեկութիւններ տալով, մեր Երանելի Նախահարց պատրաստած սքանչելի Աղօթքներէն դուրս, օտար Աղօթագրքեր գործածելու անպատշաճութիւնն կը ցուցնէ, և կը յորդորէ վարժուիլ, ընտելանալ մեր Ազգային եկեղեցւոյ Կարգադրութեանց և Աւանդութեանց, որպէս նաև Ազգային Գրական լեզուին, և սիրել զանոնք իբրև անդին յիշատակներ մեր անմոռանալի Նախնեաց, որ Քրիստոնէական կրօնքը այնքան սրբութեամբ մեզ աւանդեցին։*

*Այն ԱՂՕԹԱԳԻՐՔՆ ահա այսչափ ճոխութեամբ պատրաստուած, մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ որդիք պիտի կարենան գործածել, թէ Եկեղեցւոյ մէջ իբրև ժամագիրք, և թէ*

տուներու և ճամբորդութեանց մէջ իբրև Աղօթագիրք, ուստի և ամենուն քով գտնուելու արժանի։

Այս Երկրորդ Տպագրութիւնն ևս՝ յատուկ խնամով եղած է՝ ընտիր թղթի վրայ՝ նրբաքանդակ պատկերներով զարդարեալ, և կը բաղկանայ 850 երեսներէ (իբր 200 երես աւելի քան զառաջին տպագրութիւնն) գեղեցիկ և վայելուչ կազմով, առանց գնոյ յաւելման։

| | | | |
|---|---|---|---|
| Պարզ Լաթակազմ | . . . | 15 | դրշ· |
| Ոսկեզօծ » | . . . | 22 | » |
| Ոսկեզօծ Կաշեկազմ | . . . | 30 | » |

Կը գտնուի ամեն Հայ Դրավաճառաց քով· իսկ կեդրոնատեղին է Զարդարեան Դրատունն, Կ· Պոլիս, Ալաճա - Համամ թիւ 12 և Բերա Ս· Երրորդութիւն Եկեղեցւոյ Բանկալը։

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

| | | |
|---|---|---|
| Հանդէս Դ. տարեդարձի Գէորգեան Ճեմարանի . . | — | 10 |
| Հնութիւնք Հայրենեաց . . . . . | — | 20 |
| Հռովմէական եկեղեցի . . . . . | — | 80 |
| Հանդէս լացման Ճեմարանի . . . . . | — | 10 |
| Հրահանգ քերականութեան . . . . . | — | 25 |
| Հրահանգ աւագ քահանայից . . . . . | — | 10 |
| Հրահանգ վասն թեմական տեսչաց . . . . | — | 10 |
| Ձայն բաղմաց . . . . . | — | 50 |
| Ձայնագրեալ երգեցողութիւնք Ժամագրոց . . . | 4 | — |
| Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի . . | 2 | — |
| Ձայնագրեալ շարական . . . . . | 30 | |
| Ճանապարհորդութիւն Հակստհաուզէնի . . . | — | 80 |
| Ճաշոց . . . . . | 60 | — |
| Մաղթանք վասն Հայրապետի ազգիս . . . . | — | 20 |
| Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան . | 4 | — |
| Ցաւելուած Ժամագրոց ձայնագրեալ . . . . | — | 20 |
| Նախակրթանք. Բ. մասն . . . . . | — | 20 |
| Նոյն Գ. մասն . . . . . | — | 20 |
| Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն - . . | 1 | |
| Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ . | — | 20 |
| Պատմութիւն Խաչակրաց . . . . . | — | 20 |
| Պատմութիւն Հայոց Եգիպտոսի . . . . | — | 20 |
| Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ . . . | — | 20 |
| Պատմութիւն Սեւանայ . . . . . | — | 20 |
| * Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ . | 2 | — |
| Պատկերասէր պատկերատեաց - . . . . - | 1 | — |
| Ջամբռ (պատմագրութիւն Սիմէոն Կաթուղիկոսի) . . | — | 50 |
| Սաղմոս Դաւթի . . . . . - | — | 50 |
| Սկզբունք բուսաբանութեան . . . . . | — | 15 |
| Վաղարշապատ . . . . . | — | 20 |
| Տեղեկագիր Ճեմարանի 1881—82. . . . . | — | 10 |
| Նոյն 1882—83 . . . . . | — | 10 |
| Փնար Մշեցւոց և Վանեցւոց . . . . . | — | 20 |
| Օրացոյց (1891) . . . . . | — | 20 |
| Օրէնք վայելուչ կենցաղավարութեան . . . | — | 40 |

(*) Աստղանիշ գրեանքն սպառուած են։

20 բուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղջուն կը լինի 20°/₀ին ճանապարհածախքը գնողի վերայ)։

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՆԿԱՐՆԵՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՏ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ.

ԳԻՆՆ Է 12 ՌՈՒԲԼԻ.

Սոյն նկարները պատրաստուած են միջակ մեծութեամբ, մաքուր եւ նուրբ, որը, ս. Էջմիածնի Ուսումնարանական-Վարչական Յանձնաժողովից պաշտօնապէս ընդունուած է ամեն հայ ծխական ուսումնարանների համար, ի դիւրութիւն կրօնուսուցչաց:

Յանկացողները կարող են ստանալ դիմելով Էջմիածնայ Տպարանական Ժողովին եւ կամ ուղղակի կազմողիս:

Ուսումնարանները վճարում են միանակ 12 ռուբլու 10 ռուբլի, ճանապարհածախսը ինձ վերայ թողնելով:

Հասցէն՝

Վաղարշապատ՝ Լուսանկար Մ. ՝ ՓԱՓԱԶԵԱՆՑ.